

**ՄԵՂՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԱՐԱՐԱՏԻ**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՇՈՐ ԵՎ  
ՇԱՐ ԱԳՐԳՈՎԱՃՈՒ ԹՅԱՄԲ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ**

ԺԲ.00.03 – «Մասնավոր իրավունք. քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտականաստիճանի համար

Իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր **Վ.Դ. Ավետիսյան**

ԵՐԵՎԱՆ 2016

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՅՈՒ ԹՅՈՒՆ .....3

## ԳԼՈՒԽԻ.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ.....16**

§1. Խոշոր գործարքների հասկացող թյ ու նն ու հատկանիշ ներք..... 16

§2. Խոշոր գործարքներ կնքել ու մասին որոշող մեների կայացման կարգը ..... 36

## ԳԼՈՒԽԻԻ.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ՇԱՐՎԱԳՐԳՈՎԱՅՈՒ ԹՅԱՐԲ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ .....71**

§1. Շահագրգռված ու թյ ամբ գործարքների հասկացող թյ ու նն ու առանձնահատկ ու թյ ու ններք ..... 71

§2. Շահագրգռված ու թյ ամբ գործարքների կնքման մասին որոշող մեների կայացման կարգը ..... 104

## ԳԼՈՒԽԻԻԻ.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ԽՈՇՈՐ ԵՎ ՇԱՐՎԱԳՐԳՈՎԱՅՈՒ ԹՅԱՐԲ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆԿԱԿԵՐՈՒ ԹՅՈՒՆԸ.....124**

§1. Խոշոր և շահագրգռված ու թյ ամբ գործարքների վիճարկման կարգն ու առանձնահատկ ու թյ ու ններք ..... 124

§2. Խոշոր և շահագրգռված ու թյ ամբ գործարքների անվավեր ու թյ ան վերաբերյալ հայցապահանջ ներկայացնել ու իրավ ու նքի ս ու բյ եկ տն ների ու այ դ իրավ ու նքի իրականացման ժամկետների առանձնահատկ ու թյ ու ններք ..... 151

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ .....164

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒ ԹԵՐԻ ՑԱՆԿ .....170**

## ՆԵՐԱՆՈՒ ԹՅՈՒՆ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Տնտեսական շրջանառության մեջ գործարքի ինստիտուտը խիստ կարևոր է, քանի որ այն իրավաբանական անձնաց, նրանց և քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտների համագործակցության հիմնական միջոցն է. վերջինիս վերաբերյալ իրավակարգավորումների պատշաճ մակարդակը ոչ միայն տնտեսական ընկերությունների, այլ նաև ընդհանրապես քաղաքացիական շրջանառության ու երկրի տնտեսության կայուն զարգացման կարևորագույն գրավականներից է:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո հասարակական գիտակցության մեջ բազմաթիվ արժեքների վերաիմաստավորման և փոփոխման հետևանքով առաջացավ տնտեսական նոր հարաբերությունների ն համարժեք իրավական կարգավորումն անհրաժեշտություն, ուստի երկրում իրականացված դատաիրավական բարեփոխումների առաջին փուլում Հայաստանի Հանրապետության 1998 թ. քաղաքացիական օրենսգրքի<sup>1</sup> և դրա հիման վրա ընդունված մի շարք այլ իրավական ակտերով ի ընդունմամբ իրավական համակարգում ներդրվեցին քաղաքացիաիրավական բազմաթիվ նոր հասկացություններ, իրավական կառուցակարգեր և ինստիտուտներ, որոնց շարքում ուրույն տեղ զբաղեցրին տնտեսական ընկերությունների և դրանց մասնակիցների հարաբերությունները կանոնակարգող կորպորատիվ-իրավական ինստիտուտները:

Տնտեսական ընկերությունների կարգավիճակի իրավական ամրագրումը ՀՀ-ում բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ մեծ թվով ընկերությունների ձևավորման խթան հանդիսացավ: Վերջիններս տարբեր խումբ սուբյեկտների՝ ընկերության, նրա մասնակիցների, ղեկավար մարմինների, պարտատերերի և այլոց շահերի բախման ոլորտ է: Նշված սուբյեկտների շահերը հավասարակշռելու, ընկերության գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումն

<sup>1</sup> Ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

ապահովելու, ընկերության պարտատերերի իրավունքների պաշտպանության գործունեության խիթիքներ ստեղծելու և տնտեսական ընկերության մասնակցության հարաբերությունների կայունությունն ապահովելու նպատակով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում<sup>1</sup> և «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքում<sup>2</sup> նախատեսված են խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու վերաբերյալ հատուկ նորմեր, որոնք առավել ապեսուղղված են ընկերության գործադիր մարմինի կողմից ընկերությունից խոշոր ակտիվներ դուրսհանելու ու «փոշիացնելու» քայլերը խոչընդոտելուն, ինչպես նաև սահմանված կարգի խախտմամբ կնքված գործարքների վիճարկման և մինչև նման գործարքի կնքումը եղած դրություները վերականգնելու համար անհրաժեշտ գործունե կառուցակարգեր սահմանելուն:

Խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների ինստիտուտի հիմքում օրենսդիրը դրել է շուկայական առաջադեմ տնտեսություն ունեցող երկրներում ժամանակի փորձություն անցած այն հիմնարար գաղափարը, որ քննարկվող գործարքների հատկանիշներ ունեցող իրավաբանական գործողությունները կարող են կատարվել առավել ապեսուղորարացիայի մասնակիցների ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշմամբ՝ այդ կերպ ապահովելով այդպիսի գործարքի կնքման հարցում միասնական կամքի ձևավորումը: Ինչպես ցույց են տալիս զարգացած երկրների փորձը և ՀՀ գործող կորպորատիվ օրենսդրության կիրառման պրակտիկան, խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների կնքմանն ուղղված կամք ձևավորելու լիարժեք ու հավասարակշռված կառուցակարգերի, նշված գործարքների կնքման կարգը խախտելու հետևանքների, այն խախտած անձանց պատասխանատվության արդյունավետ մեխանիզմների վերաբերյալ իրավակարգավորումների ոչ պատշաճ մակարդակն ու

<sup>1</sup> Ընդունվել է 25.09.2001 թ., ու ժի մեջ է մտել 06.12.2001 թ., տե՛ս ՀՀՊՏ 2001.11.06/34(166), Հոդ.831:

<sup>2</sup> Ընդունվել է 24.10.2001 թ., ու ժի մեջ է մտել 07.12.2001 թ., տե՛ս ՀՀՊՏ 2001.12.07/38(170), Հոդ. 910:

հատկապես դրանց բացակայ ու թյուր կարող են հանգեցնել ոչ միայն այդպիսի գործարքների հետագա վիճարկման, այլ նաև պարարտ հող ստեղծել կորպորատիվ կոնֆլիկտների առաջացման, ընկերությունից ակտիվների հանցավոր դուրսբերման, կեղծ կամ կանխամտածված սնակություն, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց «ոչ ընկերական կլանման» և նմանատիպ այլ ոչ իրավաչափ արարքների կատարման համար: Այս բացասական երևույթները խաթարում են երկրի տնտեսական դրությունը, հասարակության մեջ ստեղծում անվստահության մթնոլորտ, նվազեցնում բիզնեսում ներդրումներ կատարելու գրավչությունը:

Անկասկած, խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների վերաբերյալ դրույթների մանրակրկիտ մշակվածությունը և դրանց հետևողական կիրառումը հույժ կարևոր են ինչպես ամեն առանձին վերցրած տնտեսական ընկերության, այնպես էլ բոլոր տնտեսվարող սուբյեկտների ու երկրի տնտեսական անվտանգության ապահովման գործում: Նշվածը վկայում է այն մասին, որ խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների ինստիտուտների խորը և բազմակողմանի հետազոտությունը՝ հիմնված թեմային վերաբերող տեսական, նորմատիվ աղբյուրների և էմպիրիկ նյութի համակարգային վերլուծության, ինչպես նաև օտարերկրյա լավագույն փորձի ամփոփման վրա, թույլ կտա վեր հանել տեսության մեջ և պրակտիկայում առկա բազմաթիվ վիճահարույց հարցերն ու գործնական խնդիրները, որոնց լուծումը կորպորատիվ հարաբերությունների և տնտեսական ընկերությունների կողմից կնքվող գործարքներից բխող հարաբերությունների իրավական կարգավորումը կատարելագործելու առումով չափազանց կարևոր նշանակություն կարող է ունենալ:

Թեմայի արդիականության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում դատական և իրավական բարեփոխումների 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման

շրջանակներում<sup>1</sup> ՀՀ արդարադատության նախարարությունը մշակել և շրջանառության մեջ է դրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխում («Իրավաբանական անձինք») փոփոխություններ կատարելու հայեցակարգը<sup>2</sup>, ինչպես նաև վերջինիս հիման վրա մշակված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը<sup>3</sup>, որոնք առաջարկում են կորպորատիվ հարաբերություններին, այդ թվում նաև՝ հետազոտության թեմային առնչվող մի շարք խնդիրների հայեցակարգային բնույթի նորովի լուծումներ, որոնք անկասկած իրենց հետագա ազդեցությունը կունենան «Բաժնետիրական ընկերություններ մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների՝ խոշոր և շահագրգռվածություն պարունակող գործարքները կանոնակարգող նորմերի վերափաստավորման ու կատարելագործման ուղիների մշակման վրա:

Այսպիսով, թեմայի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն ուսումնասիրության առարկա հարցերի տեսական ու գործնական կարևորությամբ, այլ նաև գործող քաղաքացիական օրենսդրության մեջ նախատեսվող փոփոխություններն իմաստավորելու, դրանք հնարավորինս խորը և բազմակողմանի վերլուծության ենթարկելու և օրենսդրության հետագա զարգացման ուղիներ նախանշելու անհրաժեշտությամբ:

**Թեմայի մշակվածության աստիճանը:** ԽՍՀՄ-ի փլուզումից հետո շուկայական տնտեսությունների ձևավորման դժվարին ճանապարհին իրավաբանական միտքը էապես վերափաստավորեց տնտեսական հարաբերությունները միջնորդավորող բազմաթիվ ինստիտուտների և կառուցակարգերի դերն ու նշանակությունը, ինչի շնորհիվ

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ նախագահի 30.06.2012 թ. թիվ ՆԿ-96-Ա կարգադրությունը «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2012.07.11/33(907), Հոդ. 827:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության կայքը՝ <http://www.moj.am/legal/view/article/726>:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության կայքը՝ <http://www.moj.am/legal/view/article/815>:

տնտեսական ընկերությունները ձեռք բերեցին նոր կարգավիճակ: Որպես հետևանք, դրանց ստեղծման, գործունեության, դադարման, քաղաքացիաիրավական կարգավիճակի, քաղաքացիական շրջանառությանը մասնակցության առանձնահատկություններին հիմնախնդիրները դարձան նաև քաղաքացիագետների գիտական հետաքրքրությունների, բավականին լուրջ բանավեճերի և քննարկումների առարկա: Բացառություն են չեն նաև տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքները, որոնց վերաբերող հարցերին իրենց ուսումնասիրություններում, դասագրքերում, գիտական հոդվածներում ու այլ աշխատանքներում արևդրադարձել են ռուսաստանցի այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Վ.Ա. Բելովը, Ա.Վ. Գաբովը, Օ.Վ. Գուտնիկովը, Վ.Վ. Չալեսկին, Ե.Ա. Իգնատովան, Դ.Վ. Լոմակինը, Ա.Ա. Մակովսկայան, Ս.Դ. Մոգիլևսկին, Օ.Ն. Սադիկովը, Մ.Վ. Տելյուկիանան, Մ.Յու. Տիխոմիրովը, Ի.Ճ. Ֆախուտդինովը և այլք:

Խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների հիմնահարցերի վերաբերյալ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել հետխորհրդային շրջանի հեղինակներ Ս.Դ. Մագիլևսկին (Մոսկվա, 2001 թ.), Ե.Վ. Մորդասովը (Մոսկվա, 2004 թ.), Կ.Է. Կիլինան (Մոսկվա, 2006 թ.), Գ.Ս. Վասիլյեվը (Վոլգոգրադ, 2006 թ.), Լ.Օ. Կոնդրատենկոն (Մոսկվա, 2007 թ.), Ի.Պ. Պոլշկարյովը (Չելյաբինսկ, 2008 թ.), Ս.Ա. Բուռլակովը (Մոսկվա, 2010 թ.), Մ.Ն. Իլյուշինան (Մոսկվա, 2012 թ.):

Հայ իրականության մեջ խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների ինստիտուտին գրեթե չեն անդրադարձել: Թերևս բացառություն է Վ.Դ. Ավետիսյանը, որն իր` «Կորպորատիվ իրավահարաբերությունների արդիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ դոկտորական ատենախոսության (Եր., 2014 թ.), նույնանուն մենագրության (Եր., 2014 թ.) և «Բաժնետիրական իրավունք» ուսումնական ձեռնարկի (Եր., 2005 թ.) շրջանակներում ներկայացրել է քննարկվող հիմնախնդրի և դրա հետ առնչվող մի շարք վիճահարույց հարցերի վերաբերյալ իր գիտական տեսակետները և առաջադեմ երկրների լավագույն փորձը: Ուշագրավ է նաև Դ.Ս. Սերոբյանի` «Բաժնետոմսերի շրջանառության

իրավական կարգավորումն արժեթղթերի շուկայում» վերտառույթ ամբթեկնածուական ատենախոսությունը (Եր., 2005 թ.), որտեղ հեղինակն անդրադարձել է սույն ատենախոսության թեմային վերաբերող որոշ հիմնահարցերի:

Այնուհանդերձ, չնայած վերը հիշատակված հետազոտությունների մեծ քանակին, հարկ է նկատել, որ հայ իրականության մեջ բացակայում է բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների, դրանց կնքման և վիճարկման կարգի վերաբերյալ համակողմանի գիտական հետազոտություն, որը, վերհանելով թեմային վերաբերող և պրակտիկայում ի հայտ եկած բազմաթիվ խնդիրներն ու դրանց լուծման հիմնական ուղիները, կարող է քննարկվող հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման տեսական հենք դառնալ:

**Յետազոտության նպատակն ու խնդիրները:** Յետազոտության **նպատակը** բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների հասկացության և առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց կնքման մասին որոշումներ կայացնելու, դրանց անվավերության վերաբերյալ տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման առաջարկների մշակումը:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների էությունը, հատկանիշները, վերհանել վերջիններիս բովանդակությունը և սահմանել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների հասկացությունները.

- վերլուծել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին որոշումների ընդունման ընթացակարգերը.

- ներկայացնել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին որոշումներ կայացնելիս ընկերության ղեկավար



մարմինների համագործակցության մեխանիզմները.

- առանձին-առանձին ուսումնասիրել խոշոր և շահագրգռվածության մեջ գործարքների վիճարկման ընթացակարգերը, ինչպես նաև գործարքների վիճարկման դեպքում ընկերության կոնտրադենտների շահերի պաշտպանության հարցերը.

- վերհանել նշված գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը.

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրամշակել և ներկայացնել տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածության մեջ գործարքների վերաբերյալ օրենսդրական դրույթների կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

**Յետազոտության օբյեկտը:** Յետազոտության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ծագում են տնտեսական ընկերության կողմից խոշոր և շահագրգռվածության մեջ գործարքներ կնքելու ընթացքում, ինչպես նաև այդ կապակցությամբ ընկերության, նրա մասնակիցների և երրորդ անձանց միջև ծագող իրավահարաբերությունները:

**Առենախոսության ուսումնասիրության առարկան:**  
Ուսումնասիրության առարկան են «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվության մեջ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների, այլ երկրների կորպորատիվ օրենսդրության՝ խոշոր և շահագրգռվածության մեջ գործարքներին նվիրված նորմերը, ինչպես նաև ՀՀ-ի և այլ երկրների դատական ու գործարարական պրակտիկայի նյութերը: Յետազոտության առարկան ընդգրկում է նաև տնտեսական ընկերությունների քաղաքացիաիրավական կարգավիճակի և նրանց կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածության մեջ գործարքների իրավական կարգավորման հիմնախնդիրներին վերաբերող հայ և օտարազգի քաղաքացիագետների տեսական հետազոտությունները:

**Առենախոսության տեսական հիմքը:** Յետազոտության տեսական հիմքում ամփոփված են իրավունքի տեսության, քաղաքացիական և առևտրային իրավունքի ոլորտների հայրենական և արտասահմանյան

գիտնականների աշխատությունները, ներառյալ՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունները<sup>1</sup>: Յաջվի առնելով ամերիկյան և եվրոպական երկրներում կորպորատիվ իրավունքի ոլորտում ձևավորված բավականին հարուստ փորձը և թեմային վերաբերող արժեքավոր աղբյուրների առկայությունը՝ հատուկ ուշադրություն է դարձվել նաև վերջիններիս ուսումնասիրությանը: Զետազոտության իրականացնելիս մասնավորապես ուսումնասիրվել են Ա.Կանի, Դևիդ Ս. Դոնալդի, Է. Յիքի, Ս. Գուենի, Յ. Յենի, Ջ. Ալեքսանդրի, Դ. Կերշոունի, Ն. Բևանսի, Ռ. Կրակմանի և այլոց աշխատությունները:

**Զետազոտության նորմատիվ-իրավական հենք** են հանդիսացել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների կնքմանն ու վիճարկմանը առնչվող Յայաստանի Յանրապետության և արտասահմանյան բազմաթիվ նորմատիվ իրավական ակտեր, մասնավորապես՝ Յայաստանի Յանրապետության քաղաքական օրենսգիրքը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՅՅ-ի, ՌԴ-ի և ԱՊՀ մի շարք այլ երկրների օրենքերը, «Ընկերությունների մասին» 1985 թ. և 2006 թ. Մեծ Բրիտանիայի օրենքը, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» 1996 թ. ԱՄՆ համընդհանուր ակտը, Ֆրանսիայի «Առևտրային կազմակերպությունների մասին» օրենքը, Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» 1965 թ. օրենքը և այլն:

**Զետազոտության Էմպիրիկ հիմք** են հանդիսացել ատենախոսության շրջանակներում քննարկված որոշ հարցերի շուրջ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՅՅ վճռաբեկ դատարանի նախադեպային ակտերը, ՌԴ բարձրագույն դատական ասյանների որոշումներն ու պարզաբանումները, ինչպես նաև ՅՅ և այլ երկրների դատական և գործարարական պրակտիկայի նյութերը:

**Զետազոտության մեթոդաբանական հիմքը:** Պայմանավորված հետազոտության հստակ նպատակներով ու խնդիրներով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական,

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս «Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկ նյութերի ցանկ»-ը:

համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատաիրավական մեթոդների կիրառմամբ:

**Յետազոտության գիտական նորույթը:** Յետազոտության գիտական նորույթն այն է, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորիս համալիր և բազմակողմանի վերլուծվել են տնտեսական ընկերությունների, մասնավորապես բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների էությունը, բովանդակությունը, առանձնահատկությունները, կնքման և վիճարկման կարգն ու առանձնահատկությունները: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա աստենախոսության շրջանակներում կատարվել են մի շարք տեսական եզրահանգումներ, առաջարկվել են գիտության մեջ և դատական պրակտիկայում ծագած մի շարք բանավեճային հարցերի լուծման և քննարկվող ինստիտուտների վերաբերյալ օրենսդրության դրույթների կատարելագործման ուղիներ:

Աստենախոսության գիտական նորույթն արտացոլվում է ստորև շարադրված և պաշտպանության ներկայացվող դրույթներում, ինչպես նաև օրենսդրության կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկներում, որոնք ամփոփ ներկայացված են սույն աշխատանքի վերջաբանում:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները:**

1. Տնտեսական ընկերությունների առանձին տեսակների կողմից կնքվող խոշոր գործարքների էության, հատկանիշների և առանձնահատկությունների վերլուծության և ընդհանրացման, քննարկվող տեսակի գործարքների վերաբերյալ ձևավորված տեսությունների և դիրքորոշումների ուսումնասիրության և ամփոփման, ՀՀ-ի և մի շարք այլ երկրների օրենսդրությունների առանձին նորմերի համադրական վերլուծության հիման վրա հիմնավորվել է այն տեսակետը, որ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար խոշոր գործարքների միմյանցից տարբերվող հասկացությունների, ներառյալ գործարքն այդպիսին որակելու տարբերակված

չափանիշների օրենսդրական ամրագրումը ոչնչով արդարացված չէ: Ըստ այդմ առաջարկվել է խոշոր գործարք համարել մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք, բացառությամբ ընկերության առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից գույքի, աշխատանքների ու ծառայությունների, տեղեկատվության, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ բացառիկ իրավունքների օտարման կամ օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ գերազանցում է օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված չափը:

2. Բաժնետիրական ընկերությունների ղեկավար մարմինների միջև համագործակցության մեխանիզմների բարելավման և ընկերության մասնակիցների՝ ընկերության ղեկավարմանը անմիջական մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման նպատակով ճիշտ կլիսի գործադիր մարմնին հնարավորությունն ընձեռել ընդհանուր ժողովի օրակարգ ներառել այնպիսի գործարքների կնքման վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցեր, որոնց առարկայի արժեքը կազմում է ընկերության զուտ ակտիվների 25-ից 50 տոկոսը, և որոնց շուրջ խորհուրդը չի կարողացել միաձայն որոշման հանգել, ինչպես նաև այն գործարքները, որոնց առարկա հանդսացող գույքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը:

3. Փոխկապակցված (աֆիլացված) անձանց շրջանակը հստակեցնելու նպատակով գրականության մեջ առկա տեսակետների համալիր վերլուծության և արտասահմանյան երկրների փորձի հիման վրա արտահայտվել և հիմնավորվել է այն տեսակետը, որ գործարքների կնքման հարցում պրտեսցիալ շահագրգռվածություն ունեցող անձանց կազմից նպատակահարմար կլիսի հանել բաժնետիրական ընկերությունների բաժնետերերին և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցներին:

4. Հիմնավորվել է այն գաղափարը, որ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից

կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների սահմանված հատկանիշներին համապատասխանող գործարքների համար չի պահանջվում ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշումն այն դեպքերում, երբ ընկերության և մյուս կողմի միջև կնքվող գործարքները հրապարակային են, այլ կերպ ասած՝ կնքվում են հրապարակային օֆերտայի հիման վրա:

5. Դատարանների կողմից շահագրգռվածությամբ գործարքի անվավերության վերաբերյալ հայցապահանջներ քննելիս, եթե որպես հայցի հիմք հանդես է գալիս շահագրգռված անձի՝ գործարքի կնքման մասին որոշում կայացնելու կապակցությամբ անցկացված քվեարկությանը մասնակցելու փաստը, ապա այդպիսի գործարքները կարող են ճանաչվել անվավեր միայն այն դեպքում, երբ տվյալ անձի կողմից քվեարկությանը մասնակցելն ունեցել է վճռորոշ նշանակություն:

6. Խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջներ կայացնելու սուբյեկտների շրջանակը հստակեցնելու նպատակով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքներում անհրաժեշտ է հստակ սահմանել այն անձանց շրջանակը, որոնք իրավասու են դատարան ներկայացնելու ընկերության կողմից կնքված խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ: Աշխատանքում հիմնավորվել է, որ քննարկվող գործարքներն անվավեր ճանաչելու մասին հայցապահանջներ կայացնելու իրավունք պետք է ունենա բացառապես այն տնտեսական ընկերությունը կամ նրա մասնակիցը, ի շահ որի սահմանված են համապատասխան սահմանափակումները:

7. Բաժնետիրական ընկերությունների պարագայում նպատակահարմար կլինի սահմանել, որ ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշումը չի պահանջվում շահագրգռվածությամբ գործարքներ կատարելու համար, եթե գործարքը կատարվում է ընկերության և մյուս կողմի միջև առօրյա տնտեսական

գործունեության շրջանակներում, որը տեղ է գտել մինչև այն պահը, որից սկսած գործարքը կատարելու հարցում շահագրգիռ անձը ճանաչվում է այդպիսին (որոշումը չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողով կամ խորհրդի նիստանցկացնելու օրը):

**Յետագոտության տեսական և գործնական նշանակությունը:**

Ատենախոսության շրջանակներում կատարված հետագոտության տեսական նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է հայ իրավագիտության մեջ տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների հասկացության, հատկանիշների, կնքման և վիճարկման կարգի ուսումնասիրությանը նվիրված համալիր աշխատանք, որի արդյունքները կարող են օգտակար լինել էթեմայի և դրան առնչվող մի շարք հիմնախնդիրների հետագա գիտական հետագոտություններում: Բացի այդ, ատենախոսության նյութը կարող է օգտագործվել բուհերի և հատուկ դպրոցների ուսկնդիրներին կորարատիվ իրավունք կամ իրավաբանական անձանց վերաբերյալ մի շարք հատուկ դասընթացներ դասավանդելու, ինչպես նաև ուսումնական ձեռնարկներ պատրաստելու ընթացքում:

Թեմայի շրջանակներում քննարկված հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավասատեղծ գործունեության ժամանակ, նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը և օգտակար լինել օրենքների միատեսակ կիրառմանն ուղղված նախադեպային ակտերի մշակման ընթացքում:

**Յետագոտության արդյունքների փորձարկումը:**

Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում, որտեղ այն քննարկվել է ու երաշխավորվել պաշտպանության: Ատենախոսության հիմնական դրույթները և հետագոտության արդյունքներն արտացոլվում են հեղինակի հրատարակած չորս գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր հանդեսներում և գիտական ժողովածուներում:

Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսը ներկայացրել է գեկուցումների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների շրջանակներում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ յուրաքանչյուրը երկուական պարագրաֆներով, եզրակցությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

## ԳԼՈՒԽԼ

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### **§1. Խոշոր գործարքների հասկացողությունն ու հատկանիշները**

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը և «Սահմանափակ պատասխանատվություն ունեցող ընկերությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում են տնտեսական ընկերությունների համապատասխան տեսակների կողմից կնքվող առանձին խումբ գործարքների՝ խոշոր գործարքների հասկացողությունը, առանձնահատկությունները, դրանք կնքելու կարգը:

Խոշոր գործարքները, ինչպես երևում է դրանց անվանումից, գործարքների այնպիսի խումբ են, որոնք էական ազդեցություն ունեն տնտեսական ընկերության հետագա գործունեության վրա, իսկ երբեմն կարող են ճակատագրական լինել նրա համար: Օրենսդրի կողմից խոշոր գործարքներ կնքելու ընթացակարգի վերաբերյալ դրույթների ներմուծումը հիմնականում միտված է ընկերության մասնակիցներին առվելագույնս ներգրավելու ընկերության գործունեության ընթացքում առավել կարևոր որոշումներ կայացնելու գործում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածը սահմանում է խոշոր գործարքների հասկացողությունը, համաձայն որի՝ խոշոր են համարվում՝

ա) մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք, բացառությամբ ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը.



բ) մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնց առարկա է ընկերության հասարակ (սովորական) և հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի (բացառությամբ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսերի) տեղաբաշխումը, որը կազմում է ընկերության կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 25 և ավելի տոկոսը:

Խոշոր գործարքների գրեթե նույնանման սահմանում է պարունակում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը, որի 1-ին մասում նշվում է. «Խոշոր է հանդիսանում այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ ընկերության գուտակտիվների արժեքի 25 տոկոսից ավելին, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ Խոշոր գործարքի այլ չափ: Խոշոր չեն ճանաչվում այն գործարքները, որոնք կատարվում են ընկերության առօրյա տնտեսական գործունեության ընթացքում»: Այստեղ, ի տարբերություն բաժնետիրական ընկերությունների, ելնելով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների առանձնահատկություններից, բացակայում են բաժնետոմսերի տեղաբաշխմանը վերաբերող իրավակարգավորումները: Բացի դրանից, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար օրենսդիրը թույլատրում է ընկերության կանոնադրությամբ սահմանել գործարքը Խոշոր համարելու այլ շեմ:

Խոշոր գործարքի օրենսդրական սահմանումների վերլուծությունը ցույց է տալիս, որ որպես Խոշոր կարող է դիտվել ոչ միայն առանձին վերցրած մեկ գործարքը, որը համապատասխանում է օրենքում սահմանված հատկանիշներին, այլ նաև մի քանի փոխկապակցված գործարքներ, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած Խոշոր չէ, սակայն որոշակի կապի առկայության դեպքում այդ գործարքների ընդհանուր արժեքը Խոշոր արժեք է տվյալ

տնտեսական ընկերության համար: Ենթադրվում է, որ նման մոտեցման նպատակն է խոչընդոտել անբարեխիղճ անձանց կողմից խոշոր գործարքների հաստատման կարգը դրանց մանրացման միջոցով շրջանցելուն:

Նշվածը հաշվի առնելով՝ նախառաջ հարկ ենք համարում անդրադառնալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-րդ և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածներում օգտագործված «գործարքների փոխկապակցվածության» հասկացությանը: Ակնհայտ է, որ օրենքը չի բացահայտում «փոխկապակցված գործարքներ» հասկացությունը և միևնույն ժամանակ չի սահմանում այն հատկանիշները, որոնց առկայության դեպքում հնարավոր կլիներ խոսել գործարքների փոխկապակցվածության մասին:

Ռուս քաղաքացիագետ Վ.Վ. Չալեսկին կարծում է, որ գործարքները փոխկապակցված կարող են համարվել այն դեպքերում, երբ դրանց կողմերի իրավունքներն ու պարտականությունները փոխալի մանավորված են<sup>1</sup>: Դ.Վ. Լոմակինը որպես գործարքների փոխկապակցվածության մասին վկայող հանգամանքներ է համարում գործադիր մարմնի ղեկավարի կողմից կնքված գործարքների հիմքերի համընկնումը (օրինակ՝ սեփականության իրավունքի դադարումը) և կնքված տարբեր գործարքների առարկագույքի նույնանման լինելը (օրինակ՝ բաժնետոմսերը)<sup>2</sup>:

Ուշագրավ դիրքորոշում է հայտնել Ա.Ա. Մակովսկայան, որը, վերլուծելով դատական պրակտիկան, ընդգծել է որոշ չափանիշներ, որոնց առկայության պարագայում կարելի է խոսել գործարքների փոխկապակցվածության մասին: Ըստ Մակովսկայայի՝ գործարքների փոխկապակցվածության մասին կարելի է խոսել բոլոր այն դեպքերում, երբ՝

- մի գործարքի կնքումը պայմանավորված է նախկինում կնքված կամ տվյալ գործարքի հետմիաժամանակ կնքվող մեկ այլ գործարքով,
- գործարքներ կնքող տնտեսական ընկերությունը ունի մեկ

<sup>1</sup> Տե՛ս **Залесский В.В.** Законодательство об акционерных обществах // Право и экономика. 2002, № 7, էջ 93:

<sup>2</sup> Տե՛ս **Ломакин Д.** Крупные сделки в гражданском обороте // Законодательство. 2001, №3, էջ 19:

ընդհանուր նպատակ, որի գոյության մասին կարող են վկայել թեկուզև տարբեր գույքի շուրջ, սակայն միևնույն անձի կամ այդ անձին փոխկապակցված այլ անձանց հետ կնքված գործարքները կամ կարճ ժամանակահատվածում նույն գույքի վերաբերյալ տարբեր անձանց հետ կնքված գործարքները<sup>1</sup>:

Կարծում ենք, որ հեղինակի տեսակետը ճիշտ է և հարմար կիրառական առումով, քանի որ կարծես թե ավելորդ մեկնաբանությունն պահանջող եզրույթաբանությունն չի պարունակում, այնուհանդերձ առկա են ուշադրության արժանի մի քանի հանգամանքեր:

Ա. ՄակոՎսկայան առաջարկում է գործարքների փոխկապակցվածության ներքո հասկանալ այն խումբ գործարքները, որոնք կնքվում են միասեռ գույքի վերաբերյալ տարբեր անձանց հետ կարճ ժամանակահատվածում կամ տարաբնույթ գույքի վերաբերյալ մեկ անձի կամ այդ անձին փոխկապակցված այլ անձանց հետ, սակայն եթե ենթադրվում է այդ գործարքների առարկա հանդիսացող գույքի օգտագործումը միևնույն նպատակային նշանակությունամբ: Հեղինակը որպես գործարքները միմյանց կապող օղակ համարում է գործարքների առարկա հանդիսացող գույքի օգտագործումը միևնույն նպատակային նշանակությունամբ:

Միևնույն նպատակային նշանակություն մասին կարելի է խոսել, օրինակ, երբ ավտոմեքենաների տեխնպասարկման համալիրի սեփականատեր կազմակերպությունը տարբեր գործարքների միջոցով մաս-մաս, սակայն վերջին հաշվով ամբողջությամբ տարբեր անձանց է վաճառում տեխնպասարկման համալիրը: Այս պարագայում հնարավոր է՝ դատարանը կատարի եզրահանգում, որ օտարող կազմակերպությունը փորձել է դիտավորյալ շրջանցել խոշոր գործարքներ կնքելու ընթացակարգը և այդ գործարքները կնքելիս հետապնդել է մեկ միասնական նպատակ՝ ամբողջությամբ վաճառել տեխնպասարկման համալիրը:

Գործարքները կնքելու ժամանակ հետապնդվող միևնույն նպատակը կանխորոշվում է այն պատճառների միասնությամբ, որը դրդել է ընկերությանը կնքելու այդ գործարքները: Որպես

<sup>1</sup> Տե՛ս **Маковская А.А.** Крупные сделки и порядок их одобрения акционерным обществом // Хозяйство и право. 2003, №5, էջ 51:

հետևանք՝ այն գործարքները, որոնք կնքվել են առաջադրված նպատակներին հասնելու համար, կարող են համարվել փոխկապակցված: Սակայն գործարքների փոխկապակցվածության այս չափանիշի առկայության ապացուցումը, մեր կարծիքով, բավականաչափ բարդ կլինի, քանի որ կնքվող գործարքների նպատակների միասնությունը կարող է կազմակերպության ներքին գաղտնիքը լինել, ու միշտ է, որ գործարքների ուսունասիրությանը այդ հանգամանքը կարող է բացահայտ տեսանելի լինել: Ուստի վերը նշված օրինակը ավելի շատ բացառություն է, քան պրակտիկայից բխող օրինակ, քանի որ գործարքների միջև առկա միասնական նպատակը հազվադեպ է այնքան արտահայտիչ լինում, ինչպես մեր օրինակում է: Այնուամենայնիվ պետք է շեշտել, որ գործարքների համապատասխանումը Ա. Մակովսկայայի առաջարկած այս չափանիշին, եթե դա հնարավոր լինի ապացուցել, դատարանի կողմից այդ գործարքները փոխկապակցված համարելու համար անվիճարկելի հիմք կլինի:

Հարկ ենք համարում անդրադառնալ գործարքները փոխկապակցված համարելու համար անրաժեշտ չափանիշներից գործարքների սուբյեկտիվ կազմին և փորձենք հասկանալ՝ արդյոք նշված գործարքները կնքող ընկերության կոնտրագենտներ կարող են հանդիսանալ տարբեր անձինք, թե՞ բոլոր դեպքերում գործարքները պետք է կնքված լինեն մեկ անձի հետ:

Ա. Մակովսկայան նշված հարցի վերաբերյալ ավելի ուշ հրատարակած իր մեկ այլ աշխատությունում, ուսումնասիրելով առկա դատական պրակտիկան, հանգել է հետևյալ եզրակացության. «Տարբեր անձանց հետ գործարքները կնքելիս դրանց սուբյեկտային կազմի չհամընկնումը սովորաբար վկայում է այդ գործարքների միջև փոխկապակցվածության բացակայության մասին... Այն դեպքերում, եթե գործարքները կնքված են մեկ անձի կամ այդ անձին փոխկապակցված (աֆիլացված) անձանց հետ, ապա դա կարող է դիտվել որպես փոխկապակցված գործարքների հատկանիշ»<sup>1</sup>:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածը և «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը չեն

<sup>1</sup> Տե՛ս **Маковская А.** Взаимосвязанные сделки // ЭЖ-Юрист. 2004, №36, էջ 2:

պարզաբանում, թե որ գործարքները պետք է համարվեն փոխկապակցված, ուստի կարծում ենք՝ փոխկապակցված գործարքների հասկացողության համապատասխան մեկնաբանության կարող է տրվել միայն դատարանի կողմից ամեն առանձին վերցրած գործի քննության մեջ: Մեր կարծիքով, գործարքի խոշոր լինելու վերաբերյալ վեճ առաջանալու պարագայում ամեն առանձին վերցրած դեպքի համար պետք է առանձին որոշում կայացվի, քանի որ կոնտրագենտների քանակը չի կարող բացարձակ ազդեցություն ունենալ: Դա քանական չափանիշ է, որը որոշիչ նշանակություն ունենալ չի կարող, և պետք է գնահատվի գործի մյուս հանգամանքների հետ միասին: Յետևաբար, գործարքների սուբյեկտային կազմին վերաբերող չափանիշն առանձին վերցրած բացարձակ կիրառական նշանակություն չունի, և պետք է դիտարկվի գործարքների փոխկապակցվածության մասին վկայող մյուս չափանիշների հետ միասին:

Այս մոտեցումն ամրապնդվում է նաև ՌԴ արբիտրաժային դատարաններից մեկի կայացրած որոշման մեջ արտահայտած դիրքորոշմամբ: Այսպես. «Ուսումնասիրելով գործի փաստական հանգամանքերը՝ արբիտրաժային դատարանը պարզեց, որ վաճառված կառույցները միմյանց կապված չեն միասնական տեխնոլոգիական շրջափուլով ցիկլով: Որոշ կառույցներ առանձին մուտքեր ունեն... Գործարքներ կնքած անձինք նպատակ ունեն այդ կառույցներն օգտագործելու տարբեր նպատակային նշանակությամբ... Կնքված գործարքները նպատակ չեն հետապնդել գործարքների առարկա հանդիսացող կառույցները կենտրոնացնելու մեկ սեփականատիրոջ տիրապետման ներքո»<sup>1</sup>: Փաստորեն, տվյալ դեպքում նույնիսկ եթե հայցվոր կողմը պնդում է գույքն օտարող կազմակերպության հետ գործարքներ կնքած սուբյեկտների միջև որոշակի կապի առկայության մասին, միևնույն է, վերը նշված հանգամանքների ուժով դատարանը հանգում է եզրակացության այն մասին, որ վիճարկվող գործարքների միջև առկա փոխադարձ ազդեցությունն ու փոխադարձ կապն ապացուցված չեն, և կնքված յուրաքանչյուր

<sup>1</sup> Ст' у Постановление ФАС Волго-Вятского округа от 3 мая 2005 г. № А43-12790/2004-2-469 // СПС «КонсультантПлюс»: Սուբյեկտիվ կազմի վերաբերյալ նույնանման դիրքորոշում է արտահայտված նաև հետևյալ որոշման մեջ. Постановление ФАС Восточно-Сибирского округа от 21 февраля 2005 г. № А33-1676/04-С1-Ф02-413/05-С2 // СПС «КонсультантПлюс»:

գործարք ինքնուրույն գործարք է, քանի որ կողմերի համար առաջացնում է ինքնուրույն իրավունքեր ու պարտականություններ, հետևաբար վիճարկվող գործարքները փոխկապակցված չեն:

Այս պարագայում դատարանը մատնանշում է, որ գործարքներ կնքած սուբյեկտների միջև առկա կապն ինքնին բավարար չէ գործարքները փոխկապակցված համարելու համար, այլ անրաժեշտ է նաև, որ գործարքների կողմեր հանդիացող սուբյեկտները նպատակադրված լինեն ձեռք բերվող գույքն օգտագործել միևնույն նպատակային նշանակությամբ: Սա հաստատում է վերը շարադրած մեր դիրքորոշումը գործարքների փոխկապակցվածության հաստատման հարցում, այն է՝ գործարքների սուբյեկտային կազմին վերաբերող չափանիշն առանձին վերցրած բացարձակ նշանակությունն չի կարող ունենալ, և պետք է դիտարկվի մյուս չափանիշների հետմիասին:

Հաջորդ ուշադրության արժանի հանգամանքը գործարքները փոխկապակցված ճանաչելու համար անրաժեշտ ժամանակի չափանիշն է, որի էությունը Ա. Մակովսկայան առաջարկում է ձևակերպել հետևյալ կերպ. «Եթե ընկերության կողմից գործարքները կնքվել են տարբեր ժամանակահատվածներում, ապա դա ամենայն հավանականությամբ վկայում է գործարքների փոխկապակցված չլինելու մասին... Եթե գործարքները կնքվել են միաժամանակ կամ ժամանակի աննշան տարբերությամբ..., ապա այդպիսի գործարքները կարող են լինել փոխկապակցված»<sup>1</sup>:

Այս չափանիշը կիրառելու դեպքում առաջացող հիմնական բարդությունն այն է, որ անրաժեշտ է դառնում պատասխանել այն հարցին, թե ինչ պետք է հասկանալ «տարբեր ժամանակահատվածներ» և «ժամանակի աննշան տարբերություն» ասելով: Այստեղ խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ անհնար է հստակ ասել, թե կնքված գործարքների միջև որքան ժամանակ պետք է անցնի, որպեսզի այդ գործարքները հնարավոր կամ անհնար լինի փոխկապակցված ճանաչել: Կարծում ենք, որ որևէ հստակ ժամանակահատված (կլինի դա մեկ շաբաթ, ամիս կամ տարի) սահմանելու ցակացած փորձ տրամաբանորեն ճիշտ չէ և դատապարտված է անհաջողության, քանի որ առաջացնելու է միայն հարցեր (օրինակ՝ ինչու՞ մեկ ամիս, այլ ոչ

<sup>1</sup> Տե՛ս **Маковская А.** Взаимосвязанные сделки // ЭЖ-Юрист. 2004, №36, էջ 2:

թե երկու):

Պատկերացնենք մի իրավիճակ, երբ ընկերությունը որոշում է արտադրական հոսքագիծ տեղադրել և այդ կապակցությամբ երեք տարբեր գործարքներ է կնքում երեք տարբեր կոնտրագենտների հետ: Առաջինին հանձնարարում է նախագծման աշխատանքները, երկրորդին՝ սարքավորումների պատրաստումն ու մատակարարումը, երրորդին՝ տեղադրման և գործարկման աշխատանքները: Երրորդ գործարքի կնքումը կարող է ժամանակի առումով զգալիորեն հեռու լինել առաջինից: Բերված օրինակում, չնայած ժամանակի մեծ տարբերությանը, կնքված երեք գործարքները միմյանց փոխկապակցված են: Յետևաբար՝ Ա. Մակովսկայայի դիրքորոշումը, երբ ասում է, որ եթե գործարքները կնքվել են տարբեր ժամանակահատվածներում, ապա դա ամենայն հավանականությամբ վկայում է գործարքների փոխկապակցված չլինելու մասին, այդքան էլ համոզիչ չի թվում:

Տարբեր ժամանակահատվածներում գործարքների կնքումը որպես գործարքների փոխկապակցվածության չափանիշ որակելու վերաբերյալ առկա գրականության ուսումնասիրություննից հանգել ենք եզրակացության, որ գործարքների փոխկապակցվածության հաստատման գործում նշված չափանիշը, ինչպես և գործարքների սուբյեկտիվ կազմին վերաբերող չափանիշն առանձին վերցրած բացարձակ նշանակություն ունենալ չեն կարող և պետք է դիտարկվեն մյուս չափանիշների հետմիասին:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրահանգել, որ թեև օրենքը չի սահմանում փոխկապակցված գործարքների հասկացությունը և հատկանիշները, այնուամենայնիվ ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ փոխկապակցված գործարքների մասին խոսելիս պետք է հասկանալ տնտեսական ընկերության կողմից կնքվող այն խումբ գործարքները, որոնց կնքումը պայմանավորված է նախկինում կամ միաժամանակ կնքվող այլ գործարքով, ինչպես նաև այն գործարքները, որոնք կնքվում են միասեռ գույքի վերաբերյալ տարբեր անձանց հետ կարծ ժամանակահատվածում կամ տարաբնույթ գույքի վերաբերյալ մեկ անձի կամ այդ անձին փոխկապակցված այլ անձանց հետ **թեկուզև**

**սարքեր ժամանակահատվածներում**, սակայն երբ ենթադրվում է այդ գործարքների առարկա հանդիսացող գույքի օգտագործումը միևնույն նպատակային նշանակությամբ: Այնումեջևայնիվ, քանի դեռ օրենքը հստակ չի սահմանում, թե գործարքները երբ կարող են համարվել փոխկապակցված, պետք է համաձայնվել Գ. Ե. Ավիլովի այն տեսակետի հետ, համաձայն որի՝ միայն դատարանն է իրավասու գործի հանգամանքների քննությամբ վերջնական որոշում կայացնել՝ արդյոք գործարքների միջև փոխկապակցվածություն առկա է, թե ոչ<sup>1</sup>:

Ընդհանուր կանոն է ինչպես բաժնետիրական, այնպես էլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար, որ խոշոր չեն համարվում այն գործարքները, որոնք կնքվել են բնականոն (առօրյա) տնտեսական գործունեության ընթացքում: Որպեսզի այս կատեգորիայի գործարքները հանենք խոշոր գործարքների շարքից, նախանրաժեշտ է բացահայտել, թե ինչպետք է հասկանալ առօրյա տնտեսական գործունեությունն ասելով: Օրենսդիրը չի սահմանում նաև այդ հասկացությունը<sup>2</sup>: Որոշ աղբյուրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առօրյա տնտեսական գործունեություն շրջանակներում կնքված գործարքներին կարող են դասվել մասնավորապես արտադրական տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով հոլմքի և այլ նյութերի ձեռքբերման գործարքները, ստացված արտադրանքի սպառմանն ուղղված գործարքները, ընթացիկ գործարքների ֆինանսավորման նպատակով վարկեր ստանալը (օրինակ՝ մեծածախ ապրանքների ձեռքբերումը՝ դրանք հետագայում մանրածախ առևտրի միջոցով իրացնելու համար) և այլն<sup>3</sup>:

Ըստ Կ. Ալիևայի՝ կազմակերպության առօրյա տնտեսական գործունեություն շրջանակները որոշելու համար պետք է ծանոթանալ

<sup>1</sup> Տե՛ս Постатейный комментарий к Федеральному закону «Об обществах с ограниченной ответственностью» от 8 февраля 1998г, № 14-ФЗ. Под. ред. **В.В. Залесского**. -М.: 1998, էջ 70:

<sup>2</sup> «Առօրյա» կամ «սովորական» (ՌԴ օրենսդիրը կիրառում է «обычная» բառը, որը իմաստային առումով նույնն է, ինչ «առօրյա» կամ «բնականոն» բառերը) տերմինների հասկացության վերաբերյալ մեկնաբանությունների կարելի է ծանոթանալ հետևյալ հոդվածում. **Лукьяненко М.** Законодательство об оценочных понятиях, включающих признак «обычного», и практика их толкования // Хозяйство и право, 2010, №2, էջ 48:

<sup>3</sup> Տե՛ս Постановление Пленума ВАС РФ от 18 ноября 2003 г. №19 «О некоторых вопросах применения Федерального Закона «Об акционерных обществах»» // СПС «КонсультантПлюс»:



կազմակերպության կանոնադրության բովանդակությանը<sup>1</sup>:

Կարծում ենք՝ հեղինակի տեսակետն այնքան էլ հիմնավոր չէ, քանի որ միշտ չէ, որ կանոնադրության ուսումնասիրության միջոցով հնարավոր է ճիշտ պատկերացում ունենալ կազմակերպության իրական տնտեսական գործունեության շրջանակների վերաբերյալ: Ընդհանուր է՝ կանոնադրության մեջ սովորաբար նշվում են տվյալ ընկերության գործունեության հիմնական ուղղությունները և ոլորտները, սակայն շատ հաճախ տնտեսական ընկերությունների կանոնադրությամբ նախատեսվում է, որ ընկերությունը կարող է իրականացնել շահույթ ստանալու ուղղված ցանկացած գործունեություն և այդ կապակցությամբ կնքել օրենքով չարգելված ցանկացած գործարք: Հնարավոր է իրավիճակ, երբ կանոնադրության մեջ ներառված լինեն գործունեության այնպիսի տեսակներ, որոնցով կազմակերպությունը պլանավորում է զբաղվել: Վերագրյալը հաշվի առնելով և առաջնորդվելով նշված հեղինակի կարծիքով, կարելի է եզրակացնել, որ օրենքի և կանոնադրության դրույթներին համապատասխան կնքված ցանկացած գործարք կարող է համարվել առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքված: Նման մոտեցում ակնհայտորեն անհիմն է:

Կարծում ենք, որ Կ. Ալիևայի դիրքորոշումը սխալ է, քանի որ «առօրյա» կամ «բնականոն» բառերն առաջին հերթին նշանակում են «մշտական», «սովորական», «առավել հաճախակի», «որպես կանոն»<sup>2</sup>: Հետևաբար գործունեության առօրյա լինելը կանխորոշվում է դրամշտական և պարբերական լինելով: Երկրորդ. ընկերությունը թեև ստեղծվում է որոշակի գործունեություն իրականացնելու նպատակով, սակայն այս կամ այն գործունեությունը առօրյա տնտեսական գործունեությանը դասելու համար անրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն կանոնադրությամբ ամրագրված գործունեության ուղղությունները (ընդ որում, չի բացառվում, որ նշված լինեն այնպիսի ուղղություններ, որոնցով կազմակերպությունը երբեք չի զբաղվել, և հնարավոր է՝ երբեք էլ չզբաղվի), այլ և առաջին հերթին պետք է հաշվի առնել իրական, փաստացի գործունեությունը:

<sup>1</sup> Տե՛ս **Алиева К.** Квалификация сделок, выходящих за пределы обычной хозяйственной деятельности акционерного общества // Право и экономика. 2007, № 1, էջ 29:

<sup>2</sup> Տե՛ս **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, -եր., 1976, էջ 109-196:

Գործարքի վիճարկման դեպքում դատարանների կողմից տնտեսական ընկերությունների իրական, փաստացի գործունեությունը հնարավոր է պարզել ընկերությունների փաստացի գործունեության ուսումնասիրության միջոցով, որը պետք է ուղղված լինի տվյալ ընկերության առօրյա տնտեսական գործունեության քանակական և ժամանակային առանձնահատկությունների բացահայտմանը: Մասնավորապես, որպեսզի վիճարկվող գործարքը համարվի առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքված, պետք է պարզել՝ միջև քննության առարկա գործարքի վիճարկումը տվյալ ընկերությունը քանի նմանատիպ գործարք է կնքել և ինչ ժամանակահատվածում (մեկ տարի, երկու տարի և այլն):

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ որոշելու համար, թե արդյոք այս կամ այն գործարքն առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքված գործարք է, թե ոչ, միայն կանոնադրության առանձին դրույթներին ծանոթանալը բավարարչէ. ծագում է տվյալ կազմակերպության գործունեությունը հանգամանալից ուսումնասիրելու անհրաժեշտության: Մեր կարծիքով, հենց այդ իմաստով է բնականոն տնտեսական գործունեություն եզրույթն օգտագործվում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածում, իսկ առօրյա տնտեսական գործունեություն եզրույթը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածում<sup>1</sup>:

Դ. Լոմակինն առանձնացնում է երկու խումբ գործարքներ, որոնք կնքվում են առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում՝ 1) տվյալ ընկերության հիմնական տնտեսական գործունեության երկարամյա անօտարելի տարր հանդիսացող գործարքներ և 2) նման գործարքների կնքմանը նպաստող այլ գործարքներ: Ընդ որում գործարքների երկրորդ խմբի առաքելությունն առաջին խմբի գործարքները կնքելու համար նախապայմաններ ստեղծելն է<sup>2</sup>:

<sup>1</sup> Կարծում ենք, որ այս բառերի միջև էական տարբերությունն չկա և օրենսդիրը մի դեպքում «առօրյա», մյուսում «բնականոն» բառերը օգտագործելիս, նպատակ չի ունեցել դրանց իմաստների միջև տարբերակում մտցնել:

<sup>2</sup> Տե՛ս **Ломакин Д.** Крупные сделки в гражданском обороте // Законодательство. 2001, №3, էջ 21:

Ընկերության հիմնական տնտեսական գործունեության էության անօտարելի տարր հանդիսացող գործարք ասելով՝ նկատի է առնվում այնպիսի գործարքների կնքումը, ինչպիսիք են, օրինակ, առևտրով զբաղվող կազմակերպության կողմից վարկ ստանալը և այդ միջոցների ուղղումն ապրանքների հերթական քանակի ձեռքբերմանը (այստեղ վերջինս կդասվի առաջին խումբ գործարքներին, քանզի կազմակերպությունը զբաղվում է ապրանքների վերավաճառքով): Երկրորդ խումբ գործարքներին մասնավորապես դասվում են վարկի ստացմանն ուղղված գործարքները: Պարզելու համար, թե արդյոք այս կամ այն գործարքները կնքվել են որպես առաջին խումբ գործարքներին նպաստող գործարքներ, որոշվում է առաջին հերթին տվյալ կազմակերպության հիմնական տնտեսական գործունեության էությունը հաշվի առնելով:

Ընդհանուր առմամբ համաձայնվելով հեղինակի դիրքորոշմանը՝ կցանկանայինք միայն մեկ նկատառում անել: Ըստ Դ. Լոմակինի առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքված են համարվում նաև ընկերության հիմնական տնտեսական գործունեության էության անօտարելի տարր հանդիսացող գործարքների կնքմանը նպաստող այլ գործարքները: Այստեղ խոսքը առաջին հերթին վարկերի ստացմանն ուղղված գործարքների մասին է: Յեղի նակի առաջարկած ձևակերպումից բխում է, որ առօրյա տնտեսական գործունեության ընթացքում կնքած պետք է համարել ցանկացած գործարք, մասնավորապես վարկերի ստացմանն ուղղված գործարքները, որոնք նախատեսված են եղել խթանելու կազմակերպության հիմնական տնտեսական գործունեությունը<sup>1</sup>:

Ելնելով այն տրամաբանությունից, որ խոշոր գործարքների ինստիտուտի ներդրումը միտված է ընկերության մասնակիցներին առավելագույնս ներգրավելու ընկերության համար կարևոր խոշոր և

---

<sup>1</sup> Վարկային միջոցների ինքնանպատակ ներգրավումը (գուտ միայն այդ միջոցները ներգրավելու համար) անիմատե և ոչ շահավետ, այդ պատճառով վարկեր ստանալը չի կարող լինել տնտեսական ընկերության նպատակ, հետևաբար դա չի կարող հանդիսանալ տվյալ ընկերության հիմնական տնտեսական գործունեություն կամ նրա առօրյա տնտեսական գործունեության տարր: Յենց այդ պատճառով է վարկավորումը բխում հիմնական տնտեսական գործունեությունից և երկրորդական է դրա հանդեպ: Միաժամանակ, առանց երկրորդ պլանում գտնվող վարկ ստանալուն ուղղված գործարքի անհնար է պատկերացնել ժամանակակից ընկերություններից շատերի գոյությունը, որոնց կենսագործունեության անօտարելի մասն է դարձել կանոնավոր վարկավորվումը:

շահագրգռվածությամբ գործարքների վերաբերյալ որոշումների կայացման գործում, հեղինակի ձևակերպած առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքված գործարքների վերաբերյալ սահմանումը միայն այս տեսակետից այնքան էլ լիարժեք չի թվում: Ուստի առաջարկում ենք հեղինակի ներկայացրած ձևակերպման երկրորդ մասը (երկրորդ խումբ գործարքները) բնութագրելիս ավելացնել, որ նմանօրինակ գործարքները պետք է նախկինում հաստատված լինեն ընկերության համապատասխան մարմինների կողմից և ընկերության համար պարբերական լինեն, այսինքն՝ ընկերությունը պետք է ունենանմանօրինակ գործարքներ կնքելու արակտիկա, որպեսզի այդ գործարքները հետագայում հնարավոր լինի համարել առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքված:

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է եզրակացնել, որ «առօրյա» կամ «բնականոն» բառերն ամեն առանձին վերցրած տնտեսական ընկերության համար իրենց իմաստով սուբյեկտիվ բնույթ են կրում, քանի որ մի ընկերության համար գործունեության որոշ ոլորտներ կամ գործարքներ կարող են առօրյա (սովորական) լինել, մյուսների համար՝ ոչ: Տնտեսական ընկերությունները՝ որպես առևտրային կազմակերպություններ օժտված լինելով կանոնադրական իրավունակությամբ, իրավասու են կնքելու իրենց կանոնադրային նպատակներից բխող և օրենքով չարգելված ցանկացած գործարք, այդ պատճառով ամեն առանձին վերցրած դեպքում տվյալ տնտեսական ընկերությունն ինքը պետք է որոշի՝ արդյոք գործարքը կնքվել է առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում, թե ոչ: Այնուամենայնիվ, վեճ առաջանալու դեպքում վերջնական որոշման կայացումը միշտ մնում է դատարանի հայեցողության ներքո<sup>1</sup>:

Օրենքի վերը հիշատակված նորմերի բովանդակությունից բխում է, որ խոշոր կարող է համարվել ոչ թե կազմակերպության կնքած ցանկացած գործարք, այլ միայն նրանք, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են կազմակերպության կողմից գույք ձեռքբերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ:

Այս տեսակետը պաշտպանում են նաև մի շարք քաղաքացիագետներ,

<sup>1</sup> Տե՛ս **Тихомирова М.Ю.** Комментарий к федеральному закону об обществах с ограниченной ответственностью. -М.: «Юринформцентр», 2003, էջ 243:

որոնց կարծիքով՝ խոշոր կարող են համարվել առուվաճառքի, նվիրատվության, մատակարարման և այլ գործարքները<sup>1</sup>: Այսպես օրինակ՝ Ա. ՄակոՎսկայան կազմակերպության կողմից ուղղակի կամ անուղղակի գույք ձեռքբերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված գործարքների շարքին է դասում նաև փոխառությունը, վարկը, գրավը, երաշխավորությունը<sup>2</sup>: Իսկ ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումն իր որոշումներից մեկում առաջարկում է խոշոր համարել ցանկացած գործարք, որի հետևանք կարող է լինել կազմակերպության կողմից գույքի ձեռքբերումը, օտարումը, ինչպես նաև այն գործարքները, որոնք կապված են գույքի օտարման հնարավորության հետ՝ խոշոր գործարքների շարքը դասելով նաև պահանջի զիջումը, պարտքի փոխանցումը, բաժնետոմսեր ձեռք բերելու միջոցով այլ կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրում կատարելը և այլն<sup>3</sup>:

Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքների՝ խոշոր են համարվում սահմանված չափը գերազանցող ցանկացած գործարք կամ փոխկապակցված այն գործարքները, որոնք վերաբերում են ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռքբերելուն, օտարելուն կամ օտարելու հնարավորությանը:

Ակնհայտ է, որ թե՛ օրենսդրության, թե՛ գրականության մեջ խոսվում է միայն գույքի ձեռքբերման, օտարման և օտարման հնարավորության մասին: Հարց է առաջանում՝ ինչու՞ է օրենսդիրն օտարման հնարավորությամբ գործարքները դասում խոշոր գործարքների շարքին, իսկ ձեռքբերման հնարավորությամբ գործարքները՝ ոչ՝: Մեկ այլ՝ ուշադրության ենթակա հարց է այն, թե արդյոք ճիշտ է ընդհանրապես գույքի ձեռքբերումը խոշոր գործարքների հատկանիշների շարքին դասելը:

<sup>1</sup> Տե՛ս **Ломидзе О., Ломидзе Э.** Крупные сделки хозяйственных обществ: проблемы правового регулирования // Хозяйство и право. 2003, № 1, էջ 61:

<sup>2</sup> Տե՛ս **Маковская А.А.** Крупные сделки и порядок их одобрения акционерным обществом // Хозяйство и право. 2003, №5, էջ 47:

<sup>3</sup> Տե՛ս **Постановление Пленума ВАС РФ «О некоторых вопросах применения Федерального закона «Об акционерных обществах» от 18.11.2003, № 19 // Вестник ВАС РФ, 2004, № 1:**

Մեր կարծիքով, գուլյքի օտարմանն ուղղված գործարքները խոշոր գործարքների թվին դասելը լիովին արդարացված է: Այլ է իրավիճակը, երբ կնքվող գործարքը տնտեսական ընկերության համար ստեղծում է գուլյքի ձեռքբերման հնարավորություն: Վերջինիս մասին կարելի է խոսել այն դեպքերում, երբ, օրինակ, վարձակալության պայմանագիրը կնքվում է վարձակալված գուլյքը գնելու իրավունքով (Քաղ. օր. 627-րդ հոդվ.): Այս պարագայում պայմանագրով նախատեսված վարձավճարը վարձակալող ընկերության համար որպես կանոն խոշոր չէ, սակայն վարձակալության պայմանագրի առարկա գուլյքը, որի ձեռքբերման հնարավորությունը նախատեսված է պայմանագրով, նրա համար կարող է մեծ արժեք ունենալ: Ճիշտ է, տվյալ դեպքում վարձակալի համար առաջանում է պայմանագրի առարկա գուլյքը միակողմանի կամահայտնությամբ հետագայում ձեռք բերելու իրական հնարավորություն, սակայն այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ օրենքը բացառում է վարձակալության պայմանագրի միջոցով գուլյքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումը կամ օտարումը: Ուստի որպեսզի վարձակալը հետագայում կարողանա սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալության պայմանագրի առարկա գուլյքը, առաջանում է մեկ այլ գործարքի՝ առուվաճառքի պայմանագրի կնքման անրաժեշտություն (թեկուզև միակողմանի կամահայտնությամբ): Տվյալ դեպքում ստացվում է, որ ոչ թե գնելու իրավունքով վարձակալության պայմանագիրը, այլ հենց հետագայում կնքվող առուվաճառքի պայմանագիրն է, որ «Սահմանափակ պատասխանատվության ընկերությանների մասին» և «Բաժնետիրական ընկերությանների մասին» ՀՀ օրենքների իմաստով կհամարվի գուլյքի ձեռքբերմանն ուղղված խոշոր գործարք: Նշված իմաստով գուլյքի ձեռքբերմանն ուղղված գործարքը (մեր օրինակում՝ գնելու իրավունքով վարձակալության պայմանագիրը) նույնիսկ խոշոր գործարքի այլ հատկանիշների առկայության պայմաններում վարձակալ ընկերության համար խոշոր համարվել չի կարող, քանի դեռ վերջինս չի արտահայտել վարձակալության պայմանագրում սահմանված պայմաններով վարձակալված գուլյքը գնելու իրավունքից օգտվելու կամահայտնություն:

Անդրադառնալով մեր կողմից առաջարկված հաջորդ հարցին՝ փորձենք հասկանալ՝ արդյոք գույքի ձեռքբերումը՝ որպես տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր գործարքների հատկանիշ, լիովին ծառայում է իր նպատակային նշանակությունը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ եթե գործարքը հատուցելի է, ապա գույքի ձեռքբերումը միշտ գույքորդվում է այլ գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների օտարմամբ: Իսկ եթե տնտեսական ընկերության կողմից կնքվող գույքի ձեռքբերմանն ուղղված գործարքն անհատույց է, ապա ընկերությունը ձեռք բերվող գույքի դիմաց որևէ այլ գույք չի օտարում: Օրինակ՝ որևէ ֆիզիկական անձ (նվիրատու) տնտեսական ընկերության գործունեության որևէ ոլորտի խթանման նպատակով վերջինիս (նվիրառուին) նվիրում է գույք, որը խոշոր արժեք է ներկայացնում այդ տնտեսական ընկերության համար, ապա կստացվի, որ տվյալ գործարքը նվիրառու ընկերության համար կհամարվի խոշոր, և անրաժեշտ կլինի կնքել խոշոր գործարքների կնքմանը հատուկ ընթացակարգի կանոններով: Նման իրավակարգավորումը, կարծում ենք, արդարացված չէ:

Պատկերացնենք մեկ այլ իրավիճակ. օրինակ՝ որևէ անձ շուկայականից բավականին ցածր գնով վաճառքի է հանում իրեն պատկանող գույքը, իսկ մեկ այլ ընկերության տնօրեն որոշում է օգտվել առաջացած հնարավորություններից և գնել իր կազմակերպությանն անրաժեշտ որոշ առարկաներ: Այն պարագայում, երբ գնորդ կազմակերպության համար ձեռքբերվող գույքը խոշոր արժեք չներկայացնի, սակայն ձեռքբերվող գույքի շուկայական (իրական) արժեքը գերազանցի նույն կազմակերպության ակտիվների հաշվեկշռային արժեքի, օրինակ, 25%-ը, ապա գնորդ կազմակերպությունը պարտավոր կլինի այս գործարքը նույնպես կնքել խոշոր գործարքների կնքմանը հատուկ ընթացակարգի կանոններով:

Անհասկանալի է, թե ինչ հիմնավորմամբ է օրենսդիրը դրանք դասում խոշոր գործարքների շարքին: Կարծում ենք, որ եթե գործարքն անհատույց է, այսինքն երբ ձեռք է բերվում գույք առանց որևէ այլ գույք օտարելու, կամ երբ ձեռք բերվող գույքը խոշոր

արժեք է ներկայացնում, իսկ օտարվողը՝ ոչ, ապա այս պարագայում չի կարելի խոսել տնտեսական ընկերության դրույթյան վատթարացման մասին, այլ հակառակը՝ նման դեպքերում վերջինս, կարելի է ասել, միշտ կգտնվի շահեկան վիճակում:

Այսպիսով, հաշվի առնելով գույքի ձեռքբերման և գույքի ձեռքբերման հնարավորությամբ գործարքների էությունը, կարծում ենք՝ վերջիններս տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր գործարքների շարքին դասելու անրաժեշտությունն չկա: Ելնելով այն հիմնավորումից, որ գույքի անհատույց ձեռքբերման գործարքները, անկախ գործարքի առակա գույքի արժեքից, միշտ կնքվում են ի շահ գույքը ձեռք բերող տնտեսական ընկերության, կարծում ենք՝ նշված բնույթի գործարքների կնքումն ավելի ճիշտ կլինի թողնել գործադիր մարմնի ղեկավարի բացառիկ իրավասությանը: Ինչ վերաբերում է հատուցելի գործարքների միջոցով գույքի ձեռքբերմանը, ապա հաշվի առնելով այն իրողությունը, որ հատուցելի գործարքների դեպքում գույքի ձեռքբերումը միշտ գույքորդվում է գույքի օտարմամբ, կարծում ենք, որ գույքի հատուցելի ձեռքբերումը որպես խոշոր գործարքների չափանիշ դիտարկելը ոչնչով հիմնավորված չէ, քանի որ տնտեսական ընկերության կողմից գույքի օտարումը, որի արժեքը գերազանցում է օրենքում նշված սահմաչափը, և համապատասխան մյուս հատկանիշների առկայությունն ինքնին հանգեցնում են այդ գործարքը խոշոր գործարքների շարքին դասելու անրաժեշտության: Ուստի կարծում ենք, որ ավելի նպատակահարմար է խոշոր գործարքների շարքին դասել միայն գույքի օտարման կամ օտարման հնարավորությամբ գործարքները:

Օրենսդրի կողմից խոշոր գործարքների պարտադիր հատկանիշ է դիտվում գործարքների առարկա հանդիսացող գույքի արժեքը, որը գերազանցում է օրենքով կամ կանոնադրությամբ (ՍՊԸ-ների դեպքում) սահմանված չափը: Խոշոր գործարքի առարկայի արժեքը որոշվում է գործարք կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի հետ հարաբերակցությամբ, քանի որ հենց ակտիվների հաշվեկշռային արժեքն է, ի տարբերություն կանոնադրական կապիտալի, առավել



օբյեկտիվորեն արտացոլում իրավաբանական անձի ընթացիկ ֆինանսական դրությունը: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ խոշոր գործարքների առարկայի արժեքը հիմնավոր կերպով արտահայտվում է տոկոսներով, այլ ոչ թե որևէ սահմանված գումարով և կազմում է տվյալ ընկերության ակտիվների 25 և ավելի տոկոսը<sup>1</sup>:

Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքների խոշոր գործարքների վերաբերյալ դրույթների՝ այս գործարքների շարքին են դասում նրանք, որոնց առարկա է գույքը: «Գույք» տերմինի հասկացությունն օրենսդրորեն սահմանված չէ, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածից հետևում է, որ քաղաքացիական իրավունքի օբյեկտներ են համարվում գույքը, աշխատանքներն ու ծառայությունները, տեղեկատվությունը, մտավոր գործունեության արդյունքները, ոչ նյութական բարիքները: Իր հերթին գույքը ներառում է դրամական միջոցները, արժեթղթերն ու գույքային իրավունքները: Հարց է ծագում՝ արդյոք կարելի է խոշոր գործարքների առարկա համարել գույքին չվերաբերող քաղաքացիական իրավունքի մյուս օբյեկտները: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքների դրույթները դրանք խոշոր գործարքի հնարավոր առարկա չեն համարում, հետևաբար կարելի է եզրակացնել, որ աշխատանքներն ու ծառայությունները, մտավոր գործունեության արդյունքներն ու քաղաքացիական իրավունքի մյուս օբյեկտները խոշոր գործարքի առարկա համարվել չեն կարող:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքները մեկ այլ կարևոր խումբ գործարքների՝ շահագրգռվածությամբ գործարքների առարկան սահմանելիս,

<sup>1</sup> «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել այլ սահմանաչափ:

գույքից բացի, գործարքի հնարավոր առարկա են համարում նաև աշխատանքներն ու ծառայությունները: Այս երկու գործարքներն իրենց տեսակով ու ձևով շատ նման են միմյանց, և հասկանալի է, թե ինչով է հիմնավորվում այս տարբերակված մոտեցումը՝ խոշոր գործարքների առարկա սահմանելով միայն գույքը, իսկ շահագրգռվածությամբ գործարքների դեպքում՝ նաև աշխատանքներն ու ծառայությունները:

Եթե համեմատականներ անցկացնենք Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությունների միջև, կտեսնենք՝ ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» դաշնային օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խոշոր գործարքի առարկա կարող են հանդիսանալ գույքը և ծառայությունները: Անհասկանալի է, թե ինչու ՌԴ օրենսդիրը ծառայությունների հետ միասին չի նշում նաև աշխատանքները, որոնք իրենց բնույթով թեև նույնը չեն, բայց շատ նման են: Այս խնդիրն իր հետագա կարգավորումն է ստացել ՌԴ Բարձրագույն դատական ատյանների որոշումներում, որտեղ ինչպես բաժնետիրական ընկերությունների, այնպես էլ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար սահմանվել է, որ գույքից և ծառայություններից զատ՝ խոշոր գործարքների առարկա կարող են հանդիսանալ նաև աշխատանքները, մտավոր գործունեության արդյունքները, տեղեկատվությունը<sup>1</sup>:

Խոշոր գործարքներին վերաբերող տեսական գրականության մեջ գրեթե բոլոր ակնառու գիտնականները միակարծիք են այն բանում, որ խոշոր գործարքները կարող են «աղետալի» հետևանքներ ունենալ ընկերության ֆինանսական դրության վրա, այդ պատճառով նման գործարքների կնքման համար միայն ընկերության ղեկավար մարմնի կամքը բավարար է, այլ անրաժեշտ է ընկերության մասնակիցների կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի համաձայնությունը: Խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշման կոլեգիալ ընդունման կարգն առաջին հերթին ուղղված է այդ որոշումներն առավել

---

<sup>1</sup> Ст' у Постановление Федерального арбитражного суда Западно-Сибирского округа от 14.06.2007, № Ф04-3716/2007 // СПС Гарант, Постановление Федерального арбитражного суда Северо-Западного округа от 17.2004, № А21-6649/03-С2 // СПС Гарант, Постановление Федерального арбитражного суда Северо-Западного округа от 23.05.2005, № А56-21604/03 // СПС Гарант.

կշռադատված դարձնելու, ինչպես նաև որոշում կայացնող անձանց ուսերին է թողնում գործարքի կնքման արդյունքում վրահասնող հետևանքների վերաբերյալ բարոյական պատասխանատվությունը: Ելնելով այս հիմնավորումից՝ գույքին չվերաբերող քաղաքացիական իրավունքի մյուս օբյեկտները խոշոր կամ շագրգռվածությամբ գործարքների առարկա չհամարելը և դրանց վերաբերող գործարքների կնքման մասին որոշումների կայացման ընթացակարգերից ընկերության մասնակիցներին կամ բաժնետերերին անմասն թողնելն այնքան էլ տրամաբանական չեն:

Կարծում ենք՝ պետք է համաձայնվել Մ. Յու. Տիխոմիրովայի այն դիրքորոշմանը, որ ընկերության կողմից կնքվող գործարքները խոշորների շարքին դասելու համար նախ անրաժեշտ է պարզել՝ արդյոք այդ գործարքի կնքումը կարող է իրապես ազդել ընկերության հետագա ճակատագրի վրա՝ մի կողմից որպես կազմակերպության և որպես տնտեսական միավորման, իսկ մյուս կողմից որպես իրավաբանական անձի և որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի: Դրական պատասխանի, ինչպես նաև սահմանված չափանիշների առկայության դեպքում միայն հնարավոր կլինի խոսել գործարքի խոշոր լինելու մասին<sup>1</sup>:

Այս խնդրի վերաբերյալ շատ հետաքրքրական տեսակետ է հայտնել Ա. Մակոլսկայան, համաձայն որի՝ եթե ընկերության կողմից կնքվող գործարքի առարկան քաղաքացիաիրավական իմաստով գույք չէ, սակայն գործարքն ընկերության համար կրում է հատուցելի բնույթ, ապա մատուցվող (օտարվող) կամ ստանալիք (ձեռք բերվող) հանդիպական կատարումը քաղաքացիական օրենսգրքի իմաստով կհմարավի գույք<sup>2</sup>: Այդպիսի գործարքն ամբողջությամբ համապատասխանում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխով սահմանված դրույթներին: Ա. Մակոլսկայայի նշված տեսակետը հիմնավոր է թվում և կարծես թե վերացնում է քաղաքացիական

<sup>1</sup> Տե՛ս **Тихомирова М.Ю.** Комментарий к федеральному закону об обществах с ограниченной ответственностью, -М.: «Юримформцентр», 2003, էջ 244-245:

<sup>2</sup> Տե՛ս **Маковская А.А.** Крупные сделки и порядок их одобрения акционерным обществом // Хозяйство и право. 2003, № 5, էջ 48:

իրավունքնի օբյեկտները խոշոր գործարքների առարկա համարելու կամ չհամարել խնդիրը:

Այսպիսով, տնտեսական ընկերության կողմից կնքվող այն գործարքները, որոնց առարկա են աշխատանքներն ու ծառայությունները, մտավոր սեփականությունը կամ քաղաքացիական իրավունքի մյուս օբյեկտները, որոնց արժեքը գերազանցում է գործարք կնքող ընկերության ակտիվների հաշվապահական հաշվեկշռի սահմանաչափը, կարծում ենք, նույնպես պետք է դասել խոշոր գործարքների շարքին:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար խոշոր գործարքների հասկացությունը ձևակերպել հետևյալ կերպ. «խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք, բացառությամբ ընկերության առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից գույքի, աշխատանքների ու ծառայությունների, տեղեկատվության, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ բացառիկ իրավունքների օտարման կամ օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ գերազանցում է օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված չափը»:

## **§2. Խոշոր գործարքներ կնքելու մասին որոշումների կայացման կարգը**

Կորպորատիվ հարաբերությունների իրավական կարգավորման էական ելակետային դրույթներից է ժողովրդավարության սկզբունքը: Այս սկզբունքի էությունն այն է, որ կորպորացիայի կառավարման ընթացքում որոշումները կայացվում են ձայների մեծամասնությամբ, և դրանք պարտադիր են կորպորացիայի կառավարման մար-

մինների և մասնակիցների կամ բաժնետերերի համար<sup>1</sup>: Այն ուղղակի պատճառահետևանքային կապ ունի կորպորատիվ իրավաիրարությունների հաջորդ սկզբունքի հետ, որը ենթադրում է փոքամասնության կամքի ենթարկումը մեծամասնությանը<sup>2</sup>, այսինքն՝ մեկ բաժնետիրոջ կամ ընկերության մեկ մասնակցի կամքը դեռ ամբողջ ընկերության կամքը չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ ընկերությունն ունի միայն մեկ մասնակից կամ բաժնետեր: Տվյալ պարագայում ընկերության կամքը ձևավորվում է կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկությամբ, որտեղ ընկերության մասնակիցն արտահայտում է իր կամքը, ընդ որում, ինչպես նշում է Վ. Կոնոնովը, քվեարկությունն ընկերության մասնակիցների կամքի արտահայտման միակ միջոցն է<sup>3</sup>:

Միակողմանի գործարքներում կամքը կարող է արտահայտվել մի քանի անձանց կողմից. օրինակ՝ գույքի վաճառքի նպատակով լիազորագիր կարող է տրվել մի քանի համասեփականատերերի կողմից, որտեղ վերջիններս հանդես կգան որպես գործարքի մեկ կողմ: Այս դրույթը կիրառելի է նաև խոշոր գործարքների կատարման մասին որոշում կայացնելու դեպքում. այս պարագայում քվեարկության (կամ միակողմանի գործարքների) միջոցով կազմակերպության համապատասխան կոլեգիալ մարմնի ամեն առանձին վերցրած անդամի կամք միավորվում և վերածվում է ամբողջ կազմակերպության միասնական կամքի: Այլ կերպ ասած՝ ընկերության մասնակիցների կամ խորհրդի անդամների միասնական կամահայտնությունը հանգեցնում է իրավաբանական անձի կամքի ձևավորմանը: Կառավարման մարմինների որոշումների գործարք հանդիսանալու հանգամանքն ընդգծում են նաև Վ. Ավետիսյանը և Դ. Սերոբյանը, որոնք միաժամանակ մատնանշում են այն ԶԶ քաղաքացիական

<sup>1</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ իրավաիրարությունների արդի հիմնաիրարությունը Հայաստանի Հանրապետությունում, իրավ. գիտ. դոկտորի ատենախոս., Եր., ԵՊՀ, 2014, էջ 37:

<sup>2</sup> Տե՛ս **Степанов П.В.** Корпоративные отношения в гражданском праве // Законодательство. 2002, № 6, էջ 34:

<sup>3</sup> Տե՛ս **Кононов В.С.** Корпоративные правоотношения: понятие, признаки, сущность // Актуальные проблемы гражданского права. Сб. статей. Вып. 9. Под ред. **О.Ю. Шилохвоста.** -М.: 2005, էջ 88:

օրենսգրքով և հարակից օրենքներով ամրագրելու անրաժեշտությունը<sup>1</sup>: Համեմատության համար նշենք, որ կառավարման մարմինների որոշումները համարվում են գործարքներ Վրաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, իսկ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի ուժով ընկերության ժողովի որոշումները քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների առաջացման ինքնուրույն հիմք են:

Ընդ որում, ընկերության ժողովի որոշումների կապակցությամբ անցկացված քվեարկության արդյունքերը պետք է պատշաճորեն արտահայտված լինեն համապատասխան մարմնի գրավոր արձանագրության մեջ, հակառակ դեպքում կասկածի տակ կարող է առնվել գործարքի կնքումը հատուկված լինելու փաստը:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների, որպեսզի գործարքի կնքման վերաբերյալ որոշումը համարվի պատշաճորեն կայացրած, անրաժեշտ է երկու պայմանների առկայությունը՝

- գործարքի կնքմանն ուղղված կամքը պետք է ձևավորվի դրա լիազորությունն ունեցող մարմնի կողմից,
- գործարքի կնքման մասին որոշումը պետք է ընդունվի օրենքի և կանոնադրության պահանջներին համապատասխան:

Ինչպես նշում է Ս. Դ. Մոգիլևսկին, ընդհանուր ժողովի անցկացումը օրենքի, կանոնադրության և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան ապահովում է նրա ընդունած որոշումների վավերությունը<sup>2</sup>:

Այն հարցը, թե որ մարմնի որոշումն է անրաժեշտ խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարք կնքելու համար, որոշվում է

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխի («Իրավաբանական անձինք») փոփոխությունների հայեցակարգը, մաս 9, <http://www.moj.am/legal/view/article/726>

**Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, -Եր., ԵՊՀ իրատ., 2013, էջ 335:

<sup>2</sup> Տե՛ս **Могилевский С.Д.** Органы управления хозяйственными обществами: правовой аспект. Дисс... доктора ю. н. –М., 2001, էջ 112:

օրենքով կամ կանոնադրությամբ՝ ամեն առանձին գործարքի քանակական (խոշոր գործարք) կամ որակական ու քանակական (շահագրգռվածությամբ գործարք) առանձնահատկություններից ելնելով:

խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումների կայացման կարգը տարբերվում է՝ պայմանավորված բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների առանձնահատկություններով, թեև երկու օրենքներն էլ միայն սահմանում են այն մարմինները, որոնք իրավասու են գործարքների կնքման վերաբերյալ որոշում կայացնելու: Այնուամենայնիվ, խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշում կայացնելու ընթացակարգն առավել մանրամասն բացահայտվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում, որի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն, ընդ որում՝ խորհրդից դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առնվում: Այն դեպքում, երբ գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, ապա խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունել՝ հարցը ընդհանուր ժողովում քննարկելու մասին: Այդ դեպքում, համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի, գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է նաև, որ եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու

մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

Մեր կարծիքով, վերը նշված ընթացակարգերում էական բացթողում կարելի է համարել այն, որ բաժնետիրական ընկերության միանձնյա ղեկավար մարմինը զրկված է բաժնետերերի արտահերթ ժողով հրավիրելու և բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգում հարցեր ներառելու հնարավորությունից, քանի որ հենց միանձնյա ղեկավար մարմինն է, որ տիրապետում է այս կամ այն հարցերի վերաբերյալ ամբողջական տեղեկության, որն էլ էապես անրաժեշտ է առկա հարցերի վերաբերյալ ճիշտ որոշումներ կայացնելու համար: Հանդիսանալով ինչպես կամք ձևավորող, այնպես էլ կամք արտահայտող մարմին՝ գործադիր մարմինը պետք է ազդեցություն ունենա կազմակերպության կողմից առավել կարևոր որոշումների ընդունման գործում: Այդուհանդերձ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 84-րդ հոդվածի համաձայն՝ բաժնետերերի տարեկան և արտահերթ ժողովների հրավիրումը, ինչպես նաև դրանց օրակարգերի հաստատումը դասվում են ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանը, միաժամանակ նույն օրենքի 72-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում ժողովի օրակարգի վերաբերյալ 2-ից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել ընկերության բաժնետիրոջը կամ բաժնետերերին, որոնք տիրապետում են ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսին: Այնուամենայնիվ առաջարկված հարցերը ժողովի օրակարգ ներառվում են նորից խորհրդի միջոցով՝ խորհրդի որոշմամբ. մասնավորապես՝ թեև օրենքը սահմանում է բաժնետերերի վերոնշյալ իրավունքը, սակայն 72-րդ հոդվածի 4-րդ մասը նորից խորհրդի իրավասությանն է հանձնում բաժնետերերի ներկայացրած առաջարկություններն ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկելու կամ ընդգրկումը մերժելու մասին որոշում կայացնելու հարցը:



Վ. Ավետիսյանը ժողովի օրակարգում բաժնետերերի առաջարկությամբ նոր հարցեր ընդգրկելու իրավունքին անդրադարձնալիս արդարացիորեն մատնատնշում է, որ թեև 72-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է բաժնետերերի ներկայացված առաջարկը խորհրդի կողմից մերժելու դեպքում այն դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, միևնույն է, այդ իրավունքների դատական կարգով պաշտպանության մեխանիզմները ուտոպիստական են, և նկատում, որ գործնականում մինչև գործի քննության ավարտը ժողովը կարող է գումարվել, և այդ դեպքում բաժնետիրոջ՝ թեկուզև դատարանի կողմից բավարարված պահանջը որևէ գործնական կիրառություն չի ունենա<sup>1</sup>:

Հարկ է նկատել, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում նման խնդիր չկա, քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածների համաձայն՝ հերթական և արտահերթ ընդհանուր ժողովները հրավիրվում են գործադիր մարմնի կողմից:

Կարելի է եզրակացնել, որ բաժնետիրական ընկերությունների պարագայում միանձնյա ղեկավար մարմնի կողմից խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքների կնքման հետ կապված որոշումների կայացման վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողով առաջարկություններ ներկայացնելու իրավունքի բացակայությունը կհանգեցնի այն բանին, որ այդ հարցերը ճիշտ ժամանակին ժողովը քննարկման չի դնի կողմից, իսկ դա, իր հերթին կարող է առաջացնել տարբեր բացասական հետևանքներ այդ տնտեսական ընկերության համար: Օրինակ, ընդհանուր ժողովի համապատասխան որոշման բացակայության պարագայում միանձնյա ղեկավար մարմինը կարող է գնալ լիազորությունների սահմանազանցմամբ գործարքի կնքման, կամ հակառակը՝ ընկերության համար շահավետ գործարքը կարող է չկնքվել համապատասխան որոշման բացակայության կամ ուշացման պատճառով:

Այս բացթողումն առանձապես ակնառու է դառնում, երբ խոշոր

<sup>1</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, նշված աշխ., էջ 306:

գործարքներ կնքել ու ժամանակ գործարքի առարկա գույքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը, և ըստ օրենքի պահանջվում է գործարքը կնքել ու մասին ընդհանուր ժողովի որոշում: Այս պարագայում, փաստորեն, պարտադիր կերպով տեղի է ունենում «երկակի հաստատում», այսինքն՝ սկզբում խորհուրդը որոշում է ընդունում հարցն ընդհանուր ժողովի օրակարգում ներառել ու նպատակահարմարության մասին, այնուհետև ընդհանուր ժողովը կարող է ներառվել գործարք կնքել ու վերաբերյալ որոշման կայացման ընթացակարգի մեջ: Փաստորեն հնարավոր են դեպքեր, երբ գործարքը համապատասխանում է ընդհանուր ժողովի կողմից քննարկման ենթակա գործարքների չափանիշներին, սակայն խորհուրդը ցանկության դեպքում կարող է բացառել գործադիր մարմնի ներկայացրած գործարքն ընդհանուր ժողովի կողմից քննարկել ու և հետևաբար այդ գործարքը հետագայում կնքել ու հնարավորությունը: Նման իրավիճակը, մեր կարծիքով, վկայում է խորհրդի դերի անհիմն չափազանցված լինել ու մասին:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգում փոփոխություններ կատարելուց բացի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածը սահմանում է, որ խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում նաև բաժնետերերի արտահերթ ժողովների գումարելը: Նույն հոդվածը սահմանում է, որ արտահերթ ժողով գումարել ու պահանջ կարող են ներկայացնել գործադիր մարմինը, վերստուգող հանձնաժողովը, ընկերության աուդիտն իրականացնող անձը կամ պահանջ ներկայացնել ու դրությամբ ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերը կամ բաժնետերերը: Սակայն, միևնույն ժամանակ, 74-րդ հոդվածի 4-րդ մասով օրենսդիրը սահմանում է խորհրդի, վերոնշյալ անձանց և մարմինների կողմից ներկայացված արտահերթ ժողով գումարել ու մասին պահանջը մերժել ու իրավունքը, որը, կարծում ենք, նորից վկայում է այն մասին, որ բաժնետիրական ընկերություններում

խորհրդի դերը չափազանցված է:

Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասով օրենսդիրը սահմանում է խորհրդի, վերոնշյալ անձանց և մարմինների կողմից ներկայացված արտահերթ ժողով գումարելու մասին պահանջը մերժելու իրավունքը, իսկ նույն օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե խորհուրդը մերժում է արտահերթ ժողով գումարելու պահանջը, պահանջ ներկայացնողը կարող է ինքը հրավիրել ժողով, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն խորհրդի մերժումը կարելի է բողոքարկել դատական կարգով:

Վ. Ավետիսյանը, խոսելով համապատասխան մարմինների արտահերթ ժողով հրավիրելու իրավունքի մասին, մասնավորապես՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ կամ բաժնետերերի այդ իրավունքի մասին, նշում է, որ բաժնետերերին նման իրավունքի տրամադրումը վերջիններիս շահերի և իրավունքերի պաշտպանության արդյունավետ միջոց է, իսկ դատական կարգով խորհրդի որոշումը վիճարկելուց հետո միայն արտահերթ ժողով գումարելու հնարավորությունն ընձեռնելը որևէ տրամաբանության մեջ չի տեղավորվում<sup>1</sup>:

Բացի դրանից, հեղինակն արդարացիորեն նկատում է, որ այդ իրավունքները հիմնականում դեկլարատիվ բնույթի են և դրանք խախտելու համար որևէ սանկցիանախատեսված չէ: Ավելին, նշվում է նաև, որ երբեմն նույնիսկ դատարանների կողմից է սահմանափակվում ընկերությունում համեմատաբար փոքր բաժնեմասի տիրապետող բաժնետերերի իրավունքների իրականացման հնարավորությունը և որպես ապացույց մատնանշում էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը, որով դատարանը մերժել էր ընկերության 10%-ից մի փոքր պակաս քվեարկող բաժնետոմսերի տիրապետող բաժնետիրոջ սեփական միջոցներով ընկերությունում աուդիտ իրականացնելու պահանջը<sup>2</sup>: Յեղիսակը

<sup>1</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, նշված աշխ., էջ 325:

<sup>2</sup> Տե՛ս Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի №ԵԵԴ/0248/02/11 քաղաքացիական գործով 03.04.2012 թ. վճիռը:

նկատում է, որ օրենսդիրը, բաժնետիրոջը նման իրավունք վերապահելով, փորձում է ոչ թե լուծել ընկերությունում պարտադիր աուդիտ իրականացնելու խնդիրը, այլ այդ իրավունքը բաժնետիրոջ համար վստահելի աղբյուրից ընկերության գործունեության վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ստանալու և րացուցիչ գործիք է<sup>1</sup>:

Հատկանշական է նաև այն, որ եթե խորհուրդը մերժում է համապատասխան մարմնի կողմից արտաերթ ժողով գումարելու առաջարկը, վերջիններս կարող են իրենց հաշվին հրավիրել ժողով<sup>2</sup>: Այս դեպքերի վերաբերյալ գրականության մեջ առաջարկվում է արտաերթ ժողով գումարելու պահանջ ներկայացնող անձին, ով խորհրդի կողմից մերժում ստանալուց հետո որոշել է ինքնուրույն հրավիրել ժողով, անցնեն այն բոլոր իրավասությունները, որոնցով օժտված կլինեն խորհուրդը արտաերթ ժողով գումարելու պարագայում: Ենթադրվում է, որ նման դրույթի ներառումն առավել դյուրին կդարձնի ռեեստրավարի և այդ գործընթացում ընդգրկված այլ անձանց փոխարարությունները<sup>3</sup>:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ պահանջ ներկայացնողի կողմից իրենից վերադասության կարգով բարձր գտնվող խորհուրդն անտեսելն ու ինքնուրույն ժողով հրավիրելը կամ խորհրդի որոշումը դատական կարգով բողոքարկելը ոչ թե արակտիկ, այլ ձևական իրավունքներ են, և դժվար թե գործադիր մարմինը հարկ եղած դեպքում օգտվի դրանից: Ուստի կարծում ենք, որ սա նորից վկայություն է այն բանի, որ բաժնետիրական ընկերություններում խորհրդի դերը չափազանցված է:

Տնօրենների խորհրդի դերի չափազանցվածությունը մասնավորապես գործարքների կնքման մասին որոշում կայացնելու հարցում ակնառու է դառնում նաև օրենսդրի կողմից ընկերության խորհրդին ընկերության գործադիր մարմնի վրա ազդեցության

<sup>1</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, նշված աշխ., էջ 247:

<sup>2</sup> Ընդ որում, հետագայում ժողովը կարող է որոշում կայացնել ընկերության միջոցների հաշվին արտաերթ ժողով գումարելու հետ կապված ծախսերը փոխատուցելու մասին:

<sup>3</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, նված աշխ., էջ 324:

տարբեր լծակներով օժտել ու հնարավորության պարագայում: Խոսքը առաջին հերթին գործադիր մարմնի ձևավորման և դրա լիազորությունների վաղաժամկետ դադաման մասին է: Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 84-րդ հոդվածի համաձայն՝ կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը կարող է հանձնվել գործադիր մարմնի ձևավորումը և դրա լիազորությունների վաղաժամկետ դադարումը<sup>1</sup>: Անկախ այն բանից, թե ում իրավասության ներքո է գործադիր մարմնի ձևավորումը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 88-րդ հոդվածի համաձայն, այն միշտ հաշվետու է խորհրդին կամ ընդհանուր ժողովին, իսկ քանի որ խորհուրդը մշտապես գործող մարմին է, ապա կարելի է ենթադրել, որ ընկերության առօրյա գործունեության վերաբերյալ գործադիր մարմինը ավելի հաճախ է հաշվետվություններ ներկայացնում հենց խորհրդին և առավել սերտ համագործակցում է վերջինիս, այլ ոչ թե պարբերաբար գործող ընկերության ժողովի հետ:

Նույն հոդվածի համաձայն՝ գործադիր մարմինը կազմակերպում է խորհրդի ու ընդհանուր ժողովի որոշումների կատարումը, սակայն այս դրույթը բնավ չի նշանակում, որ գործադիր մարմինն օժտված չէ որոշումների կայացնելու գործում ինքնուրույնությամբ: Վերջինիս ինքնուրույնությունն արտահայտվում է իրեն վերապահված հարցերի շրջանակներում իր հայեցողությամբ կառավարչական որոշումներ կայացնելու հնարավորությամբ: Միաժամանակ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 90-րդ հոդվածի համաձայն, խորհրդի անդամները, ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ կազմակերպությունները և կառավարիչն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքերը և ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն ու ողջամտորեն,

<sup>1</sup> Հակառակ պարագայում՝ գործադիր մարմնի ձևավորումն ու լուծարումը պատկանում են ընդհանուր ժողովի իրավասությանը:

խոլսապետն անձնական և ընկերության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից: Արդյոք նշված անձինք գործե՞լ են ընկերության շահերին համահունչ, իրականացրե՞լ են իրենց իրավունքերը և ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները բարեխղճորեն ու ողջամտորեն՝ որոշում են վերադաս մարմինները, իսկ վեճ ծագելու դեպում՝ դատարանը: Չետևաբար գործադիր մարմնի պարտականությունները պատշաճորեն կամ ոչ պատշաճորեն կատարված լինելու մասին առաջին հերթին գնահատական տալ իս է, ինչպես վերևում արդեն նշեցինք, հենց խորհուրդը:

Այսպիսով, հաշվի առնելով գործադիր մարմնի դե ֆակտո ենթակայությունը առավել ապես խորհրդին, կարելի է եզրակացնել, որ գործադիր մարմինն իր գործունեության ընթացքում կարող է ձգտել առավել ապես գոհացնել կամ հաճոյանալ խորհրդին և փորձել առաջնորդվել հենց խորհրդի անդամների, այլ ոչ թե ընկերության իրական «սեփականատերերի»՝ բաժնետերերի շահերով:

Գործարքների կնքման մասին որոշումներ կայացնելու հարցում բաժնետիրական ընկերության ղեկավար մարմինների համագործակցության հստակ մեխանիզմների բացակայության մասին է վկայում նաև հետևյալը: Այսպես, «Բաժնետիրական ընկերության մասին» օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է գույքը, ու որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն, ընդ որում խորհրդից դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առնվում: Այն պարագայում, եթե գործարք կնքելու մասին որոշումը միաձայն չի ընդունվել, ապա խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունել հարցը ժողովում քննարկելու մասին: Այստեղ խնդիրն այն է, որ հարցի վերաբերյալ համաձայնության չգալու և համապատասխան որոշում չկայացնելու դեպքում խորհուրդն իրավունք ունի հարցը չհանձնել ընդհանուր

ժողովի հետագա քննարկմանը: Այս պարագայում, մենք համակարծիք ենք Վ. Դոլինսկայաի այն դիրքորոշմանը, որ անրաժետություն կավերոնշյալ դրությունում փոփոխություններ կատարել, որով խորհրդի ոչ թե իրավունքը, **այլ պարտականությունը** կդառնա գործարքների կնքման մասին որոշում կայացնելու վերաբերյալ հարցի քննարկումը հանձնել ընդհանուր ժողովին, եթե խորհրդի անդամները չկարողանան խնդրի առթիվ վերջնական համաձայնության գալ<sup>1</sup>:

Գործադիր մարմնի կողմից խոշոր գործարքների կնքման մասին հարցերը ընդհանուր ժողովի օրակարգում ներառելու իրավունքի բացակայությունը, ինչպես նաև խորհրդի կողմից գործադիր մարմնի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու իրավունքի առկայությունը, խորհրդի կողմից կայացված որոշումների դեֆակտո անվիճարկելիությունը, գործադիր մարմնի համար խորհուրդը դարձնում են յուրօրինակ մի «խոչընդոտ» խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումներ կայացնելու գործում:

Այդ կերպ՝ ստացվում է, որ միայն խորհուրդն է որոշում՝ խոշոր գործարքի կնքման մասին որոշում կայացնելու հարցը փոխանցել ընդհանուր ժողովի քննարկմանը, թե՞ ոչ, որ գործարքն արժե կնքել, որը՝ ոչ: Ավելին, հնարավոր են դեպքեր, որ գործադիր մարմինը չհամաձայնի ու ընդդիմանա հարցի քննարկումը ժողովին չփոխանցելու խորհրդի որոշմանը, իսկ խորհուրդն էլ համապատասխանաբար վաղաժամկետ դադարեցնի նրա լիազորությունները: Կարծում ենք, որ նման իրավակարգավորումները արհեստականորեն հանգեցնում են ընկերության կառավարման մի մարմնի դերի ուժճացման և մյուսի նսեմացման՝ ընկերության ղեկավար մարմինների հիերարխիայում գործադիր մարմինը պարզապես մղելով երկրորդ պլան:

Կարծում ենք՝ բավականաչափ արդարացված կլինեն գործադիր մարմնին հնարավորությունն ընձեռել ընդհանուր ժողովի օրակարգում ներառել այնպիսի գործարքների կնքման վերաբերյալ

<sup>1</sup> Տե՛ս **Долинская В.В.** Основные положения и тенденции акционерного права. Автореферат дисс... доктора ю. н. -М., 2006, էջ 36:

որոշումներ կայացնելու հարցերը, որոնց առարկայի արժեքը կազմում է ընկերության ակտիվների 25-ից 50 տոկոսը, և որոնց շուրջ խորհուրդը չի կարողացել միաձայն որոշման գալ, ինչպես նաև այն գործարքները, որոնց առարկա հանդսացող գույքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների հաշվապահական հաշվեկշռի 50 տոկոսը: Ընդ որում խորհրդի կողմից գործադիր մարմնի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հնարավորության առկայությունը գործադիր մարմնի համար չպետք է որևէ կերպ արգելի լինի հարցի քննարկումը ժողովին հանձնելու հարցում:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում խոշոր գործարքների կատարման ուղղությամբ ընկերության ղեկավար մարմինների համագործակցությունը իրականացվում է բաժնետիրական ընկերություններից տարբեր, քանի որ առաջինի պարագայում գործադիր մարմինը տիրապետում է լիազորությունների ավելի լայն շրջանակի: Այսպես, համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 37-րդ հոդվածի՝ հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է գործադիր մարմնի կողմից: Համաձայն նույն օրենքի 38-րդ հոդվածի արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է գործադիր մարմնի կողմից կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ դատն պահանջում ընկերության և նրա մասնակիցների շահերը: Գործադիր մարմնի կողմից ընդհանուր ժողով հրավիրելու դեպքում, ըստ 39-րդ հոդվածի, ժողովի օրակարգը ձևավորում է գործադիր մարմինը, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս նրան ընդհանուր ժողովի քննարկմանն անարգել ներկայացնել խոշոր գործարքներ կնքելու վերաբերյալ հարցերը: Նույն հոդվածի համաձայն՝ ընկերության ցանկացած մասնակից իրավասու է առաջարկ ներկայացնել ընդհանուր ժողովի օրակարգում լրացուցիչ հարցեր ընդգրկելու մասին, ընդ որում, որպես կանոն, գործադիր մարմինն իրավասու է փոփոխությունների կատարելու ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկվելու



նպատակով առաջարկված լրացուցիչ հարցերի ձևակերպումներում:

Ինչ վերաբերում է ընկերության խորհրդին, ապա «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն, խորհրդի ձևավորման դեպքում նրա իրավասությունները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ: Թեև օրենքը սահմանում է գործադիր մարմնի ընդհանուր և արտահերթ ժողովներ իրավիրելու իրավասությունը, այնուհանդերձ այն չի արգելում ընկերության ժողովին ցանկության դեպքում այդ իրավասությունները փոխանցել ընկերության խորհրդին: Օրենքի այս մոտեցումը մեզ ավելի արդարացի է թվում:

Չնայած սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների ղեկավար մարմինների միջև համագործակցության նշանակալի տարբերությունը՝ թե՛ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքը, թե՛ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը սահմանում են, որ գործադիր մարմինը հաշվետու է ընդհանուր ժողովին և ընկերության խորհրդին:

Պետք է ընդունել, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ղեկավար մարմինների միջև համագործակցության մեխանիզմի կառուցակարգը ավելի գերադասելի է, քան բաժնետիրական ընկերություններին: Կարծում ենք, որ բաժնետիրական ընկերությունների վերաբերալ վերը շարադրված խնդրի լուծման ընդունելի տարբերակ է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի համապատասխան դրույթների բովանդակային նմանեցումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի դրույթներին, ինչը կհանգեցնի նաև իրար հարազատ կազմակերպարավական երկու միավորների միևնույն, սակայն առանց էական հիմքերի տարբեր իրավակարգավորումներ ստացած ընթացակարգերի միասնական օրենսդրական կարգավորման: Մասնավորապես առաջարկում ենք բաժնետիրական ընկերություններում ընդհանուր ժողովի իրավիրման և դրա օրակարգի ձևավորման իրավասությունները

հանձնել գործադիր մարմնին՝ դրանք կանոնադրությամբ խորհրդին փոխանցելու հնարավորությամբ: Այդուհանդերձ, գործադիր մարմինը ցանկացած պարագայում պետք է օժտված լինի ընդհանուր ժողովի օրակարգում խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների կնքման վերաբերյալ հարցերի անարգել ներառման հնարավորությամբ:

Վերոնշյալ դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ, ի տարբերություն բաժնետիրական ընկերություններում գործող խորհրդի, որի դերը ինչպես արդեն նշվեց, իսկապես ուռճացված է, նման բան հնարավոր չէ ասել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործադիր մարմնի մասին, ավելի ին՝ վերջինս, ի տարբերություն բաժնետիրական ընկերություններում գործող խորհրդի, ոչ մի կերպ «խոչընդոտ» չի հանդիսանում ընկերության մասնակիցների համար իրենց հուզող հարցերը ժողովում բարձրացնելու հարցում: Հատկանշական է նաև այն, որ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները մասնավոր իրավունքի սուբյեկտներ են, որոնց մասնակիցները, որպես կանոն պետք է հնարավորություն ունենան ակտիվորեն մասնակցելու ընկերության անմիջական ղեկավարմանը, իսկ համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի՝ խոշոր գործարքներ կնքելու մասին որոշումների կայացման գործում ընկերության մասնակիցները դառնում են «երկրորդ օղակ»: Միաժամանակ հարկ է նշել, որ տարբեր կազմակերպությունների առանձնահատկություններից ելնելով կարող է պատահել այնպես, որ ոչ բոլոր կազմակերպությունները կարիք զգան կանոնակարգելու իրենց կողմից խոշոր գործարքներ կնքելու մասին որոշումների ընդհուլումը ընդհանուր կանոնի համաձայն: Մասնավորապես որոշ կազմակերպություններ կարող են ցանկանալ ավելի լայն լիազորություններով օժտել խորհրդին՝ նպատակ ունենալով կրճատել միանձնյա ղեկավար մարմնի լիազորությունները: Այս քայլը, առանձին վերցրած որևէ կազմակերպության առանձնահատկություններով պայմանավորված, արվում է հօգուտ ընկերության մասնակիցների շահերի

պաշտպանության՝ նպատակ հետապնդելով ապահովագրվել միանձնյա ղեկավար մարմնի հնարավոր «ճակատագրական» սխալներից: Ընդ որում, այս նույն գաղափարն է դրված նաև «Սահմանափակ պատասխանատվությանը ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածի մեջ, որով օրենսդիրը հնարավորություն է ընձեռում ընկերություններին ցանկության դեպքում կանոնադրությամբ սահմանել խոշոր գործարքների արժեքի ավելի ցածր շեմ:

Ռեզադրության արժանի հաջորդ հարցը բաժնետիրական ընկերություններում խորհրդի և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում մասնակիցների ժողովի ու խորհրդի՝ խոշոր գործարքներ կնքելու վերաբերյալ որոշումների կայացման համար անրաժեշտ քվորումն է: «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 61-րդ հոդվածը սահմանում է, որ խոշոր գործարքներ կնքելու մասին որոշումը խորհուրդն ընդունում է միաձայն, ընդ որում՝ խորհրդից դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առնվում: Ակամայից հարց է ծագում. արդյոք ովքե՞ր են համարվում խորհրդից դուրս եկած անդամներ:

Նախևառաջ հարկ է նկատել, որ հստակ չի սահմանվում, թե որոշման ընդունման համար խորհրդի բոլոր անդամների՞ ձայներն են հարկավոր, թե՞ միայն նիստին մասնակցող բոլոր անդամների<sup>1</sup>: «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 61-րդ հոդվածը սահմանում է, որ «...գործարքը կնքելու մասին որոշումը... պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն»: Այսպես, ելնելով ՌԴ, Բելառուսի, Ղազախստանի, Մոլդովայի և Նախկին ԽՍՀՄ այլ երկրների օրենսդրությունների համեմատական ուսումնասիրությունից<sup>2</sup>, որոնց տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրություններն անշուշտ

<sup>1</sup> Անրաժեշտ է նշել, որ խորհրդի նիստերի քվորումը, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի, առհասարակ սահմանվում է կանոնադրությամբ, բայց չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել:

<sup>2</sup> Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՌԴ Դաշնային օրենքը (ընդունված 26.12.95թ.), հոդված 48: «Տնտեսական ընկերությունների մասին» Բելառուսի Հանրապետության օրենքը (ընդունված 09.12.1992թ.), հոդված 552: «Բաժնետիրական ընկերությունների մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենքը (ընդունված 13.05.2003 թ.), հոդված 55: «Բաժնետիրական ընկերությունների մասին» Մոլդովայի Հանրապետության օրենքը (ընդունված 02.04.1997թ.), հոդված 332:

միմյանց շատ նման են<sup>1</sup>, կարծում ենք, որ խոսքն այս պարագայում խորհրդի բոլոր անդամների ձայների մասին է, ուստի այս բաց անրաժեշտ է լրացնել՝ հետագայում տարաբնույթ թյուրիմացություններից, այդ թվում նման հիմնավորմամբ խոշոր գործարքների անվավերության պահանջների վերաբերյալ վեճերից խուսափելու համար:

Անդրադառնալով մեր կողմից առաջադրված հարցին՝ փորձենք պարզել, թե ովքեր են համարվում խորհրդից դուրս եկած անդամներ: Ի սկզբանե նշենք, որ օրենքն այս հարցի շուրջ որևէ պարզաբանում չի տալիս: Պարզելու համար, թե ովքեր են համարվում խորհրդից դուրս եկած անդամներ, նախ անդրադառնանք ՌԴ օրենսդրությանը: Այսպես, ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածի համաձայն տնօրենների խորհրդից դուրս եկած անդամներ էին համարվում նրանք, որոնց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են ընդհանուր ժողովի կողմից, և մահացածները: Հետագայում՝ նույն օրենքում տեղ գտած փոփոխություններից հետո սահմանվեց, որ ընդհանուր ժողովի կողմից լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշում կարող է ընդունվել միայն տնօրենների խորհրդի բոլոր անդամների նկատմամբ: Ուստի դուրս եկած անդամներ կարելի է համարել խորհրդի մահացած անդամներին, ինչպես նաև, մեր օրենսդրության դեպքում, եթե ընկերության կանոնադրությունը թույլ է տալիս, ապա նաև այն անդամներին, որոնց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են ընդհանուր ժողովի կողմից: Ավելին, մենք կարծում ենք, որ խորհրդից դուրս եկած անդամներ պետք է համարել նաև դատարանի վճռով անհայտ բացակայող, սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչված անձանց (Քաղ. օր. հոդվածներ 31, 32, 44): Նշված հոդվածը

---

<sup>1</sup> ԽՅՄ փուլովումն ու դրա անդամ երկրների տնտեսությունների վերականգնման անրաժեշտությունը հանգեցին նոր իրավական համակարգի ստեղծման անրաժեշտության: Այդ ճանապարհին նրանց համար խոչընդոտ էր շուկայական հարաբերությունների իրավակարգավորման սեփական փորձի բացակայությունը: Նշված հանգամանքն ու ընդհանուր իրավական սկզբունքների ձևավորելու ձգտումը հազեցրին այն բանին, որ ԱՊՀ երկրների օրենսդրությունները, այդ թվում խոշոր գործարքների կարգավորման ոլորտում, իրար նման են:

մեկնաբանելիս ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումը սահմանել է, որ տվյալ հոդվածի մեկնաբանությունն ից բխում է, որ խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշում կայացնելու համար անրաժեշտ քվորումի առկայությունը ենթադրում է տնօրենների խորհրդի **գործող** բոլոր անդամների մասնակցությունը (քվեարկումը): Ընդ որում, խորհրդի ամեն անդամ անձամբ պետք է մասնակցի քվեարկությանը և չի կարող իր լիազորությունները որևէ կերպ փոխանցել այլ անձի<sup>1</sup>:

Այն պարզայում, երբ խորհրդին չի հաջողվում միաձայն որոշում կայացնել, տեղի է ունենում հետևյալ երկու զարգացումներից մեկը.

- գործարք կնքելու մասին խորհրդի որոշման բացակայության փաստը նախևառաջ բացառում է գործադիր մարմնի կողմից այն կնքելու հնարավորությունը,
- խորհրդի որոշմամբ գործարք կնքելու վերաբերյալ որոշման կայացման հարցը կարող է փոխանցվել ընդհանուր ժողովի հետագա քննարկմանը:

Անրաժեշտ է նշել, որ օրենքը բացառում է վերը նշված ընթացակարգերից որևէ շրջանցում, հետևաբար նույնիսկ այն դեպքում, երբ խորհրդի կողմ կամ դեմ քվեարկող անդամները միաժամանակ հանդիսանում են ընկերության բաժնետերեր և միասին տիրապետում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի 3/4-ին, միևնույն է նրանք իրավունք չունեն շրջանցելու սահմանված ընթացակարգը, ուստի խորհուրդը ցանկացած պարզայում խոշոր գործարքի կնքման մասին որոշումը պետք է կայացնի միաձայն:

Մենք հակված ենք ենթադրելու, որ, բացի մեր կողմից արդեն նշված դեպքից, երբ խորհուրդը չի կարողանում միաձայն որոշում կայացնել, խորհուրդը գործարքի կնքման վերաբերյալ որոշում կայացնելու հարցը պարտավոր է հանձնել ընդհանուր ժողովի քննարկմանը նաև այն դեպքերում, երբ խորհրդի նիստին պարզապես

---

<sup>1</sup> St' u Информационное письмо Президиума Высшего Арбитражного Суда РФ, 13.03.2001, № 62, «Обзор практики разрешения споров, связанных с заключением хозяйственными обществами крупных сделок и сделок, в совершении которых имеется заинтересованность» // Вестник ВАС РФ, 2001, №7:

չ են մասնակցել խորհրդի բոլոր անդամները, կամ խորհրդի բոլոր անդամների մասնակցությունը ինչ-ինչ պատճառներով հնարավոր չ է: Ուստի հարցը, թե ինչ անել, երբ խոշոր գործարք կնքելու վերաբերյալ որոշման կայացումը հնարավոր չ է անրաժեշտ քվորումի բացակայության պատճառով, օրենսդրական կարգավորման կարիք է զգում: Կարծում ենք, որ անրաժեշտ է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 1-ին պարբերության մեջ ավելացնել, որ խորհուրդը գործարք կնքելու մասին որոշման ընդունման հարցը **պարտալոր է** փոխանցել ընդհանուր ժողովի քննարկմանը **նաև** խորհրդի նիստին անրաժեշտ քվորումի բացակայության դեպքերում<sup>1</sup>:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար սահմանած է խոշոր գործարքների կնքման մասին որոշումների կայացման այլ կարգ: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածի ուժով միայն մասնակիցների ընդհանուր ժողովն է իրավասու խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշում կայացնել: Չարկ է նկատել, որ այս հոդվածը դիսպրոպիտիվ բնույթ է կրում: Մասնավորապես սահմանվում է, որ ընկերությունն իր նախաձեռնությամբ խորհրդի ձևավորված լինելու դեպքում կարող է կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը հանձնել իր գուտակտիվների 20-50 տոկոսը կազմող արժեքով գործարքները կատարելու մասին որոշումների ընդունման իրավասությունը: Կանոնադրությամբ կարող է նաև նախատեսվել, որ խոշոր գործարքներ կատարելու համար ընդհանրապես չի պահանջվում ընդհանուր ժողովի կամ ընկերության խորհրդի որոշումը:

Ուշագրավ է նաև այն, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքը, ի տարբերություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, չի սահմանում ձայների հարաբերակցությունը, որով խոշոր գործարքներ

---

<sup>1</sup> Մենք արդեն նշել ենք մեր դիրքորոշումն առ այն, որ միաձայն որոշում չ ընդունելու պարագայում հարցի քննարկումը ժողովին փոխանցելը պետք է դարձնել խորհրդի պարտականությունը, այլ ոչ թե իրավունքը, նրակողմից:

կատարելու մասին որոշումները կարող են ընդունվել ընդհանուր ժողովի, իսկ խորհրդի ձևավորված լինելու դեպքում՝ նաև խորհրդի կողմից: Կարելի է եզրակացնել, որ խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումների ընդունման ժամանակ ընդհանուր ժողովի քվորումը որոշվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ կետով, որով որոշվում են առհասարակ ժողովի իրավասության ներքո գտնվող այլ հարցերի կապակցությամբ կայացվելիք որոշումների ընդհունման համար անրաժեշտ ձայների քանակը, համաձայն որի՝ ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելիին տնօրինող մասնակիցները, իսկ ընդհանուր ժողովի կողմից որոշումները ընդունվում են մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է ընկերության խորհրդի կողմից որոշումների ընդունման, այդ թվում նաև խոշոր գործարքների կատարման մասին որոշումների ընդունման համար անրաժեշտ խորհրդի անդամների ձայների հարաբերակցության կարգավորմանը, հարց է առաջանում՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում և կանոնադրության մեջ այս հարաբերությունները կարգավորող դրույթների բացակայության պայմաններում ինչպես պարզել, թե ձայների ինչ հարաբերակցությամբ են ընդունվում քննարկվելիք գործարքների կատարման մասին որոշումները: Կարելի է ենթադրել, որ որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ՝ ելնելով այն հանգամանքից, որ կորպորատիվ օրենսդրությունում դադեկավար մարմինների կողմից որոշումների ընդհունման ընդհանուր սկզբունք է: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ այս պարագայում առաջարկվում է օրենքի անալոգիայի կիրառում, այսինքն՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի

<sup>1</sup> Այս մոտեցմանը կողմ է արտահայտվում Ե.Ա. Իգնատովան: St' u Игнатова Е.А. Комментарий к Федеральному закону «Об обществах с ограниченной ответственностью» (постатейный). -М.: «Ось-89», 2005, էջ 154:

համապատասխան դրույթի կիրառում, որն էլ ենթադրում է խորհրդի կողմից որոշումների միաձայն ընդհունում<sup>1</sup>: Նախ նշենք, որ ձայների հարաբերակցությունը սահմանող դրույթ օրենքով նախատեսված չէ, իսկ օրենքի անալոգիայի կիրառումը չի հակասի այս հարաբերությունների էությանը, քանի որ քննարկվելիք հարաբերություններն իրոք համանման հարաբերություններ են: Հետևաբար այս մոտեցումն արդարացի է թվում և կարծես թե բխում է Քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածում սահմանված հասկացության իմաստային նշանակությունից:

Այնուամենայնիվ, մեր կարծիքով, ավելի հստակ կլինի, եթե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների խորհրդի կողմից խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումների ընդունումը կանոնակարգող դրույթ ներառվի «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» 48-րդ հոդվածի ներքո, համաձայն որի. «Տնօրենների խորհրդի կողմից խոշոր գործարքների կատարման մասին որոշումը խորհրդի գործող բոլոր անդամների կողմից կայացվում է միաձայն, ընդ որում՝ հաշվի չեն առնվում խորհրդից դուրս եկած անդամների ձայները: Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ խոշոր գործարք կատարելու մասին որոշումը կարող է ընդունվել անդամների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ»:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի խոշոր գործարքների ինստիտուտը կարգավորող 48-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է, որ սույն հոդվածը չի կիրառվում մեկ մասնակցից բաղկացած ընկերությունների նկատմամբ, որն իրականացնում է տվյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները: Հետաքրքրական է, բայց նման դրույթ չի պարունակում «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը: Այս պարագայում կստացի, որ եթե բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարը, որը միաժամանակ ընկերության միակ բաժնետերն է ընկերության անունից խոշոր գործարքներ կնքելիս

<sup>1</sup> Այս տեսակետին է Ե.Ա. Իգնատովան: Տե՛ս **Игнатова Е.А.** Комментарий к Федеральному закону «Об обществах с ограниченной ответственностью» (постатейный). М.: «Ось-89», 2005, էջ 182:



ինքն իրեն պետք է քվեարկի կամ գրավոր համաձայնություն տրամադրի համապատասխան իրավասությունն ձեռք բերելու համար, ինչ առնվազն խելամիտ չէ: Հարկ է նկատել, որ նույնաման դրույթներ են պարունակում նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի՝ շահագրգռվածությամբ գործարքները կարգավորող 47-րդ հոդվածը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի շահագրգռվածությամբ գործարքները կարգավորող 65-րդ հոդվածը: Կարելի է ենթադրել, որ միգուցե բաժնետիրական ընկերությունների մասով օրենսդրի թույլ տված այս բացթողումը զուտ անուշադրության արդյունք է, ուստի կարծում ենք, որ այս բացը անպայմանկանորեն պետք է լրացնել, և նպատակահարմար կլինի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 60-րդ հոդվածի ներքո ավելացնել նոր կետ, որում գրեթե նույնությամբ կներառվի «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ կետը:

Այն դեպքերի մասին, երբ ընկերության միակ բաժնետերը միաժամանակ գործադիր մարմնի ղեկավարը չէ օրենսդիրը միանշանակ լռում է: Անշուշտ, երբ ընկերությունն ունի ընդհամենը մեկ բաժնետեր, կարիք չկա, և հնարավոր էլ չէ ընդհանուր ժողով կամ որևէ քվեարկություն անցկացնել: Ուսումնասիրելով տարբեր երկրների բովանդակային առումով մեր օրենսդրությանն առավել մոտ օրենսդրական պրակտիկան՝ կարծում ենք, պետք է սահմանել, որ այն ընկերություններում, որտեղ միակ բաժնետերը միաժամանակ գործադիր մարմնի ղեկավարը չէ, գործադիր մարմնի՝ խոշոր գործարքներ կնքելու լիազորությունը կարող է առաջանալ միակ բաժնետիրոջ կողմից տրված գրավոր համաձայնության հիման վրա:

Գրավոր համաձայնությունը ենթադրում է բաժնետիրոջ գրավոր ձևակերպված որոշումը կամ որևէ այլ գրավոր փաստաթուղթ, որում պետք է հստակ արտահայտված լինի բաժնետիրոջ՝ տվյալ գործարքի կնքմանն ուղղված կամքը (համաձայնությունը): Կարևոր է նշել, որ նման դրույթ է պարունակում նաև «Սահմանափակ

պատասխանավորությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, որի 42-րդ հոդվածը ընդհանուր ժողովի կողմից որոշումների ընդունման կարգը սահմանելիս նշում է, որ մեկ մասնակից ունեցող ընկերություններում ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ որոշումներ կարող են ընդունվել ընկերության միակ մասնակցի գրավոր որոշմամբ:

Պատշաճ կարգավորման չեն ենթարկված նաև այն հնարավոր իրավիճակները, երբ ընկերության միակ բաժնետերն այլ իրավաբանական անձ է: Այս բացը լրացնելիս, կարծում ենք, անրաժեշտ կլինի նաև հաշվի առնել Ռուսաստանի Դաշնության օրենսդրական պրակտիկան: Այսպես, ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումը սահմանել է, որ եթե ընկերության միակ բաժնետեր է որևէ իրավաբանական անձ, ապա խոշոր գործարք կատարելու մասին որոշման ընդունումը չի ենթադրում բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձի կողմից այդ կապակցությամբ ժողով կամ նիստ հրավիրելու անրաժեշտություն, այլ բավարար է միայն բաժնետեր կազմակերպության կողմից գրավոր համաձայնության տրամադրումը<sup>1</sup>:

Առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 60-րդ հոդվածում և «Սահմանափակ պատասխանավորությամբ ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածում<sup>2</sup> ավելացնել նոր կետ, համաձայն որի. «Եթե ընկերությունը բաղկացած է մեկ բաժնետիրոջից կամ մեկ մասնակցից, ապա խոշոր գործարքներ կնքելու վերաբերյալ բաժնետիրոջ կամ մասնակցի համաձայնությունը ձևակերպվում է գրավոր փաստաթղթի տեսքով, որում դրսևորվում է գործարք կնքելուս ուղղված կամք:

<sup>1</sup> Ст' у Информационное письмо Президиума Высшего Арбитражного Суда РФ, 13.03.2001, № 62, «Обзор практики разрешения споров, связанных с заключением хозяйственными обществами крупных сделок и сделок, в совершении которых имеется заинтересованность» // Вестник ВАС РФ, 2001, №7:

<sup>2</sup> Չնայած «Սահմանափակ պատասխանավորությամբ ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածը կարգավորում է քննարկվելիք հարաբերությունը, և այն կիրառելի է նաև խոշոր գործարքների դեպքում, սակայն, ելնելով օրենքի կողմից խոշոր գործարքների ինստիտուտի բովանդակային և նպատակային նշանակությունից, կարծում ենք, որ նպատակարար կլինի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի հետ մեկտեղ այս դրույթը ներառել նաև «Սահմանափակ պատասխանավորությամբ ընկերությունների մասին» օրենքում:

Համաձայնությամբ տրվում է գրավոր փաստաթղթի տեսքով նաև այն դեպքերում, երբ ընկերության միակ բաժնետերը կամ մասնակիցն այլ իրավաբանական անձ է»:

Հաջորդիվ հարց է առաջանում՝ արդյոք կարելի է կանոնադրությամբ սահմանել խոշոր գործարքների արժեքի այլ շեմ: «Սահմանափակ պատասխանավորությամբ ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածը սահմանում է. «խոշոր է հանդիսանում այն գործարքը... որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ ընկերության զուտ ակտիվների արժեքի 25 տոկոսից ավելին, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ խոշոր գործարքի այլ չափ»: Հետևաբար, հասկանալի է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում, այո, օրենքը թույլ է տալիս գործարքներն ըստ իրենց առարկայի արժեքի խոշոր համարելու այլ սահմանաչափի կիրառում: Կարելի է եզրակացնել, որ տվյալ դրույթը թույլ է տալիս ընկերության մասնակիցներին ոչ միայն ցանկության դեպքում բարձրացնել օրենսդրի կողմից սահմանված 25 տոկոսի շեմը, այլ նաև իջեցնել և դարձնել, օրինակ, 15 տոկոս: Խոշոր գործարքների արժեքի սահմանաչափի նվազման գաղափարը միանձնյա ղեկավար մարմնի լիազորությունների կրճատումն է:

Ինչ վերաբերում է բաժնետիրական ընկերություններին, ապա, ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, խոշոր գործարքները կարգավորող դրույթներն այդ ընկերություններին հնարավորություն չեն ընձեռում սահմանելու գործարքները, ելնելով դրանց առարկայի արժեքից, խոշոր համարելու այլ շեմ: Կարծում ենք, որ դա առնվազն արդարացի չէ, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, քննարկվելիք կազմակերպարավական ձև ունեցող կազմակերպությունները մասնավոր իրավունքի սուբյեկտներ են, որոնց մասնակիցները պետք է հնարավորություն ունենան ակտիվորեն մասնակցելու ընկերության անմիջական ղեկավարմանը, իսկ ելնելով տարբեր կազմակերպությունների առանձնահատկություններից՝ կարող է պատահել այնպես, որ ոչ

բոլոր կազմակերպությունները կարիք զգան կանոնակարգելու իրենց կողմից խոշոր գործարքների կնքման մասին որոշումների ընդհուլնումն այդպիսի որոշումներ կայցնելու ընդհանուր կանոնի համաձայն: Ավելիև, որոշ կազմակերպություններ հնարավոր ցանկանան, խոշոր գործարքի առարկայի արժեքի շեմը բարձրացնելով, ավելի լայն լիազորություններով օժտել գործադիր մարմինն, կամ հակառակը՝ ընդլայնեն խորհրդի լիազորությունները՝ նպատակ ունենալով կրճատել միանձնյա ղեկավար մարմնի լիազորությունները: Վերջին դեպքում, օրինակ, դա կարող է արվել՝ ելնելով որևէ առանձին վերցված կազմակերպության առանձնահատկություններից, հօգուտ ընկերության մասնակիցների շահերի պաշտպանության, նպատակ հետապնդելով ապահովագրվել միանձնյա ղեկավար մարմնի հնարավոր «ճակատագրական» սխալներից: Այս նույն գաղափարով առաջնորդվելով՝ օրենսդիրն այդպիսի հնարավորությունն է ընձեռել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին, սակայն անհասկանալի է, թե ինչու նման իրավունք չնախատեսել նաև բաժնետիրական ընկերությունների համար: Ուստի կարծում ենք, որ բաժնետիրական ընկերությունների մասին օրենքում պետք է համապատասխան փոփոխություն կատարել՝ բաժնետերերին օժտելով խոշոր գործարքի առարկայի արժեքի շեմը փոխելու հնարավորությամբ:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է, որ ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ խոշոր գործարքներ կատարելու համար չի պահանջվում ընդհանուր ժողովի կամ ընկերության խորհրդի որոշումը: Այսպիսով ստացվում է, որ մի կողմից վերոնշյալ օրենքն իմպերատիվ նորմերով սահմանում է խոշոր գործարքների կատարման վերաբերյալ որոշումների կայացման ընթացակարգերը, սակայն գուգահեռաբար թույլ է տալիս ընդհանրապես չկիրառել այդ դրույթները:

Փորձենք համեմատել, թե ինչպես են կանոնակարգվում խոշոր գործարքների վերաբերյալ հարաբերությունները անգլոամերիկյան

երկրներում:

Հատկանշական է, որ, բացի Հայաստանի Հանրապետության և մյուս ԱՊՀ երկրների օրենսդրություններից, այլ երկրների օրենսդրություններում նույնպես սահմանվում է սահմանփակ պատասխանատվությամբ ընկերության համար էական նշանակություն ունեցող գործարքների կատարման համար որոշում կայացնելու կամ դրանք հաստատելու անրաժեշտությունը: Այսպես, ԱՄՆ-ում 1996թ. ընդունվել է Սահմանփակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին համընդհանուր ակտը<sup>1</sup>, որը կարող է վավերացնել ցանկացած նահանգ: Համաձայն նշված ակտի 404 (c) (12) կետի՝ օտարման գործարքները, վարձակալության և ցանկացած այլ գործարք, որի արդյունքում ընկերության ամբողջ գույքը կամ դրամի մասը դուրս է գալիս կամ կարող է դուրս գալ ընկերության տիրապետումից, ենթակա է հաստատման ընկերության *բոլոր մասնակիցների կողմից*<sup>2</sup>:

Եվրոպական մի շարք օրենսդրություններում մասնավոր իրավունքի սուբյեկտների համար համապատասխան օրենսդրություններում ուղղակի նախատեսված չեն խոշոր գործարքների կարգավորման դրույթներ, սակայն ամրագրված է դրա հնարավորությունը, և, ելնելով պրակտիկայից, դրանք հաճախ են ներառվում հիմնադիր փաստաթղթերի մեջ:

Այսպես, խոշոր գործարքների կնքումը կարգավորող դրույթները բացակայում են 1898թ. մայիսի 20-ին ընդունված Սահմանփակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին Գերմանիայի օրենքում<sup>3</sup>: Սակայն փորձը ցույց է տալիս, որ որպես միանձնյա ղեկավար մարմնի լիազորությունների կրճատման միջոց այդպիսի դրույթներ հաճախ ներառվում են ընկերությունների կանոնադրության մեջ, քանի որ նման հնարավորություն

<sup>1</sup> Տե՛ս Uniform Limited Liability Company Act 1996 approved and recommended for the enactment in all the states, <http://www.uniformlaws.org/shared/docs/limited%20liability%20company/ullca96.pdf>

<sup>2</sup> Տե՛ս Neal R. Bevens Business Organizations and Corporate Law, New York, Thomson Delmar Learning, 2007, էջ 548:

<sup>3</sup> Տե՛ս Gesetz betreffend die Gesellschaft mit beschränkter Haftung in der Fassung der Bekanntmachung vom 20 Mai 1898 (RGB1. S. 846), BGB1. III/FNA 4123-1:

նախատեսվում է նույն օրենքի §37-ով:

Մասնավոր իրավունքի սուբյեկտների վերաբերյալ նման իրավիճակ է նաև Մեծ Բրիտանիայում, որտեղ, համաձայն «Ընկերությունների մասին» օրենքի<sup>1</sup>, այնպիսի իրավական ինստիտուտ, ինչպիսին է խոշոր գործարքների ինստիտուտը, պարզապես նախատեսված չէ: Սակայն, համաձայն նույն օրենքի 35 A հոդվածի հնարավոր է կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու միջոցով սահմանափակել ընկերության տնօրենի իրավասությունները, որով մասնավորապես կարող է սահմանվել, որ տնօրենի կողմից որոշ գործողություններ իրականացնելու նպատակով անրաժեշտ է ընդհանուր ժողովի հաստատող որոշում<sup>2</sup>:

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության և արևմտյան որոշ երկրների օրենսդրություններ՝ հարկ է ընդգծել, որ, ի տարբերություն վերը նշված երկրների ՀՀ-ում կորպորատիվ օրենսդրությունը ներմուծվել է ոչ շատ վաղուց և առայժմ կատարելագործման փուլում է: Ուստի կարծում ենք, որ մեր դեպքում կարիք չկա ոչ իմպերատիվ կերպով սահմանել բոլոր ընկերությունների կողմից խոշոր գործարքների մասին դրույթների պարտադիր կիրառումը, ոչ էլ կարիք կա նշված դրույթներին դիսպոզիտիվ բնույթով օժտելու և սահմանելու, թե ամեն ընկերությունն ինքն է որոշում արդյոք կարիք կա իր կանոնադրության մեջ ներառելու խոշոր գործարքների կատարումը կանոնակարգող դրույթներ, թե ոչ: Կարծում ենք, որ օրենսդրի կողմից «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում խոշոր գործարքների կնքումը կարգավորող դրույթներ նախատեսելու հետմեկտեղ այդ դրույթների կիրառումից հրաժարվելու հնարավորություն ընձեռելն ավելի նպատակահարմար քայլ է, քանի որ մի կողմից դա թույլ կտա գործադիր մարմնի հնարավոր սխալներից ավելի արդյունավետ պաշտպանված լինելու կորպորատիվ հարաբերությունների այն մասնակիցներին, որոնք դրա

<sup>1</sup> Տե՛ս Companies Act 1985, Act to consolidate the greater part of the Companies Act, 11 March 1985, [http://www.legislation.gov.uk/ukpga/1985/6/pdfs/ukpga\\_19850006\\_en.pdf](http://www.legislation.gov.uk/ukpga/1985/6/pdfs/ukpga_19850006_en.pdf):

<sup>2</sup> Տե՛ս Petri Mäntysaari Comparative Corporate Governance: Shareholders as a Rule-maker. Berlin, New York Springer, 2005, էջ 211-212:

կարիքը զգուժեն, իսկ մյուս կողմից, ելնելով տվյալ ընկերության առանձնահատկություններից, հնարավոր է դառնում հրաժարվել այդ մեխանիզմից, եթե դրանց կիրառումը նպատակահարջ է: Ուստի կարելի է եզրակացնել, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում օրենսդրի կողմից ցուցաբերած մոտեցումն առավելապես համապատասխանում է հայաստանյան իրավական իրականությանն այն պարզ պատճառով, որ այն ցուցաբերում է ճկունությունն նշված ընկերությունների գործունեության կարգավորման հարցում՝ թույլ տալով հաշվի առնել ամեն առանձին կազմակերպության առանձնահատկությունները:

Տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր գործարքների վերաբերյալ որոշումների կայացման ընթացակարգերի ուսումնասիրությունից մեզ մոտ տարատեսակ հարցեր առաջացան, որոնցից հետաքրքրական է, օրինակ, ընկերությունների համապատասխան մարմինների կողմից խոշոր գործարքների կնքման վերաբերյալ կայացված որոշումների ռեկվիզիտներին առնչվող հարցը: «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքները խոշոր գործարքների կնքման մասին որոշումների վերաբերյալ բովանդակային պահանջներ չեն ներկայացնում: Ենթադրվում է, որ տնտեսական ընկերությունների համապատասխան մարմինները գործարքների կնքման մասին որոշումների վերաբերյալ կազմում են արձանագրություններ, որտեղ մասնավորապես նշվում են թե ընդհանրապես ինչ գործարքի մասին է խոսքը, ինչ գործարք է հաստատվում, ում կողմից, ինչպես նաև գործարքն անհատականացնելու համար պետք է կայցվող որոշման մեջ նշվեն գործարքի առարկան, կողմերը, արժեքը և այլ էական պայմաններ: Առաջին հերթին հարց է ծագում, թե ինչու համապատասխան որոշումների տեքստում այս տեղեկությունների ներառման վերաբերյալ վերոնշյալ օրենքները ոչինչ չեն սահմանում, և

երկրորդ՝ ավելի հետաքրքրական հարցը, ի՞նչ է լինում, երբ համապատասխան մարմնի կողմից գործարքի կնքման մասին որոշում կայացնելուց հետո՝ մինչև գործարքի կնքումն ընկած ժամանակահատվածը, այդ ընկերության գործադիր մարմնի և կոնտրագենտի միջև հետագա բանակցությունների արդյունքում տվյալ գործարքի որոշ էական պայմաններ փոխվում են (օրինակ՝ գործադիր մարմինը կարողանում է իջեցնել գործարքի արժեքը կամ նույն գնով ձեռք բերել ավելի մեծ քանակությամբ գույք, քան պայմանավորվել էին նախկինում և այլն): Փաստորեն կստացվի, որ ընկերության համապատասխան մարմնի կողմից կայացվել է մեկ այլ գործարք կատարելու մասին որոշում, իսկ կնքվել է մեկ ուրիշ գործարք:

Համեմատության համար նշենք, որ ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 79-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ խոշոր գործարք կնքելու մասին որոշման մեջ պարտադիր կերպով պետք է նշվեն հաստատվող գործարքի էական պայմանները: Մասնավորապես պետք է նշվեն անձինք, որոնք գործարքի կողմ կամ կողմեր են, շահառու կամ շահառուներ են, գործարքի արժեքը, գործարքի առարկան և այլ էական պայմաններ: Ընդ որում, ընկերությունն իր նախաձեռնությամբ կարող է սահմանել գործարքների այլ էական պայմաններ, որոնք պետք է հաստատման մասին որոշում կայացնելիս պարտադիր նշվեն:

Հատկանշական է այն, որ ՌԴ Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը նման պահանջներ է ներկայացնում որոշումների ռեկվիզիտների նկատմամբ, իսկ ՌԴ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքում, ինչպես և մեր օրենսդրությունում, այս պահանջների վերաբերյալ որևէ դրույթ չկա: Այս հարցի վերաբերյալ Օ.Մ. Օզլոբլինան ՌԴ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի մասին իր մեկնաբանությունում, նշում է. «...Օրենքը նման որոշում կայացնելու համար չի նախատեսում պարտադիր կանոններ՝ հաշվի առնելով, որ համապատասխան հարաբերությունները կարող են



կարգավորվել ընկերության կանոնադրության<sup>1</sup>: Սակայն պետք է նկատել, որ ո՛չ ՀՀ ՍՊԸ, ո՛չ ՌԴ ՍՊԸ մասին օրենքն իմպերատիվ կերպով չէ սահմանում, որ կանոնադրությունը պետք է պարունակի նման որոշումներ կայացնելու պահանջների վերաբերյալ դրույթներ, հետևաբար կանոնադրության մեջ այդ դրույթների բացակայության դեպքում (ինչն առավել հավանական է) նշված հարցը պարզապես կմնաչ կարգավորված:

Կարծում ենք, որ խոշոր գործարքների կատարման մասին ցանկացած որոշում, անկախ այն բանից՝ ընդունվել է ընդհանուր ժողովի, թե խորհրդի կողմից, պետք է նշում պարունակի գործարքի առարկայի, դրա կողմերի ու շահառուների, գործարքի արժեքի և Քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածով սահմանված գործարքի մյուս էական պայմանների մասին<sup>2</sup>: Հակառակ պարագայում պարզապես կորչում է խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումների կայացման իմաստը, քանի որ ընկերության բաժնետերերը կամ մասնակիցները, չվերլուծելով գործարքի էական պայմանները, չեն կարող ընկերության համար կնքվող գործարքի նշանակության վերաբերյալ հստակ պատկերացում կազմել:

Ուստի կարծում ենք՝ խոշոր գործարքների կնքման մասին որոշումների ռեկվիզիտների հարցը չափազանց կարևոր է և զգում է օրենսդրական կարգավորման կարիք, իսկ ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 79-րդ հոդվածի 4-րդ մասի ներառումը նաև մեր օրենսդրությունում կարող է լուծել այս խնդիրը: Ենթադրվում է, որ նշված դրույթը ուղղված կլինի բաժնետերերի շահերի պաշտպանությանը և կնվազեցնի ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում կայացրած որոշումների վիճարկման հավանականությունները: Հնարավոր տարբերակ է նաև

<sup>1</sup> Տե՛ս **Оглоблина О.М.** Комментарий к Федеральному закону «Об обществах с ограниченной ответственностью». Под ред. **М.Ю. Тихомирова.** –М.: 2004, էջ 248:

<sup>2</sup> Քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի համաձայն՝ գործարքի կամ պայմանագրի էական պայմաններ են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանը, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն են ձեռք բերվի:

բաժնետերերի ընդհանուր ժողովի քվեաթերթիկի մեջ հակիրճ կերպով պարտադիր նշել գործարքի էական պայմանները: Դամի կողմից թույլ կտա ստանալ բաժնետիրոջ կողմից իր կամքն արտահայտելու վերաբերյալ անվիճարկելի ապացույցներ, իսկ մյուս կողմից ապացուցել բաժնետիրոջ կողմից խոշոր գործարքի հաստատման վերաբերյալ պարտավորությունների կատարման փաստը: Այս դրույթի ներառումը նախ կխոչընդոտի շահագրգիռ անձանց իրավունքների ոտնահարումը՝ բացառելով բաժնետերերի ոչ դիտավորյալ կամ դիտավորությամբ ոչ լիարժեք տեղեկացված լինելու հնարավորությունը:

Սակայն, միևնույնն է, անպատասխան է մնում այն հարցը, թե ինչպես վարվել այն դեպքերում, երբ գործարքի կնքման մասին որոշում կայացնելուց հետո ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում փոխվեն գործարքի որոշ էական պայմաններ: Այս հարցի պատասխանը գտնելու նպատակով ուսումնասիրեցինք տարբեր երկրների օրենսդրական պրակտիկան, սակայն, ցավոք, ոչ մի խելամիտլուծման առաջարկ չգտանք:

Կարծում ենք, որ նման իրավիճակները պետք է կարգավորվեն Քաղաքացիական օրենսգրքի առանց հանձնարարության, ի շահուրիշի գործողությունները կարգավորող 59-րդ գլխի դրույթներով, մասնավորապես՝ հոդվածներ 1048-ով, 1051-ով, 1054-ով և 1057-ով: Կարծում ենք, որ թե՛ բաժնետիրական, թե՛ սահմանափակ պատասանատվությամբ ընկերությունների համար խոշոր գործարքի մասին դրույթների մեջ գործարքների կատարման մասին որոշումների ռեկվիզիտներից բացի, պետք է ներառել նաև վերը շարադրված հնարավոր իրավիճակների կարգավորմանն ուղղված դրույթներ: Մասնավորապես գտնում ենք, որ ստեղծված իրավիճակի արդիական լուծում կարող է լինել այնպիսի դրույթների ներառումը, որոնք կսահմանեն, որ գործադիր մարմինը պարտավոր է առաջին իսկ հնարավորության դեպքում գործարքի էական պայմանների հավանական փոփոխման մասին հայտնել կազմակերպության համապատասխան մարմնին (կախված այն բանից, թե

ով է կայացրել գործարքի կատարման մասին որոշումը) և ողջամիտ ժամկետի ընթացքում սպասել ձեռնարկված գործողություններին հավանություն տալու կամ չտալու մասին նրա որոշմանը, եթե, իհարկե, սպասելու ժամանակահատվածը շահագրգիռ անձին լուրջ վնաս չի պատճառի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհուրդն ու առավել ապես ընկերության ժողովը միշտ է, որ կարող են ցանկացած պահի հասանելի լինել կամ ի վիճակի լինել հավանություն տալու մասին որոշում կայացնել, կարծում ենք, որ այդ դեպքերում կարելի է սահմանել, որ գործադիր մարմնի ղեկավարի գործողությունները պետք է ուղղորդվեն Քաղաքացիական օրենսգրքի 1048-րդ հոդվածով ամրագրված՝ իշահուրիշի գործողությունների սահմանմանը և 784-րդ հոդվածի՝ հանձնակատարի հանձնարարողի ցուցումներից շեղվելու իրավունքին համահունչ: Այսպես, առաջնորդվելով այս հոդվածների սահմանումներով, կարելի է նաև դրանք ընդհանրացնել ու խոշոր գործարքների համար սահմանել, որ եթե գործադիր մարմնի ղեկավարը որոշի առանց համապատասխան մարմնի հավանության կնքել գործարք որևէ էական պայմանի կամ պայմանների փոփոխմամբ, ապա դրանք պետք է կատարվեն գործի հանգամանքների համար անրաժեշտ հոգատարությամբ և շրջահայացությամբ՝ հաշվի առնելով շահագրգիռ անձի ակնհայտ օգուտը կամ շահը ու նրա իրական կամ հավանական մտադրությունները: Այնուամենայնիվ, գործադիր մարմնի կողմից իշահուրիշ կազմակերպության, սակայն առանց կազմակերպության համապատասխան մարմնի համաձայնության կատարված գործողությունները, որոնք եթե չարժանանան հավանության, ինչպես նաև այն գործողությունները, որոնք կատարվել են այն բանից հետո, երբ դրանց կատարողին հայտնի է դարձել, որ դրանք չեն արժանացել շահագրգիռ կողմի հավանությանը, վերջինիս համար չեն հանգեցնում գործողություններ կատարած անձի կամ երրորդ անձանց հանդեպ պարտականությունների:

Ամեն դեպքում, անկախ այն բանից, թե էական պայմանների

փոփոխմամբ գործարքը գործադիրը կնքել է համապատասխան մարմնի համաձայնությամբ, թե ոչ, նա պարտավոր է հաշվետվություններ կայացնել համապատասխան մարմնին, որը կարծում ենք, պարտադիր պետք է կցվի տվյալ խոշոր գործարքը կատարելու մասին խորհրդի կամ ընդհանուր ժողովի որոշմանը:

Մեկ այլ ուշագրավ բացթողում կարելի է համարել այն, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքները, սահմանելով խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումների ընդունման կարգը, անհասկանալի պատճառներով չեն նշում այն ժամկետները, որոնց ընթացքում այդ որոշումները պետք է ընդունվեն: Հարց է առաջանում՝ գործարք կնքելու վերաբերյալ որոշման կայացման անրաժեշտության դեպքում, երբ է հրավիրվում համապատասխան ժողով կամ նիստ, և կայացվում այդ որոշումը (հերթական ընդհանուր ժողովում, եռամսյակը մեկ հրավիրվող ժողովում, թե նման իրավիրճակներում արտահերթ ժողով է հրավիրվում, կամ խորհրդի նախագահն է խորհրդի արտահերթ նիստ հրավիրում): Կարծում ենք, որ սակարևոր ընթացակարգային հարց է, որը պետք է օրենքում հստակ կարգավորում ստանա:

Որոշ հեղինակներ հակված են այն կարծիքին, որ խոշոր գործարքների կնքումը հաստատող որոշումը կարող է կայացվել ցանկացած ժամանակ, ընդհուպ դատարանի կողմից այդ գործարքը անվավեր ճանաչելը: Այսպես, Ա. Մակովսկայան գրում է. «Համաձայն ՌԴ Քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի վիճարկելի գործարքը անվավեր կարող է ճանաչվել միայն դատարանի որոշմամբ, և հետևաբար, մինչև դատարանի կողմից գործարքն անվավեր ճանաչելու մասին որոշման կայացումը գործարքը չի կարող անվավեր համարվել և կարող է հաստատվել նշված օրենքի 10-րդ գլխի դրույթներին համապատասխան (նկատի ունենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՌԴ օրենքը)»<sup>1</sup>:

Վերոգրյալից հետո հարց է առաջանում՝ երբ է պետք կայացնել

<sup>1</sup> Տե՛ս **Маковская А.А.** Крупные сделки и порядок их одобрения акционерным обществом // Хозяйство и право. 2003, № 5, էջ 61:

գործարքի կնքումը հաստող որոշումը՝ մինչև գործարքի կնքումը, թե՞ մինչև գործարքի կատարումը, թե՞ կատարումից հետո: Ենթադրվում է, որ այս դեպքում խոսքը մինչև գործարքի կնքումը կամ գոնե մինչև կատարումը գործարքի կնքման վերաբերյալ որոշման կայացման մասին է, հակառակ դեպքում կատարված գործարքը կարող է հայտնվել չհաստատված լինելու վտանգի տակ: Փաստորեն հնարավոր է իրավիճակ, երբ շահագրգիռ անձի կողմից ներկայացվել է հայց՝ գործարքն անվավեր ճանաչելու մասին՝ այն հիմնավորմամբ, որ գործարքը խոշոր է և կնքվել է առանց ընկերության համապատասխան մարմնի որոշման: Չաջորդիվ՝ դատարանի կողմից հայցը վարույթ ընդունելուց հետո, խորհուրդը մինչև դատարանի կողմից այն անվավեր ճանաչելը որոշում է կայացնում հաստատել վիճարկվող գործարքը, և հետևաբար հայցը մերժվում է՝ հայցի հիմքը վերանալու պատճառով: Կարծում ենք, որ այնքան էլ տրամաբանակալ իրավիճակ չէ, բացի դրանից էլ՝ աննպատակ ծանրաբեռնում է դատարանների աշխատանքը:

Չետաբրբրական է, բայց նման իրավիճակ հնարավոր էր նաև Ռուսաստանի Դաշնության նույնիսկ, ավելի ին՝ ՌԴ Գերագույն դատարանը և ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանը բաժնետիրական ընկերության ներքին վերաբերյալ իրենց որոշումներում սահմանել էին, որ եթե խոշոր գործարքների կնքման կարգի խախտման հիմքով խոշոր գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցի քննության ժամանակ բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ համապատասխան դեպքերում խորհրդի կողմից կայացվի տվյալ գործարքի հաստատման մասին որոշում, ապա խոշոր գործարքի անվավերության վերաբերյալ հայցը ենթակա չէ բավարարման<sup>1</sup>: Չետագայում այդ որոշումները չեղյալ են ճանաչվել նույն դատարանների կողմից, սակայն անհասկանալի պատճառներով նման կանոններ սահմանող որոշումներ դեռ գործում են

<sup>1</sup> Ст' у О некоторых вопросах применения Федерального закона «Об акционерных обществах», Постановление Пленума ВС РФ, № 4; Пленума ВАС РФ № 8 02.04.97 г. // Вестник ВАС РФ, 1997, № 6:

Շահագրգռվածությունը ամբողջությամբ գործարքների<sup>1</sup> և սահմանափակ պատասխանատվությունը ընկերությունների կողմից կնքվող խոշոր գործարքների վերաբերյալ<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Շահագրգռվածությունը ամբողջությամբ գործարքների կնքման մասին որոշում կարող է կայացվել մինչև դրանց կառավարումը: Տե՛ս Օ некоторых вопросах применения ФЗ «Об акционерных обществах», Постановление Пленума ВАС РФ от 18 ноября 2003 г., № 19 // Вестн. ВАС РФ, 2004, № 1, կետ 34:

<sup>2</sup> Տե՛ս Постановление Пленума ВАС РФ О некоторых вопросах применения ФЗ «Об обществах с ограниченной ответственностью», № 90, 4-րդ փառք., կետ 20: Пленума ВАС РФ № 14 от 09 декабря 1999, Российская газета, 2000, 27 янв.:

## ԳԼ ՈՒ ԽՈՒ.

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔԿՈՂ ՇԱՅ ԱԳՐԳՈՒԿԱԾՈՒ ԹՅԱՄԲ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ

#### **§1. Շահագրգռվածությունը ամբողջությամբ գործարքների հասկացությունը նաև ու առանձնահատկությունը**

Բաժնետիրական ընկերություններում շահագրգռված անձ է համարվում ընկերության կողմից որոշակի գործարք կնքելու մեջ շահագրգռվածություն ունեցող ընկերությանը փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Այդպիսի անձանց որոշելու համար «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը պայմանականորեն սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց կարելի է համարել գործարքի կնքման մեջ պոտենցիալ շահագրգռվածություն ունեցող, ինչպես նաև այդ անձանց շահագրգռվածության առաջացման հիմքերը: Նշված երկու պայմանների առկայությունն էլ ձևավորում է այն անձանց շրջանակը, որոնք համարվում են ընկերություն գործարքներում շահագրգռված անձինք:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը կարող է համարվել գործարքում շահագրգռված հետևյալ հիմքերից գոնե մեկի առկայության պայմաններում.

- երբ նահանգիսանում է գործարքի կողմ,
- երբ մասնակցում է որպես միջնորդ,
- երբ մասնակցում է որպես ներկայացուցիչ,
- երբ վերը թվարկված անձնաց փոխկապակցված անձ է:

Ինչպես նշվեց, որպեսզի անձը համարվի ընկերության գործարքում շահագրգռված նույն օրենքի 2-րդ կետի համաձայն անրաժեշտ է, որ նա միաժամանակ լինի գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ, իսկ

փոխկապակցված են համարվում՝

- ընկերության խորհրդի անդամները,
- գործադիր մարմնի անդամները,
- գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող

իրավաբանական անձը կամ դրատնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված դեկլարման գործառույթներ իրականացնող այլ անձինք,

- վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը),
- ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք,

• «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:

Իսկ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետը **փոխկապակցված** է համարում երկու և ավելի անձանց, եթե՝

• նրանցից որևէ մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի (մյուսների) ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի քսան և ավելի տոկոսին.

• նրանցից որևէ մեկի տնօրենների խորհրդի անդամների կեսից ավելին, տնօրենը կամ նման իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձը միաժամանակ հանդիսանում է մյուսի (մյուսների) տնօրենների խորհրդի անդամ, տնօրեն կամ նման իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձ.

• նրանցից մեկը հսկում է մյուսին, կամ նրանք ընդհանուր հսկողության տակ են գտնվում, կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներով նրանցից որևէ մեկը մյուսի որոշումների վրա էականորեն ազդելու փաստացի կամ պայմանագրով ամրագրված հնարավորություն ունի.

• նրանք միևնույն ընտանիքի անդամներ են կամ տվյալ դեպքում գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Հարկ է նշել, որ շահագրգռվածությամբ գործարքների պարագայում գործարքի առարկան, ի տարբերություն խոշոր



գործարքների, միշտ է, որ առաջնային դեր ունի: Օրենքով սահմանված դեպքերում գործարքի առարկան կարող է ազդեցություն ունենալ միայն շահագրգռվածությամբ գործարքի կնքման մասին որոշում կայացնելու կարգի վրա: Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե՝

- գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը գերազանցում են ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը.

- գործարքը և/կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է ընկերության՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից 1:

Վերոնշյալ դեպքերում, բացի շահագրգռվածությամբ օժտված գործարքի սուբյեկտային կազմից, քննարկվելիք գործարքների անհատականացման չափանիշ է նաև դրանով պայմանավորված որոշումների կայացման հատուկ կարգը<sup>2</sup>:

Համեմատության համար նշենք, որ Ընկերությունների մասին 2006թ. անգլիական օրենքը<sup>3</sup>, ելնելով տնօրենի հնարավոր շահերից

<sup>1</sup> Հարկ է նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հասկանիշներին համապատասխանող գործարքը կարող է կնքվել խորհրդի որոշմամբ, եթե այդ գործարքն Ընկերությանը տրամադրվող փոխառությունն է:

<sup>2</sup> Տեսնեսական ընկերության կողմից կնքվող գործարքի շահագրգռվածության հասկացության վերաբերյալ տե՛ս **Գабов Л.В.** Сделки с заинтересованностью в практике акционерных обществ: проблемы правового регулирования. -М.: «Статут», 2005: Проблемы и перспективы правового регулирования сделок юридических лиц, требующих особого (специального) порядка их совершения // Журнал российского права. 2008, № 1: **Дедов Д.И.** Конфликт интересов. -М.: «Волтерс Клувер», 2004: **Бакшинскас В.** О некоторых вопросах одобрения сделок с заинтересованностью // Закон. 2007, № 3 և այլ և:

<sup>3</sup> Companies Act 2006, Chapter 4, [http://www.legislation.gov.uk/ukpga/2006/46/pdfs/ukpga\\_20060046\\_en.pdf](http://www.legislation.gov.uk/ukpga/2006/46/pdfs/ukpga_20060046_en.pdf)

(սույն օրենքի իմաստով՝ գործարքում շահագրգռված կարող է համարվել միայն տնօրենը կամ նրան «կապված անձինք»), նախատեսում է շահագրգռվածության ամբ գործարքներ կնքելու մասին համաձայնեցման երկու տարբեր ընթացակարգեր: Առաջինի դեպքում բավական է տնօրենի կողմից իր շահագրգռվածության մասին տնօրենների խորհրդին հայտնելը, իսկ երկրորդը ներառում է օրենքով հատուկ նախատեսված գործարքներ, որոնց հաստատման համար պահանջվում է ժողովի որոշումը: Խոսելով ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի մասին՝ նշենք, որ թե՛ ՌԴ վերոնշյալ օրենքը, թե՛ ՀՀ համանուն օրենքները շահագրգռվածության ամբ գործարքները չեն տարանջատում ըստ տեսակների կամ ուղղվածության, որպեսզի որոշեն, թե որ մարմինն է իրավասու կայացնելու գործարքի կնքման մասին որոշում: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքների իմաստով՝ որոշելու համար, թե շահագրգռվածության ամբ գործարքը կնքելու մասին որոշումը կայացվելու է խորհրդի, թե ժողովի կողմից, հիմք են ընդհունվում գործարքի առարկայի արժեքը<sup>1</sup> և խորհրդի չշահագրգռված անկախանդամների քանակությունը<sup>2</sup>:

Պետք է նշել, որ «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, ի տարբերություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, սահմանում է շահագրգռվածության ամբ անձնաց մի փոքր այլ շրջանակ: Համաձայն 47-րդ հոդվածի 1-ին կետի՝ գործարքները, որոնցում առկա է ընկերության խորհրդի անդամի, ընկերության գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձի շահագրգռվածությունը կամ ընկերության մասնակցի շահագրգռվածությունը, և որոնք ունեն ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի քսան և ավելի տոկոսը, չեն կարող կատարվել առանց ընդհանուր ժողովի համաձայնության:

Նշված անձինք ընկերության կողմից ճանաչվում են գործարք

<sup>1</sup> Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի հոդված 64, մաս 3:

<sup>2</sup> Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի հոդված 64, մաս 5:

կնքելու մեջ շահագրգռված այն դեպքերում, եթե նրանք կամ նրանց ամուսինները, ծնողները, երեխաները, եղբայրները, քույրերը (այսուհետ՝ փոխկապակցված անձինք՝

- հանդիսանում են գործարքի կողմ կամ ընկերության հետիրենց հարաբերություններում հանդես են գալիս երրորդ անձանց շահերից.

- տիրապետում են (յուրաքանչյուրն առանձին-առանձին կամ համակցությամբ) գործարքի կողմ հանդիսացող կամ ընկերության հետհարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի բաժնեմասերի (փայի, բաժնետոմսի) քսան և ավելի տոկոսին.

- պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ հանդիսացող կամ ընկերության հետ հարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի կառավարման մարմիններում.

- ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Նախփորձենք վերլուծել այս երկու օրենքներում առաջին իսկ հայացքից աչք ծակող տարբերությունները: Այդ նպատակով առաջին հերթին հնարավորինս հակիրճ և ընկալելի շարադրենք բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող շահագրգռվածությամբ գործարքների հասկացությունները:

Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գործարք կնքելու մեջ պոտենցիալ շահագրգռվածություն ունեցող անձ կարող է համարվել նա, ով գործարքի կողմ է կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ կամ վերջիններիս փոխկապակցված անձ է: Նույն օրենքի իմաստով փոխկապակցված են համարվում ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման

գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գործարք կնքելու մեջ պոտենցիալ շահագրգռվածություն ունեցող անձինք են համարվում ընկերության խորհրդի անդամը, ընկերության գործադիր մարմնի գործառույթները կատարող անձը կամ ընկերության մասնակիցը: Այս անձանց՝ գործարք կնքելու մեջ շահագրգռվածություն ունենալու փաստը որոշելու երկրորդ պայմանը՝ շահագրգռվածության հիմքերը, կառաջանան, եթե նրանք կամ նրանց փոխկապակցված անձինք (տվյալ դեպքում փոխկապակցված են համարվում ամուսինները, ծնողները, երեխաները, եղբայրներներն ու քույրերը)՝ գործարքի կողմ են կամ հանդես են գալիս երրորդ անձանց շահերից, տիրապետում են գործարքի կողմ կամ ընկերության հետ հարաբերություններում երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի բաժնեմասերի քսան և ավելի տոկոսին, պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ կամ երրորդ անձանց շահերից հանդես եկող իրավաբանական անձի կառավարման մարմիններում, ինչպես նաև ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Այս երկու դրույթների մանրակրկիտ ուսուսասիրության արդյունքում առաջ եկան մի քանի խնդրահարույց հարցեր: Նախ՝ բաժնետիրական ընկերությունների դեպքում շահագրգռված կարող է համարվել ընկերությանը փոխկապակցված անձը, ով գործարքի կողմ է կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ կամ վերջիններիս փոխկապակցված անձ է, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում շահագրգռված կարող են համարվել ընկերության խորհրդի անդամը, ընկերության գործադիր մարմնի գործառույթները կատարող անձը կամ ընկերության մասնակիցը կամ վերջիններիս փոխկապակցված անձինք:

Ստացվում է, որ, ի տարբերություն բաժնետիրական ընկերությունների, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին փոխկապակցված անձինք, որոնք միաժամանակ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ, չեն կարող համարվել շահագրգռված անձինք, եթե դա նախատեսված չլինի կանոնադրությամբ: Մեր այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձինք, այսինքն՝ խորհրդի անդամը, գործադիր մարմնի անդամը և ընկերության մասնակիցը, կարող են համարվել գործարքի կատարման մեջ շահագրգռված միայն այն դեպքում, երբ գործարքի կողմ են կամ ընկերության հետ հարաբերություններում հանդես են գալիս երրորդ անձանց շահերից և այլն (մանրամասն տե՛ս հ.47 մաս 1-ին, 2-րդ պարբ.): Հետևաբար, ելնելով այն հանգամանքից, որ վերոնշյալ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց շահագրգռվածության հիմքերը սահմանելիս օրենսդիրը նույն հոդվածի 2-րդ պարբերությունում որպես հիմք նշում է միայն գործարքի կողմ հանդիսանալը միաժամանակ լռելով միջնորդ կամ ներկայացուցիչ լինելու մասին, կարելի է եզրակացնել, որ վերջին երկու դեպքերում նշված անձինք, ինչպես նաև նրանց փոխկապակցված անձինք, շահագրգռված համարվել չեն կարող, եթե միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսանալու պարագայում շահագրգռվածության առաջացման հիմքերը հատուկ նախատեսված չլինեն ընկերության կանոնադրությամբ:

Հաջորդ էական բացթողումը վերաբերում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված փոխկապակցված անձանց շրջանակին: Այսպես, ի տարբերություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, բաժնետիրական ընկերություններում շահագրգռված անձին փոխկապակցված են համարվում ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ

դրա տնօրենը և այլն: Իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում շահագրգռված անձնաց փոխկապակցված են համարվում նրանց ամուսինները, ծնողները, երեխաները, եղբայրներները ու քույրերը: Ստացվում է, որ եթե գործարք կնքելիս բաժնետիրական ընկերության խորհրդի անդամը հանդիսանա գործարքի մյուս կողմին փոխկապակցված անձ, ապա նա կհամարվի շահագրգռված անձ<sup>1</sup>: Ինչ վերաբերում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ապա եթե նրա խորհրդի անդամը հանդիսանա մյուս կողմին փոխկապակցված անձ, օրինակ լինի գործարքի մյուս կողմում հանդես եկող ընկերության տնօրենի ոչ թե եղբայրը, այլ մտերիմ ընկերը, նա չի համարվի շահագրգռված անձ, քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ պարբերության Գ ենթակետը սահմանում է, որ միայն խորհրդի անդամի ծնողները, եղբայրը, քույրը, ամուսինն ու երեխաները, ովքեր պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում, կարող են հանդիսանալ նրան փոխկապակցված անձ<sup>2</sup>:

Հետաքրքրական է, բայց, ի տարբերություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների, բաժնետիրական ընկերություններում բաժնետերերն առաջին հայացքից չեն կարող հանդիսանալ շահագրգռված անձինք, քանի որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը փոխկապակցված անձանց իր այդ անչափ ընդգրկուն ցուցակում չի ներառել բաժնետերերին: Սակայն նույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ կետը միաժամանակ սահմանում է. «Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է

<sup>1</sup> Ընդ որում, հարկ է նշել, որ բաժնետիրական ընկերությունների դեպքում պարտադիր չէ, որ մյուս կողմը անպայման լինի շահագրգռված անձի քույրը, եղբայրը և այլն, թեև վերջիններս, համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի 4-րդ պարբ., նույնպես համարվում են փոխկապակցված անձինք:

<sup>2</sup> «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի Դ ենթակետը հնարավորություն է ընձեռում ընկերություններին իրանց կանոնադրությամբ նախատեսել այլ հիմքեր, երբ օրենքով սահմանված անձինք իրենց փոխկապակցված անձանց միջոցով կհամարվեն գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն ունեցող:

ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն և չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնություն ամբ...»: Անհասկանալի է, թե ինչի հիման վրա են շահագրգռվածություն և չունեցող բաժնետերերը համարվելու գործարքում շահագրգռե անձինք և ինչպես են զրկվելու ձայնի իրավունքից, եթե նրանց՝ քվեարկությունը մասնակցելու իրավունքը նշված պարագայում ոչ մի կերպ սահմանափակվելու հիմք չկա:

Խոսելով փոխկապակցված անձանց մասին՝ նշենք, որ այս եզրույթը հաճախ է օգտագործվում օրենսդրի կողմից, բայց միշտ է, որ տրվում է դրա հստակ բնորոշումը: Հատուկ գրականության մեջ ասվում է, որ ««փոխկապակցված անձինք» հասկացությունը ներդրվել է օրենսդրության մեջ բարիդրացիական մտադրություններով և մի կողմից ուղղված է խոչընդոտելու տնտեսության մոնոպոլիզացիային և ընկերությունների կողմից գործարքներ կնքելիս մրցակցության բացասական հետևանքները կանխարգելմանը<sup>1</sup>, իսկ մյուս կողմից՝ պաշտպանելու մանր բաժնետերերի շահերը»<sup>2</sup>:

Մեր օրենսդրությունը առաջնորդվում է փոխադարձ փոխկապակցվածության սկզբունքով, համաձայն որի՝ եթե ինչ-որ մեկը մյուսի փոխկապակցված անձն է, ապա այդ մյուսը անպայմանականորեն նաև նրա փոխկապակցված անձն է: Գրականության մեջ նշվում է. որպեսզի անձինք համարվեն փոխկապակցված, նրանց միջև պետք է կախվածություն լինի, որը թույլ կտա նրանց պայմանավորվելու և իրականացնել համաձայնեցված քաղաքականություն: Այդպիսի կախվածությունը կարող է լինել և՛ ուղղակի, և՛ անուղղակի: Օրինակ, մի քանի փոքր բաժնետիրական ընկերություններ ուղղակիորեն կախված են մեկ այլ ընկերությունից, որը տիրապետում է նրանց բաժնետոմսերի ղեկավար փաթեթին: Այս դեպքում ղեկավար փաթեթներին տիրապետող

<sup>1</sup> Տե՛ս Reinier H. Kraakman The Anatomy of Corporate Law: A Comparative and Functional Approach. Second edition. Oxford, 2009, էջ 155:

<sup>2</sup> Տե՛ս Варламова А. Н. Группа лиц и аффилированные лица: общее и особенное // Законодательство. 2007. N 12. էջ 27-32:

ընկերությունն ու փոքր բաժնետիրական ընկերություններն իրար փոխկապակցված կհամարվեն, ընդ որում այդպիսին կհամարվեն նաև փոքր բաժնետիրական ընկերությունները: Փոխկապակցված անձանց դասական օրինակ են համարվում հիմնական և դուստր կազմակերպությունները<sup>1</sup>:

Յետաքրքիր է, բայց մեր և արտասահմանյան երկրների օրենսդրությունների համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ մեր օրենսդրությամբ, հատկապես «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով սահմանված շահագրգռված ճանաչվող անձանց շրջանակը անհամեմատ մեծ է: Այսպես, «Առևտրային կազմակերպությունների մասին» Ֆրանսիայի №66-537 օրենքի՝ բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող 5-րդ գլխի 101-րդ հոդվածը շահագրգռված է համարում ցանկացած գործարք՝

• ընկերության և մեկ այլ կազմակերպության միջև, եթե ընկերության տնօրենը կամ գործադիր մարմնի ցանկացած անդամ մյուս կողմում հանդես եկող կազմակերպության սեփականատեր է, մասնակից, ղեկավար, գործադիր մարմնի անդամ կամ ղեկավար, վերստուգող հանձնաժողովի անդամ կամ այդ հանձնաժողովի ղեկավար,

• որում ընկերության տնօրենը անուղղակի շահագրգռված է կամ որում վերջինս կազմակերպության հետառնչվում է վստահված անձի միջոցով,

• վերը թվարկված անձանց ամուսիններն ու բարեկամները ներառվում են շահագրգռված անձանց շրջանակի մեջ այն դեպքում, եթե գործարքը նպատակ է հետապնդում այդ կազմակերպությունից վարկ ստանալ կամ այդ կազմակերպության կողմից երաշխիքներ ստանալ երրորդ անձանց առջև նրանց պարտավորությունների կատարման վերաբերյալ<sup>2</sup>:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» 1965թ. Գերմանիայի

<sup>1</sup> Տե՛ս **Варламова А.**, նշված աշխ., էջ 27-32:

<sup>2</sup> Տե՛ս **Могилевский С.Д.** Правовые основы деятельности акционерных обществ. Учеб.-практич. Пособие. -М.: «Дело», 2004, էջ 324:



օրենքը շահագրգռված անձանց շրջանակին է դասուում գործադիր մարմնի և վերստուգող հանձնաժողովի անդամներին, ընկերության ղեկավարներին և նման լիազորություններով օժտված անձանց, սակայն միայն նշված անձանց և այդ անձանց ամուսիններին կամ անչափահաս երեխաներին վարկեր տրամադրելու գործարքներում, ինչպես նաև նրանց անուկից հանդես եկող ցանկացած անձի վարկ տրամադրելու գործարքում<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ Գերմանիայի վերոնշյալ օրենքը գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն ունեցող անձանց շրջանակին չի դասուում բաժնետերերին: Հաշվի առնելով գերմանական իրավունքի նշանակալի ազդեցությունը ռուսաստանյան իրավակարգի ձևավորման վրա (թեև գերակշռում է ԱՄՆ-ի և ՄԲ-ի օրենսդրությունների ազդեցությունը<sup>2</sup>), ինչպես նաև այն, որ ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը բաժնետերերին դասուում է շահագրգռված անձանց շարքին, ռուսական գրականության մեջ առկա են տարբեր տեսակետներ գերմանական օրենսդրությամբ ընկերությունների բաժնետերերին շահագրգռված չհամարելու վերաբերյալ: Մասնավորապես, Ի. Խուլզինի կարծիքով Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 52-րդ և 62-րդ պարագրաֆի դրույթների մեկնաբանությունները ուղղակիորեն վկայում են այն մասին, որ բաժնետերերը կարող են ներառվել շահագրգռված անձանց ցուցակում<sup>3</sup>, իսկ Ե.Վ. Մակեևան պնդում է, որ բաժնետերերը գործարքում շահագրգռված համարվել չեն կարող, քանի որ նույն օրենքը շահագրգռված անձանց թվարկելիս ուղղակիորեն չի նշում բաժնետերերին<sup>4</sup>:

Դժվար չէ նկատել, որ նախ շահագրգռված անձանց շրջանակը

<sup>1</sup> Տե՛ս **Иванов И.Л.** Гражданско-правовая ответственность лиц, участвующих в управлении акционерным обществом, в праве России и Германии. Дисс... канд. ю. н. -М., 1999, էջ 99:

<sup>2</sup> Տե՛ս **Ломакин Д.В.** Корпоративные правоотношения: общая теория и практика ее применения в хозяйственных обществах. -М.: «Статут», 2008, էջ 261: **Тимохов А.Ю.** Общество с ограниченной ответственностью и закрытое акционерное общество // Государство и право. 1996, N 7, էջ 70–72:

<sup>3</sup> Տե՛ս **Хузин И.И.** Особенности совершения сделок с заинтересованностью и крупных сделок в хозяйственных обществах по гражданскому праву России и ФРГ // Юриспруденция. 2010, № 3(19), էջ 123-124:

<sup>4</sup> Տե՛ս **Макеева Е.В.** Сделки с усложненной процедурой заключения: форма vs. содержание // Корпоративный юрист. 2007, N 1:

վերը շարադրված դեպքերում «փոխկապակցված անձինք» եզրույթի միջոցով չի ընդլայնվում գրեթե մինչև անսահմանության, ինչպես նաև նշված դեպքերում բաժնետերերը չեն համարվում գործարքի կնքման մեջ արտեսցիալ շահագրգռվածություն ունեցող անձինք:

«Ընկերությունների մասին» 1985թ. անգլիական օրենքը<sup>1</sup> պարունակում է շահագրգռված անձանց համեմատաբար ավելի լայն շրջանակ: Համաձայն այդ օրենքի 346-րդ հոդվածի՝ ընկերության գործարքները կհամարվեն շահագրգռվածությամբ կնքված, եթե ներառեն ընկերության տնօրենին և նրա հետ կապված անձանց: Նշված օրենքը չի կորցրել իր հատկությունները Ընկերությունների մասին 2006թ. օրենքում<sup>2</sup>, որի 252-րդ և 253-րդ հոդվածները՝ որոշ փոփոխություններով հանդերձ, դեռ շահագրգռված են ճանաչում միայն ընկերության տնօրենին և նրան կապված անձանց<sup>3</sup>: «Կապված անձինք» եզրույթը իր բովանդակային բազմիմաստությամբ չի զիջում «փոխկապակցված անձինք» եզրույթին<sup>4</sup>, սակայն այն, միևնույնն է, նույնպես չի ներառում ընկերության բաժնետերերին<sup>5</sup>:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ գործարքում շահագրգռվածություն ունեցող անձանց շրջանակին բովանդակային առումով ամենից մոտ է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված անձանց շրջանակը: Այսպես, ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին դաշնային օրենքի» 81-րդ հոդվածի համաձայն գործարքի կնքման մեջ արտեսցիալ շահագրգռվածություն ունեցող անձինք են համարվում՝

- տնօրենների խորհրդի կամ վերստուգող հանձնաժողովի անդամները,

<sup>1</sup> Տե՛ս Companies Act 1985, Section 346  
[http://www.legislation.gov.uk/ukpga/1985/6/pdfs/ukpga\\_19850006\\_en.pdf](http://www.legislation.gov.uk/ukpga/1985/6/pdfs/ukpga_19850006_en.pdf)

<sup>2</sup> Companies Act 2006, Sections 252 & 253  
[http://www.legislation.gov.uk/ukpga/2006/46/pdfs/ukpga\\_20060046\\_en.pdf](http://www.legislation.gov.uk/ukpga/2006/46/pdfs/ukpga_20060046_en.pdf)

<sup>3</sup> ՄԲ-ում, Գերմանիայում և ԱՄՆ-ում շահագրգռվածությամբ գործարքներ կնքելիս տնօրենի իրավասությունների մասին ավելի մանրամասն տե՛ս **Andreas Cahn, David C. Donald** Comparative Company Law, Cambridge, 2010, էջ 442: **Saleem Sheikh** A Guide to companies Act. New York, Routledge, 2008, 10.83-10.84:

<sup>4</sup> Տե՛ս **Алексий П.В., Лмаглобели Н.Д., Галузо В.Н., Еремичев И.А. и др.**, Корпоративное право. Учебное пособие для вузов. Под ред.: И.А. Еремичева. -М.: Юнити, Закон и право, 2005, էջ 125:

<sup>5</sup> Տե՛ս **Kershaw David** Company Law in Context: Texts and Materials. Oxford, 2012, էջ 703-705:

- միանձնյա ղեկավար մարմնի և ի ազդրություններն իրականացնող անձը, այդ թվում նաև կազմակերպության կառավարումն իրականացնող ընկերությունը կամ անձը

- ղեկավարման կոլեգիալ մարմնի անդամը,

- բաժնետերը, որն իրեն փոխկապակցված անձանց հետ միասին տիրապետում է ընկերության 20% և ավելի ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերին,

- ընկերության համար պարտադիր որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող այլ անձինք,

- վերը նշված անձանց ամուսինները, ծնողները, երեխաները, եղբայրներն ու քույրերը, նրանց որդեգրողներն ու նրանց կողմից որդեգրվածները, ինչպես նաև նրանց փոխկապակցված անձինք:

Վերը նշված անձանց համար ընկերության կողմից կնքվող գործարքներում շահագրգռվածությունն առաջացման հիմքեր են՝

- նրանց գործարքի կողմ, շահառու, միջնորդ կամ ներկայացուցիչ լինելը,

- եթե տիրապետում են (յուրաքանչյուրն առանձին-առանձին կամ համակցության մեջ) գործարքի կողմ, շահառու, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի բաժնեմասերի քսան և ավելի տոկոսին,

- պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ, շահառու, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում,

- ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում:

Հարկ է նշել, որ ՌԴ վերոնշյալ օրենքի համաձայն ընկերության կողմից կնքվող գործարքը շահագրգռվածությամբ համարելու համար պարտադիր չէ օրենքով սահմանված գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն ունեցող անձանց ուղղակի մասնակցությունը. դա հնարավոր է նաև, եթե օրենքով սահմանված անձինք գործարքի անուղղակի շահառուներ են:

ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 81-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության կողմից կնքվող գործարքներում

շահագրգռվածության առաջացման հիմքեր կարող են նախատեսվել նաև ընկերության կանոնադրությամբ: Նշված հոդվածի վերաբերյալ կատարված մեկնաբանությունների համաձայն՝ գործարքում շահագրգռվածության առկայության մասին վկայող սահմանված հանգամանքների խումբը սպառիչ է: Մասնավորապես, կարող է սահմանվել, որ շահագրգռվածությունը կարող է առաջանալ, երբ 81-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ սահմանված անձինք տիրապետեն գործարքի կողմ կամ շահառու հանդիսացող իրավաբանական անձի բաժնեմասերի 20%-ից պակաս բաժնեմասերի (փայի, բաժնետոմսի)<sup>1</sup>:

Այդ կերպ կարելի է եզրակացնել՝ ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով սահմանված շահագրգռված անձանց շրջանակը ամենից ընդգրկունն է, և դրա պատճառը սահմանված անձանց ցուցակի մեծությունն է, ինչպես նաև՝ առաջին հերթին «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի 4-րդ պարբերությամբ նախատեսված բնորոշումը, համաձայն որի՝ փոխկապակցված են համարվում երկու և ավելի անձինք, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամներ են կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից: Այս բնորոշմամբ, կարծում ենք, օրենսդիրն ավելի հեռուն է գնացել, քանի որ դա բավականին ընդհանրացնող բնորոշում է և տարատեսակ մեկնաբանությունների շնորհիվ իր մեջ կարող է ներառել բազմաթիվ անձնաց: Ոչ մի երկրի օրենսդրություն փոխկապակցված անձանց այսքան լայն շրջանակ չի սահմանում: Թեև մեր օրենսդիրն, ի տարբերություն ՌԴ համապատասխան օրենքի, շահագրգռված անձնաց շարքին ուղղակիորեն չի դասում բաժնետիրական ընկերությունների բաժնետերերին, այնուամենայնիվ բաժնետերերը կարող են հանդիսանալ փոխկապակցված անձինք, եթե վերջիններս միաժամանակ զբաղեցնում են պաշտոններ ընկերության ղեկավար մարմիններում: Բացի դրանից, բաժնետերերը կարող են հանդիսանալ շահագրգռված անձինք, քանի որ «Բաժնետիրական

<sup>1</sup> См. у Комментарий к Федеральному закону «Об акционерных обществах». Под ред. Г.С. Шапкина. – М.: 2002, էջ 326:

ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն և չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ...», ինչպես նաև ելնելով այն բանից, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-րդ մասը թեև բաժնետերերին ուղղակի չի նշում որպես շահագրգռված անձ, այնուամենայնիվ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ մասը, լրացնելով վերոնշյալ օրենքում սահմանված փոխապակցված անձանց շրջանակը սահմանում է, որ փոխապակցված են համարում երկու և ավելի անձինք, եթե նրանցից որևէ մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի (մյուսների) ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի քսան և ավելի տոկոսին: Այսինքն՝ թեև նշված օրենքը բացահայտ չի նշում, սակայն ուղղակիորեն նկատի է առնում հենց բաժնետերերին, քանի որ եթե անձը տիրապետում է ընկերության բաժնային արժեթղթերին (բաժնետոմսերին), ապա նույնպես, քան բաժնետեր: Յետևաբար հարկ է նշել, որ թեև «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասը ուղղակիորեն չի անվանում բաժնետերերին որպես գործարքի կնքման մեջ պոտենցիալ շահագրգռվածություն և չունեցող անձ, սակայն, միևնույն է, նրանք համարվում են գործարքի կնքման մեջ պոտենցիալ շահագրգռվածություն և չունեցող անձ՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի, ինչպես նաև, բացի դրանից, ելնելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի մեկնաբանությունից:

Սույն աշխատանքի շրջանակներում խոշոր գործարքների հասկացության և առանձնահատկությունների մասին խոսելիս մենք անդրադարձել ենք տնտեսական ընկերությունների կողմից առօրյա տնտեսական գործունեության ընթացքում կնքվող խոշոր

գործարքների կնքման առանձնահատկությունների: Այս կապակցությամբ նշենք, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշված գործարքների ինստիտուտը կարգավորող 47-րդ հոդվածը նույնպես նախատեսում է այդ կատեգորիայի գործարքների առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքելու հնարավորություն: Մասնավորապես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, գործարքի կատարումը, որում առկա է շահագրգռվածությունը, չի պահանջում նույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված ընդհանուր ժողովի որոշումն այն դեպքում, եթե գործարքը կատարվում է ընկերության և մյուս կողմի միջև առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում, որը տեղ է գտել մինչև այն պահը, որից սկսած՝ գործարքը կատարելու մեջ շահագրգռված անձը ճանաչվում է այդպիսին՝ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան (որոշումը չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողով անցկացնելու օրը):

Այլ կերպ ասած՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքվող գործարքը կհամարվի այդպիսին, եթե այն կնքվել է անձի շահագրգռվածության առաջացման ու այդ շահագրգռվածության ճանաչման և հաջորդ ընդհանուր ժողովի անցկացման միջև ընկած ժամանակահատվածում<sup>1</sup>:

Վերը նշված պայմաններից գոնե մեկի բացակայության դեպքում շահագրգռվածությամբ գործարքի կատարման համար անրաժեշտ կլինի համապատասխան մարմնի որոշումը: Նշենք, որ այս դրույթի իմաստով՝ առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքված գործարքները ոչ թե այլևս չեն համարվում շահագրգռվածությամբ գործարքներ, այլ միայն վերացնում են գործարքը կնքելուց առաջ դրավերաբերյալ համապատասխան մարմնի

<sup>1</sup> Բնականոն կամ առօրյա տնտեսական գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս սույն աշխատանքի գլուխ 1, § 1:

կողմից որոշում կայացնելու անրաժեշտություները<sup>1</sup> հնարավորություն ընձեռելով այդ որոշումը կայացնել հետագայում:

Առաջին հերթին ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ օրենսդիրը սահմանում է, որ գործարքի կատարման մասին որոշում չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողովի անցկացումը, այսինքն՝ խոսքը ոչ միայն տարեկան ժողովի, այլ նաև հնարավոր արտաերթ ժողովների մասին է: Հատկանշական է նաև այն, որ քննարկվելիք գործարքների վերաբերյալ օրենսդիրը սահմանում է, որ գործարքի կատարման մասին որոշում կարող է կայացնել միայն ընդհանուր ժողովը: Հարց է առաջանում, թե ինչու նախատեսված չէ, որ ընկերությունում խորհրդի ձևավորված լինելու դեպքում շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշում կայացնելու իրավասությունը կարող է կանոնադրությամբ հանձնվել խորհրդին, ինչպես դա արված է բաժնետիրական ընկերությունների դեպքում շահագրգռվածությամբ գործարքների պարագայում, ինչպես նաև խոշոր գործարքների դեպքում՝ թե՛ բաժնետիրական, թե՛ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների պարագայում: Մենք միակարծիք ենք այն քաղաքացիագետների հետ, որոնք կարծում են, որ նման տարբերակումները ոչնչով հիմնավորված չեն<sup>2</sup>, հետևաբար գտնում ենք, որ պետք է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի ներքո ավելացնել, որ ընկերությունում խորհրդի ձևավորված լինելու դեպքում շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշման կայացման իրավասությունը ընկերության կանոնադրությամբ կարող է փոխանցվել ընկերության խորհրդին: Միաժամանակ, «Սահմանափակ պատասխանատվությամբ

<sup>1</sup> Տե՛ս **Габов А.В.** Сделки с заинтересованностью, Практика акционерных обществ. –М.: «Акционер», 2004, էջ 268:

<sup>2</sup> Նման կարծիք են հայտնել նաև քաղաքացիագետներ Ա. Մակոլովսկայան, Ա. Գաբովը, Մ. Տելյուկին: Տե՛ս **Габов А.В.** Сделки с заинтересованностью, Практика акционерных обществ. –М.: «Акционер», 2004, էջ 276: **Маковская А.А.** Крупные сделки и порядок их одобрения акционерным обществом // Хозяйство и право. 2003, № 5, էջ 88: **Телюкина М.В.** Комментарии к Федеральному Закону «Об акционерных обществах». –М.: «Волтерс Клувер», 2005, <https://www.lawmix.ru/commlaw/1541>

ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի ներքո անրաժեշտ է համապատասխան փոփոխություններով ներառել նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերը, որոնք կկարգավորեն խորհրդի կողմից որոշումների ընդունման կարգը<sup>1</sup>:

Վերադառնալով առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքվող շահագրգռվածությամբ գործարքների՝ հարկ է նկատել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում օրենսդիրը նման հնարավորություն չի նախատեսում: Փաստորեն, նույնիսկ եթե բաժնետիրական ընկերության կողմից նմանօրինակ գործարքները նախկինում բազմիցս հաստատվել են ընկերության համապատասխան մարմինների կողմից և ընկերության համար պարբերական բնույթ են կրում, դրանք, մինչև նույն է, առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքվող համարվել չեն կարող, քանի որ օրենքը դապարգապես չի թույլատրում:

Ենթադրվում է, որ այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, որպես կանոն, ավելի փոքր կամ սակավ քանակությամբ մասնակիցներ ունեն, քան բաժնետիրականները: Այդ իսկ պատճառով օրենսդիրը սահմանել է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում շահագրգռվածությամբ գործարքների կատարման համար անրաժեշտ է ժողովի որոշումը, սակայն, հաշվի առնելով այն, որ ժողովների գումարումն այնքան էլ հեշտ գործընթաց չէ, միաժամանակ նախատեսել է, որ առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքվող շահագրգռվածությամբ գործարքների կատարման վերաբերյալ ժողովի որոշումը չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողովի անցկացման օրը<sup>2</sup>:

Բաժնետիրական ընկերությունների դեպքում հաշվի է առնվել այն, որ ընդհանուր ժողովի գումարումը կարող է մի քանի անգամ ավելի բարդ լինել, քան սահմանափակ պատասխանատվությամբ

<sup>1</sup> Այս մասին առավել մանրամասն կխոսվի հաջորդ պարագրաֆում:

<sup>2</sup> Տե՛ս **Маковская А.А.** Сделки с заинтересованностью и порядок их одобрения акционерным обществом // Центр деловой информации еженедельника «Экономика и жизнь». -М., 2004, էջ 88-90:



ընկերությունների դեպքում, իսկ խորհրդի նիստ հրավիրելը այնքան էլ խնդրահարույց հարց չէ, բացի դրանից՝ ընկերության խորհուրդը մշտապես գործող մարմին է, իսկ ընկերության ժողովը՝ պարբերաբար: Ելնելով այս տրամաբանությունից՝ սահմանվել է, որ շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշում կայացնելու իրավասությունը պատկանում է խորհրդին, իսկ ժողովի իրավասությանն են թողնվել գործարքի առարկան կարևորող «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որոշ գործարքներ<sup>1</sup>:

Ելնելով Ա. Մակովսկայայի այս տրամաբանությունից, մասնավորապես նկատի առնելով, որ խորհրդի նիստ գումարելը բարդ չէ, օրենսդիրը բաժնետիրական ընկերությունների համար չի սահմանում, որ վերջիններիս կողմից կնքվող շահագրգռվածությամբ գործարքները կարող են կնքվել առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում, որի պարագայում չի պահանջվում խորհրդի կամ ժողովի որոշումը: Այս դեպքում անհասկանլի է, թե ինչու օրենսդիրը չի առաջնորդվում նույն տրամաբանությամբ նաև խոշոր գործարքների պարագայում: Մասնավորապես, թե՛ բաժնետիրական, թե՛ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող խոշոր գործարքների կատարման համար սահմանված է, որ չի պահանջվում համապատասխան մարմնի որոշումը, եթե խոշոր գործարքները կնքվում են առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ կարծում ենք, որ մեր օրենսդիրը ոչ թե պարզապես չի առաջնորդվել վերը շարադրված տրամաբանությամբ, այլ հակված ենք կարծելու, որ բաժնետիրական ընկերությունների կողմից կնքվող շահագրգռվածությամբ գործարքների մասով առօրյա տնտեսական գործունեության ինստիտուտի բացակայությունը ընդամենը օրենսդրական բացթողում է:

<sup>1</sup> Նման տեսակետ է հայտնել Ա. Մակովսկայան: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Маковская А.А.** Сделки с заинтересованностью и порядок их одобрения акционерным обществом // Центр деловой информации еженедельника «Экономика и жизнь». М., 2004, էջ 88-90:

Ինչպես նաև, եթե առաջնորդվենք Ա. Մակոլսկայ այի առաջարկած դիրքորոշմամբ, նաև անհասկանալի կմնա, թե ինչու օրենսդիրը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում չի սահմանում, որ շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշումը ընկերության խորհրդի ձևավորված և ինելու դեպքում կայացնում է ընկերության խորհուրդը:

Համեմատության համար նշենք, որ, ի տարբերություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ՌԴ նույնանուն օրենքի 83-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ ընդհանուր ժողովի որոշումը չի պահանջվում այն դեպքում, եթե շահագրգռվածությամբ գործարքը կատարվում է ընկերության և մյուս կողմի միջև՝ առօրյատնտեսական գործունեության շրջանակներում, եթե այն տեղ է գտել մինչև այն պահը, որից սկսած՝ գործարքը կատարելու մեջ շահագրգռված անձը ճանաչվում է այդպիսին: Այս դեպքում նույնպես գործարքը կատարելու մասին որոշումը չի պահանջվում մինչև ընկերության հաջորդ ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի նիստի անցկացումը: Ինչ վերաբերում է ՌԴ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքին, նշենք, որ այդ օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես և ՀՀ նույնանուն օրենքը չեն նախատեսում շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին ընկերության խորհրդի կողմից որոշում կայացնելու հնարավորություն՝ այդ իրավասությունը թողնելով միայն ընդհանուր ժողովին: ՌԴ հիշյալ օրենքի այս բացը դարձել է բազմաթիվ ռուս քաղաքացիագետների քննադատության առարկա<sup>1</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի ներքո անրաժեշտ է ներառել նոր մաս, համաձայն որի՝ ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշումը չի պահանջվում շահագրգռվածությամբ գործարքների կատարման համար, եթե գործարքը կատարվում է

<sup>1</sup> Տե՛ս **Маковская А.А.** Крупные сделки и порядок их одобрения акционерным обществом // Хозяйство и право. 2003, № 5, էջ 88: **Габов А.В.** Сделки с заинтересованностью, Практика акционерных обществ. –М.: Акционер, 2004, էջ 276: **Телюкина М.В.** Комментарии к Федеральному Закону «Об Акционерных Обществах». –М: «Волтерс Клувер», 2005, <https://www.lawmix.ru/commlaw/1541> և այլն:

ընկերության և մյուս կողմի միջև՝ առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում, եթե այն տեղ է գտել մինչև այն պահը, որից սկսած գործարքը կատարելու մեջ շահագրգռված անձը ճանաչվում է այդպիսին՝ սույն օրենքի 62-րդ հոդվածին համապատասխան (որոշումը չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողովի կամ խորհրդի նիստի անցկացման օրը):

Խոսելով բաժնետիրական ընկերությունների կողմից կնքվող գործարքներում շահագրգռվածության վերաբերյալ ընկերությանը տեղեկատվություն տրամադրելու մասին, ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ընկերության փոխկապակցված անձինք պարտավոր են ընկերության գործադիր մարմնին կամ կանոնադրությամբ սահմանված այլ մարմնի տրամադրել տեղեկատվություն՝

- այն մասին, որ իրենք հանդիսանում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ՝ մինչև գործարքը կնքելը,

- կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ՝ սույն կետով նախատեսված տեղեկատվությունն իրենց հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նշենք նաև, որ նույն հոդվածի համաձայն՝ ընկերության՝ շահագրգռվածության առկայությամբ ցանկացած գործարք պետք է ներկայացվի ընկերության տարեկան հաշվետվության մեջ՝ բացահայտելով ամբողջական և համապարփակ տեղեկատվություն գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ: Ընդ որում, շահագրգռվածության առկայությամբ որոշ գործարքներ կնքելիս, համաձայն նույն օրենքի, պետք է կնքվեն գործարքի առարկայի շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ անկախ գնահատողի եզրակացությունն ստանալուց հետո, որը նույնպես շահագրգռվածությամբ գործարքի վերաբերյալ մյուս տեղեկատվությունների հետ միասին պետք է ներկայացվի ընկերության տարեկան հաշվետվության մեջ:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր գործարքներն են ենթակա պարտադիր անկախ գնահատման: Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքի շուկայական արժեքը սահմանելու համար անկախ գնահատողի ծառայություններից ընկերությունը կարող է օգտվել խորհրդի որոշմամբ: Այն դեպքերում, երբ խորհուրդը գտնի, որ անկախ գնահատողի եզրակացության կարիք չի զգացվում, ապա ընդհանուր կանոնի համաձայն գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի որոշմամբ: Խորհուրդը գույքի շուկայական արժեքը որոշելիս առաջնորդվում է վերոնշյալ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ գույքի շուկայական արժեք է համարվում (ներառյալ ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի արժեքը), այն գինը, որով գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայներ վաճառելու այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայներ այդ գույքը ձեռք բերելու:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, երբ պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեքը, և շահագրգիռ անձ է խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում: Նույն հոդվածը սահմանում է նաև, որ հիսուն և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող ընկերությունում գույքի շուկայական արժեքը որոշվում է խորհրդի՝ գործարքի կնքմամբ շահագրգռվածություն չունեցող, անկախ անդամների կողմից, իսկ եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասի՝ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի

ձայների մեծամասնությամբ, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

Օրենքը սահմանում է, որ գույքի շուկայական արժեքը որոշում է խորհուրդը, սակայն չեն բացառվում խորհրդի կողմից իր իրավունքների չարաշահման հավանականությունը, ուստի գույքի արժեքի վերաբերյալ վեճեր քննելիս դատարանը ստիպված է գնահատել, թե խորհրդի կողմից գույքի շուկայական արժեքը որքանով է ճիշտ որոշված: Այսպես, թեև ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով գույքի շուկայական արժեքի որոշումը պատկանում է խորհրդի իրավասությանը, իսկ վերջինս գույքի շուկայական արժեքը պետք է որոշի՝ ելնելով ընկերության շահերից, սակայն դատարանը, գործի փաստերը համադրելով, իր վճիռներից մեկում հանգել է այն եզրակացության, որ ընկերության կողմից օտարվող և խորհրդի կողմից որոշված 1 քմ. հողատարածքի գինը, այնուամենայնիվ, իրականում ոչ մի կերպ չի համապատասխանում ո՛չ անկախ գնահատողի հաշվետվությամբ սահմանված գույքի շուկայական արժեքին, ո՛չ էլ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ներկայացրած արժեքին<sup>1</sup>:

Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի սահմանումը պարտադիր է նշված օրենքի 58-րդ հոդվածով սահմանված՝ ընկերության բաժնետերերին պատկանող բաժնետոմսերը հետգնելու, ինչպես նաև 64-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան գործարք կնքելու դեպքերում:

Ընկերության գործադիր մարմինը կամ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմին պարտավոր է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների հիման վրա վարել ընկերության փոխկապակցված անձանց ռեեստր:

Ծահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010թ. №ՀՅԲԴ4/0139/02/08 քաղաքացիական գործով որոշումը:

համապատասխան մարմնի որոշումների կայացումը չի պահանջվում նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում, մասնավորապես երբ ընկերությունը բաղկացած է մեկ մասնակցից, որն էլ իրականացնում է տվյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները: Նման դրույթ է պարունակում նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը, որի 65-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, եթե ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա շահագրգռվածության առկայության դեպքում սույն գլխի պահանջները չեն կիրառվում:

Չաջորդիվ հարկ է նկատել, որ շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշումների կայացումը չի պահանջվում նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով սահմանված այլ դեպքերում: Այսպես, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, այն գործարքները, որոնց կատարման մեջ առկա է շահագրգռվածություն, a priori դասվում են շահագրգռվածությամբ կնքված գործարքների շարքին, բացառությամբ այն դեպքերի, երբ, համաձայն 65-րդ հոդվածի 4-րդ մասի, ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, և երբ, համաձայն նույն օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի, բոլոր բաժնետերերի կողմից իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը, կամ իրականացվում է բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի փոխարկումը, կամ տեղաբաշխված բաժնետոմսերն ընկերության կողմից ձեռք բերելու դեպքում, եթե տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերի բոլոր սեփականատերերն ունեն հավասար իրավունք՝ համամասնորեն վաճառելու իրենց պատկանող տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերը:

Ի տարբերություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքը, սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերությունների

կազմակերպչորակական

առանձնահատկությունները հաշվի առնելով, միայն մի դեպքում չի պահանջում շահագրգռվածությունամբ գործարքների կատարման մասին համապատասխան մարմնի որոշում. երբ ընկերությունը բաղկացած է մեկ մասնակցից, որն էլ իրականացնում է տվյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները: Համեմատության համար նշենք, որ նման իրավիճակ է նաև Ռուսաստանի Դաշնությունում: Այսպես, ի տարբերություն շահագրգռվածությունամբ գործարքների վերաբերյալ ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, ՌԴ նույնանուն օրենքը սահմանում է շահագրգռվածությունամբ գործարքների կատարման ընդանուր կանոնից բացառությունների ավելի լայն շրջանակ: Այսպես, համաձայն նշված օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի, քննարկվելիք գործարքները կատարելու կանոնները չեն կիրառվում նաև այն գործարքների նկատմամբ, որոք կնքելու հարցում շահագրգռված են ընկերության բոլոր բաժնետերերը:

Համեմատելով մեր ու ՌԴ օրենսդրություններում առկա տարբերությունները՝ ակամայից հարց է ծագում՝ արդյոք ճիշտ կլինի դրանք ներառել նաև մեր օրենսդրություն: Մասնավորապես, խոսքը նախառաջ վերաբերում է այն դեպքերին, երբ գործարքի կնքման մեջ շահագրգռված են բոլոր բաժնետերերը: Կարծում ենք, որ նպատակահարմար կլինի այդ դրույթի ներառումը թե՛ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում, թե՛ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում, քանի որ հաշվի առնելով այն, որ օրենսդիրը չի պահանջում շահագրգռվածությունամբ գործարքների կատարման կանոններին համապատասխան կնքել այն շահագրգռվածությունամբ գործարքները, որոնք կնքվում են մեկ բաժնետեր (ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր) կամ մեկ մասնակից ունեցող ընկերության կողմից, որն էլ իրականացնում է ընկերության գործադիր մարմնի լիազորությունները, ինչը լիովին հիմնավոր է թվում: Տրամաբանական կլինի չպահանջել, որ

շահագրգռվածությամբ գործարքների կատարման կանոններին համապատասխան կնքվեն նաև այն գործարքները, որոնցում շահագրգռված կլինեն բոլոր բաժնետերերը կամ բոլոր մասնակիցները: Ճիշտ է, թեև օրենսդիրը սահմանում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում միակ մասնակիցը պետք է միաժամանակ հանդիսանա նաև գործադիր մարմնի ղեկավար, այնուամենայնիվ, ելնելով այն տրամաբանությունից, որ ընկերության իրական «սեփականատերեր» ու շահառուներ հանդիսանում են բաժնետերերը կամ մասնակիցները, կարծում ենք, որ այս դեպքում դա կարելի է տրամաբանական քայլ համարել:

Մեկ այլ հետաքրքրօրինակ հանգամանք է այն, որ թեև օրենքն այդ մասին լռում է, բայց շահագրգռվածությամբ գործարքների կատարման ընդանուր կանոնից բացառություն պետք է համարել նաև հրապարակային օֆերտաները: Այսպես, եթե ընկերությունն անում է առաջարկ, որից հետևում է առաջարկում նշված պայմաններով յուրաքանչյուր արձագանքողի հետ պայմանագիր կնքելու ընկերության կամքը (Քաղ. օր. հոդված 453), ապա նման գործարքը ոչ մի կերպ չի կարող համարվել շահագրգռվածությամբ գործարք, եթե նույնիսկ գործարքի մյուս կողմում հանդես եկող կողմը անվերապահորեն համարվի համապատասխան հոդվածի իմաստով գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն ունեցող անձ:

Մեր տվյալ մոտեցումն հիմնավարովում է հետևյալ երկու պայմաններով:

ա) Հրապարակային առաջարկ անող կազմակերպությունը չի կարող նախօրոք ենթադրել, որ այդ գործարքը կկնքվի իրեն փոխկապակցած համարվող անձի հետ, կամ նույնիսկ եթե իմանա այդ մասին, միևնույնն է, օրենսդրական առումով անհնար է, որ ընկերությունը նախօրոք կամ գործարքի կնքումից հետո որոշում կայացնի շահագրգռվածությամբ գործարքի կատարման մասին (գործարքի կատարմանը, այն կատարելուց հետո որոշման կայացման անհանարիչությունը կանդրադառնանք ստորև), բացի դրանից, նախօրոք



որոշում կայացնելն անհնար է գործարքի մյուս կողմի անհայտ լինելու պատճառով, իսկ գործարքի մյուս կողմի հայտնի լինելու դեպքում, այսինքն՝ ակցեպտը ստանալուց հետո նման որոշում կայացնելը կորցնում է իր նպատակային նշանակությունը, քանի որ ակցեպտը ստանալու պահից գործարքն արդեն համարվում է կնքված:

բ) Քաղաքացիական օրենսգրքի 452-դ հոդվածը սահմանում է օֆերտայի անհետկանչելիությունը, ուստի, եթե օֆերտա անելու հրավեր կատարած ընկերությունը ստանա մյուս կողմի առաջարկն ընդունելու մասին պատասխանը (ակցեպտ), ապա օֆերտա անող կազմակերպությունը իրավունք չունի այն հետ կանչելու, եթե նույնիսկ պարզվի, որ ակցեպտն ուղարկող կողմը օֆերտա անող ընկերությանը փոխկապակցված անձ է: Յետևաբար նման «շահագրգռվածությամբ» գործարքը ենթակա է կնքման անկախ այն բանից, թե օֆերտա անող ընկերության ընդանուր ժողովը կկայացնի գործարքի կատարման մասին որոշում, թե ոչ:

Ուստի կարծում ենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասում պետք է ավելացնել, որ շահագրգռվածության առկայության դեպքում ընկերության՝ գործարքներ կնքելու վերաբերյալ սույն գլխի պահանջները չեն կիրառվում նաև այն դեպքերում, եթե ընկերության և մյուս կողմի միջև կնքվող գործարքները հրապարակային են (օֆերտա) (Քաղ. օր. հոդված 451): «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 5-րդ մասում համապատասխանաբար պետք է սահմանել, որ շահագրգռվածության առկայության դեպքում սույն հոդվածը չի կիրառվում, եթե ընկերության և մյուս կողմի միջև կնքվող գործարքները հրապարակային են (Քաղ. օր. հոդված 451):

Ինչ վերաբերում է գործարքի կատարման մասին որոշումը այն կնքելուց հետո կայացնելուն, նշենք, որ խոշոր գործարքների վերաբերյալ նման դիրքորոշում հայտնել էր Ա. Մակոժսկայան, ինչին մենք արդեն անդրադարձել ենք սույն աշխատանքի 1-ին գլխի 2-րդ պարագրաֆի շրջանակներում: Իսկ շահագրգռվածությամբ

գործարքների վերաբերյալ նման մոտեցում հայտնել է Ի. Ֆախգուտդինովը, համաձայն որի. «... գոյություն ունեցող կարգավորումները հաշվի առնելով պետք է բացառել այն հնարավորությունը, որ առանձին դեպքերում դատարանը կարող է հաշվի առնել նաև գործարքի կնքումից հետո այդ գործարքի հաստատված լինելու հանգամանքը, եթե դրա կատարման և կատարման մասին որոշման կայացումը վկայում է, որ դրանք ընկերությանը տնտեսական վնաս չեն հասցնում: Այդպիսի մոտեցումը, եթե իհարկե այն թույլատրելի համարվի, հնարավոր է երկու պայմանների դեպքում (բացի արդեն նշվածից). նախևառաջ՝ գործարքի կատարման մասին որոշումը պետք է համապատասխանի օրենքի պահանջներին, ինչպես նաև՝ գործարքի կատարման մասին որոշումը պետք է կայացրած լինի այդ որոշումը կայացնելու իրավասություն ունեցող մարմինը մինչև դատարանի կողմից գործարքի վավերության մասին վեճի քննարկումը»<sup>1</sup>: Մասամբ համաձայնելով վերոնշյալ հեղինակի դիրքորոշմանը՝ այնուամենայնիվ ստիպված ենք գոնե մեր օրենսդրության պարագայում մատնանշելու դրա կիրառման անսպասակալարմարությունը:

Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 65-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ բաժնետերերն իրավունք ունեն պահանջելու անվավեր ճանաչել սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքը, ինչպես նաև պահանջելու գործարքում շահագրգիռ ճանաչված անձանց կողմից գործարքի հետևանքով պատճառված վնասի հատուցում: Յետևաբար կարծում ենք, որ Ի. Ֆախգուտդինովի առաջարկած դիրքորոշման և բաժնետերերի պահանջով գործարքն անվավեր ճանաչելու մասին վերոնշյալ դրույթի միջև հակասություն կա: Այսպես, օրենսդիրը սահմանում է օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքը անվավեր ճանաչելու բաժնետերերի անպայմանական իրավունքը, ուստի եթե նման պարագայում դատարանը որոշի, որ վիճարկվող գործարքը կատարելու մասին վիճարկումից

<sup>1</sup> Ст' у Комментарий к ФЗ «Об акционерных обществах». Под ред. Г.С. Шапкиной. -М.: Юридический Дом «Юстицинформ», 2002, էջ 333:

հետո կայացված որոշման ռեկվիզիտները պահպանված են, կամ համապատասխան մարմնի կողմից է կայացվել որոշում և այլն, և հիմնվելով այդ ամենի վրա՝ գործարքը թողնի ուժի մեջ, ապա կարծում ենք, որ դա կարող է համարվել բաժնետերերի իրավունքի խախտում, քանի որ գործարքը փաստացի կնքվել է օրենքի խախտմամբ, մասնավորապես՝ գործարքը կատարելու պահին չի եղել համապատասխան որոշում:

Բացի դրանից, նույն հոդվածը սահմանում է, որ բաժնետերերը կարող են շահագրգիռ անձից պահանջել գործարքից ստացված շահույթի վերադարձ ընկերությանը: Այս դեպքում փաստորեն ոտնահարվում է նաև բաժնետերերի այս իրավունքը, քանի որ, եթե դատարանը գործարքը թողնում է ուժի մեջ, հետևաբար նա չի պարտադրի նաև մյուս կողմին վերադարձնել գործարքից ստացված շահույթը (եթե գործարքից ստացված շահույթի փոխարեն սահմանված լիներ ընկերության բաց թողնված օգուտը, միգուցե դա հնարավոր լիներ), իսկ եթե, այնուամենայնիվ, որոշի վերադարձնել ստացված շահույթը, արդեն կխախտվեն մյուս կողմի՝ կոնտրագենտի իրավունքները: Այս հանագամանքն ավելի է ամրապնդվում նույն հոդվածի շարունակությամբ, որի 7-րդ մասի համաձայն՝ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարքի հաստատումը գործարքում խախտում կատարած անձին չի ազատում սույն օրենքի խախտմամբ կնքված գործարքի հետևանքով ընկերությանը կամ բաժնետերերին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից:

Ուստի կարծում ենք, որ միգուցե իրոք տրամաբանական է ընկերություններին հնարավորություն ընձեռել շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշումը կայացնել այն կատարելուց հետո, եթե, իհարկե, դրա կատարման արդյունքում ընկերությունը էական վնասներ չի կրել, սակայն դա կարող է առաջացնել տարբեր դրույթների միջև բախումներ, ինչպես նաև, բացի դրանից, դա կարող է բազմաթիվ խճճված դատական գործերի

առաջացման պատճառ դառնալ, որտեղ դատարանն անդադար փորձելու է պարզել՝ արդյոք ընկերությունը կամ դրա բաժնետերերից որևէ մեկը ուղղակի կամ անուղղակի վնաս կրել է, թե ոչ:

Այս կանոնից միակ բացառություն կարելի է համարել առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում կնքված շահագրգռվածությամբ գործարքները, որոնք կնքելու համար, հաշվի առնելով դրանց բնույթը, օրենսդիրը ուղղակիորեն սահմանում է, որ համապատասխան մարմնի կողմից որոշման կայացումը կարելի է հետաձգել մինչև հաջորդ ընդհանուր ժողովի անցկացումը:

Նշվածը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ գործարքի կատարման մասին որոշումը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածություն, համապատասխան մարմնի նույն պետք է կայացնի մինչև գործարքի կատարումը, ինչպես որ դաբխում է համապատասխան դրույթների մեջ դրված գաղափարից:

Անրաժեշտ է նշել նաև, որ համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 6-րդ մասի, եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի VIII գլխի դրույթները (նկատի ունի խոշոր գործարքների կնքումը կարգավորող դրույթները): Հատկանշական է, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքը նման դրույթ չի պարունակում: Ըստ Օ. Գուտնիկովի՝ դա պայմանավորված է բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից խոշոր գործարքների կատարման կարգի սկզբունքային տարբերությամբ, որը պայմանավորված է օրենքի համապատասխան դրույթների սահմանման իմպերատիվության մակարդակով<sup>1</sup>: Մասնավորապես, բաժնետիրական ընկերությունները չեն կարող իրենց կանոնադրությամբ սահմանել, որ իրենք չեն կիրառելու խոշոր գործարքների կատարումը

<sup>1</sup> Առավել մանրամասն տե՛ս սույն աշխատանքի գլուխ 1, § 2:

կարգավորող օրենսդրական նորմերը<sup>1</sup>, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին նման հնարավորություն տրված է օրենքով<sup>2</sup> (տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի հոդված 48, մաս 5):

Այստեղ մեզ խնդրահարույց է թվում մեկ այլ հարց: Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ «եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի VIII գլխի դրույթները»:

Նշված դրույթը բառացի մեկանաբանելու դեպքում, ստացվում է, որ եթե գործարքը միաժամանակ և՛ խոշոր է, և՛ շահագրգռվածությամբ պետք է միաժամանակ կիրառվեն և՛ խոշոր գործարքների կնքումը, և՛ շահագրգռվածությամբ գործարքների կնքումը կանոնակարգող դրույթները: Տվյալ պարագայում անհասկանալի է դառնում, թե, օրինակ, գործարքի կատարման մասին որոշումը, որը միաժամանակ և՛ խոշոր է, և՛ շահագրգռվածությամբ, ու՞մ կողմից պետք է կայացվի, կամ ձայների ի՞նչ հարաբերակցությամբ կամ առհասարակ օրենքի ո՞ր դրույթներին պետք է նախապատվություն տալ<sup>3</sup>: Կարծում ենք, որ այս դրույթը

<sup>1</sup> Բացառություն են կազմում միայն փակ բաժնետիրական ընկերությունները (եթե ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի քանակը չի գերազանցում 10-ը), որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 65-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով կարող են կանոնադրությամբ նախատեսել դրույթներ շահագրգռվածությամբ գործարքների վերաբերյալ նորմերի պահանջները մասնակի կամ ամբողջությամբ չկիրառելու մասին:

<sup>2</sup> Տե՛ս **Гутников О.В.** Недействительные сделки в гражданском праве: Теория и практика оспаривания. -М.: «Бератор-Пресс», 2003, էջ 437:

<sup>3</sup> Օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի՝ խոշոր գործարքների կնքումը կարգավորող դրույթները սահմանում են, որ խորհուրդը որոշումներն ընդունում է միաձայն, իսկ նույն օրենքի շահագրգռվածությամբ գործարքների կնքումը կարգավորող դրույթները սահմանում են, որ այդպիսի գործարքների կատարման մասին որոշումները ընդունում են ձայների մեծամասնությամբ: Մեկ այլ դեպքում՝ շահագրգռվածությամբ գործարքների պարագայում, գործարքը կքնելու մասին որոշումը կայացնում է ժողովը, եթե գործարքի առարկայի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների 10%-ը, իսկ խոշոր գործարքների դեպքում որոշումը կայացնում է ժողովը, եթե գործարքի առարկայի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների 50%-ը:

պարզապես անհասկանալի խառնաշփոթ և օրենքի կոլիզիա է ստեղծում: Այս հնարավոր քառսից խուսափելու տարբերակ է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված սահմանումը փոփոխելը և սահմանել որ «եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ շահագրգռվածությամբ գործարքների կնքումը կանոնակարգող IX գլխի դրույթներին համաձայն»: Ինչպես նաև կարծում ենք, որ նույնանման դրույթ է պետք ներառել նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի ներքո<sup>1</sup>:

Համեմատության համար նշենք, որ ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 79-րդ հոդվածի 5-րդ կետը նույնպես սահմանում է, որ եթե գործարքը միաժամանակ և՛ խոշոր է, և՛ շահագրգռվածությամբ, պետք է կիրառվեն շահագրգռվածությամբ գործարքների կնքումը կանոնակարգող դրույթները:

Մեկ այլ շփոթություն առաջացնող հանգամանք առկա է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի, որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե՝

ա) գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը գերազանցում են ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը:

Օրենսդրի օգտագործած այս ձևակերպմամբ անհասկանալի է դառնում՝ ընկերության ժողովի կողմից գործարք կնքելու մասին

---

<sup>1</sup> Այս դրույթը, բնականաբար չի կարող կիրառվել այն ընկերությունների նկատմամբ, որոնք իրենց կանոնադրությամբ ցանկություն են հայտնել հետ կանգնել խոշոր գործարքների կնքումը կարգավորող դրույթների կիրառումից:

որոշումը ընդունվում է, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքն է գերազանցում ընկերության ակտիվների 10 տոկոսը, թե երբ գործարքով գույք ձեռք բերելիս տվյալ գործարքով վճարման ենթակա գումարն է գերազանցում ընկերության ակտիվների 10 տոկոսը: Օգտագործված ձևակերպման բառացի մեկնաբանման դեպքում ստացվում է՝ օրենսդիրը նկատի է ունեցել, որ գործարքի կնքման մասին որոշում կընդունվի ժողովի կողմից, եթե գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքները միասին վերցված գերազանցեն ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը: Այս մոտեցումը ակնհայտորեն սխալ է, և դա հիմնվում է այս դրույթի ներքո դրված գաղափարի, խոշոր գործարքների վերաբերյալ նույնանման իրադրությունների համար օրենսդրի օգտագործած ձևակերպումների, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությունների նմանօրինակ դրույթների հետ համեմատության վրա:

Այս սխալը, որը, մեր կարծիքով, գուտ անուշադրության արդյունք է, խաթարում է այն սկզբունքի հիմքերը, որի հիման վրա օրենսդիրը տարանջատել է խորհրդի և ժողովի կողմից գործարքներ կնքելու վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասությունները: Բացի դրանից, դա հեշտությամբ կարող է հանգեցնել շահագրգռված անձանց կողմից ընկերության խորհրդի որոշմամբ կնքված գործարքների անվավերության մասին դատական հայց ներկայացնելուն: Խոսքը մասնավորապես այն գործարքների մասին է, որոնց կատարման մասին որոշում կայցրել է խորհուրդը և որոնց առարկայի շուկայական արժեքը կամ որոնց դիմաց ընկերության վճարած գումարը չի գերազանցում ընկերության ակտիվների 10 տոկոսը, սակայն առարկայի արժեքի ու դրա դիմաց վճարված գումարի հանրագումարը գերազանցում է ընկերության ակտիվների 10 տոկոսը:

Ուստի կարծում ենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետում օրենսդրի կողմից օգտագործված «և» շարկապը պետք է փոխարինել «կամ»-ով:

Հաջորդիվ հարկ ենք համարում անդրադառնալ նաև բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող շահագրգռվածությամբ գործարքների առարկային: Նախորդ գլխի շրջանակներում մենք մանրամասն անդրադարձել ենք խոշոր գործարքների առարկայի հասկացությունն ու առանձնահատկություններին և մեր դիրքորոշումն ենք հայտնել դրավերաբերյալ<sup>1</sup>:

Անդրադառնալով շահագրգռվածությամբ գործարքների առարկային՝ նշենք, որ օրենսդիրը գործարքի առարկան սահմանելիս բաժնետիրական ընկերությունների դեպքում սահմանափակվում է **գույք և աշխատանքներ** ու **ծառայություններ** տերմիններով<sup>2</sup>, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում հարկ չի համարել ընդհանրապես անդրադառնալ գործարքի առարկային: Ծահագրգռվածությամբ և խոշոր գործարքները իրենց տեսակով ու ձևով շատ նման են միմյանց, և այս հարցում վերջիններիս նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու հիմք չենք տեսնում: Ուստի կարծում ենք, որ տնտեսական ընկերությունների կողմից կնքվող գործարքները, որոնց առարկա են գույքը, աշխատանքներն ու ծառայությունները, այդ թվում նաև մտավոր սեփականությունը կամ քաղաքացիական իրավունքի մյուս օբյեկտները, և որոնց կնքման մեջ առկա է ընկերությանը փոխկապակցված անձի շահագրգռվածությունը, նույնպես պետք է դասել շահագրգռվածությամբ գործարքների շարքին:

## **§2. Ծահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշումների կայացման կարգը**

«Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքները սահմանում են, որ շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշումները պետք է կայացվեն այդպիսի իրավասություններ ունեցող մարմինների կողմից, որոնց գործողություններն իրենց

<sup>1</sup> Տե՛ս նույն աշխատանքի գլուխ 1, §1:

<sup>2</sup> Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի հոդված 64, մաս 1-ին և 2-րդ:



բնույթով չեն տարբերվում խոշոր գործարքների կատարման համար իրականացվողներից: Այս որոշման կայացումը նպաստակ է հետապնդում կանխարգելել շահագրգռված անձանց կողմից իրենց դիրքի չարաչափման հնարավոր փորձերը և արձանագրել այդպիսի գործարքների կատարմանն ուղղված իրավասու մարմինների համաձայնությունը, իսկ այդպիսի մարմին առաջին հերթին համարվում են տնտեսական ընկերության բարձրագույն մարմինը, ինչպես նաև (օրենքով սահմանված լինելու դեպքում) ընկերության խորհուրդը: Ընթացակարգը հետևյալն է. որոշում կայացնող մարմինը լիազորում է ընկերության ներկայացուցչական մարմնին իր սահմանված պայմաններով գործարք կնքել մյուս կողմի հետ<sup>1</sup>:

Առաջին հերթին հարկ է նշել, որ շահագրգռվածությամբ գործարքների կնքման կամ կատարման մասին որոշումը, չնայած գրականության մեջ առկա տարատեսակ դիրքորոշումներին, անհրաժեշտ է կայացնել, բնականաբար, մինչև ընկերության գործադիր մարմնի կողմից նշված տեսակի գործարքների կնքումը:

Այսպես, բաժնետիրական ընկերությունների՝ շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին պետք է նշենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը դրանք կնքելու վերաբերյալ որոշումների կայացման տարբեր ընթացակարգեր է սահմանում՝ կախված ընկերության ունեցած բաժնետերերի քանակից: Այս օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող ընկերությունում գործարքը կնքելու մասին որոշումը, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ 500 և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող ընկերությունում գործարքը կնքելու մասին որոշումը, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը

<sup>1</sup> St´ u Related party transactions and minority shareholder rights, OECD Publishing, 2012, էջ 115-117:

կնքելու մեջ շահագրգռվածությունն չունեցող, խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ: Ընդ որում նույն հոդվածը սահմանում է, որ խորհրդի անկախ անդամ է համարվում այն անձը, որը չի հանդիսանում ընկերության միանձնյա գործադիր մարմին կամ ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի անդամ, և որի ամուսինը, ծնողները, երեխաները, քույրերը և եղբայրները պաշտոններ չեն զբաղեցնում ընկերության կառավարման մարմիններում:

Փաստորեն, ըստ նշված հոդվածի ստացվում է, որ մինչև 500 բաժնետերեր ունեցող ընկերությունում շահագրգռվածությամբ գործարք կնքելու մասին որոշում կայացնելիս քվեարկելու իրավունք ունեն նաև անկախ անդամ չհանդիսացող խորհրդի անդամները: Իսկ եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգռված անձինք են ճանաչվել, նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը՝ գործարքում շահագրգռվածությունն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

Հարկ է նկատել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածը որոշ թերություններ է պարունակում: Այսպես, օրենսդրությամբ կարգավորում չի ստացել հնարավոր այն իրավիճակը, երբ 500-ից պակաս կամ 500-ից ավելի բաժնետիրական ընկերությունում շահագրգռվածությամբ գործարք կատարելու մասին որոշում կայացնելիս գործարքի կնքման մեջ չշահագրգռված համարվի խորհրդի միայն մեկ անդամ, կամ խորհրդի անկախ անդամ համարվի միայն մեկ անձ: Այս իրավիճակում պարզ չէ՝ արդյոք խորհրդի միայն մեկ անդամ կարող է կայացնել գործարքի կատարման մասին որոշում, և եթե ոչ, ապա նորից անհասկանելի է՝ արդյոք այս պարագայում կգործի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի վերոնշյալ 5-րդ մասը, այսինքն՝ գործարքի կատարման մասին որոշում կայացնելու իրավասությունը կանցնի՞ ընդհանուր ժողովին: Պատասխանելով մեր առաջադրած հարցին՝ նշենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ

հողվածի 1-ին և 2-րդ մասերը, նշելով խորհրդի կողմից որոշումների ընդհուլուման համար անհրաժեշտ քվորումը, սահմանում են, որ խորհրդը շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշումներն ընդուլնում է խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Ուստի կարելի է եզրակացնել, որ խորհրդի մեկ անդամի կողմից ձայների մեծամասնությամբ որոշում կայացնելու անհնարինությունը հանգեցնում է մեկ անդամի կողմից գործարքի կատարման մասին որոշման կայացման անհնարինության: Յետևաբար կարելի է ենթադրել, որ այս պարագայում գործարքի կատարման մասին որոշումը պետք է փոխանցվի ընդհանուր ժողովի քննարկամանը: Սակայն օրենսդիրը նման հնարավորությունն չի նախատեսում, այլ սահմանում է միայն, որ գործարքի կատարման մասին որոշում կայացնելու իրավասությունը փոխանցվում է ժողովին, եթե խորհրդի բոլոր անդամներն են շահագրգռված ճանաչվել: Ստացվում է, որ դեյուրե նման դեպքերում հարցի քննարկումը ժողովին չի կարող փոխանցվել:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ ենք համարում «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հողվածի 5-րդ մասը փոփոխել և սահմանել, որ գործարքը կնքելու մասին որոշումն ընդուլնում է ժողովը նաև այն դեպքերում, երբ գործարքի կնքմամբ չշահագրգռված կամ խորհրդի ակնախանդամ են համարվում 3-ից պակաս անդամներ: Յակառակ պարագայում գործարքի կատարման մասին որոշման իրավասությունը փոխանցվում է ընդհանուր ժողովին: Մենք չենք առաջարկում 2 կամ 4 անդամ, քանի որ այդ դեպքում լրացուցիչ կարգավորման կարիք կուլենա նաև ձայների հավասարության դեպքում որոշումների ընդուլուման կարգը, իսկ 5 անդամը արդեն կարող է լրացուցիչ խնդիրներ ստեղծել համեմատաբար ավել փոքր բաժնետիրական ընկերությունների դեպքում, որոնց խորհրդի անդամների քանակը այնքան էլ մեծ չէ:

Յաուկանշական է, որ ՅՅ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հողվածը, ինչպես և ՌԴ նույնանուլն օրենքի 83-րդ հողվածը խորհրդի կողմից որոշումների ընդուլուման քվորումը

սահմանելիս չեն շեշտում՝ որոշումները պետք է կայացվեն գործարքի կնքման մեջ շահագրգռվածությունն չունեցող խորհրդի բոլոր անդամների<sup>1</sup>, թե՞ միայն գործարքի կնքման մեջ շահագրգռվածությունն չունեցող խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

Այսպես, օրինակ, ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանը սահմանել է, որ շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշումը պետք է կայացվի գործարքի կնքման մեջ շահագրգռվածությունն չունեցող քվերակող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բոլոր բաժնետերերի կողմից<sup>1</sup>: Այս դիրքորոշումը քննարկման առարկա է դարձել ռուս տարբեր քաղաքացիագետների համար: Այդ դիրքորոշմանը կողմ են արտահայտվում մի խումբ գիտնականներ<sup>2</sup>, իսկ Մ. Տելյուկինան կարծում է, որ այդ մոտեցումն այնքան էլ նպատակահարմար չէ<sup>3</sup>:

ՀՀ դեպքում կարծում ենք, որ ավելի նպատակահարմար կլինի գործարքի կնքման մասին որոշումը կայացնել միայն նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Տեսականորեն միգուցե ճիշտ կլինի որոշումներն ընդունել շահագրգռվածությունն չունեցող բոլոր անդամների կամքը հաշվի առնելով, բայց եթե սահմանվի, որ որոշումները կայացնում են գործարքի կնքման մեջ չշահագրգռված բոլոր անդամները, չի կարելի բացառել այնպիսի իրավիճակներ, երբ անդամներից մեկը, սեփական շահերը բարձր դասի կազմակերպության շահերից, կամ՝ ցանկանա տապալել որևէ գործարքի կնքում, կարող է պարզապես չներկայանալ խորհրդի նիստին՝ ձախողելով որոշման կայացումը: Բացի դրանից, կարծում ենք, որ այնպիսի դրույթ նախատեսելու դեպքում տեսականորեն այն կիրառելը կարող է բարդ լինել, քանի որ երբեմն կարող է անհնար լինել հավաքել խորհրդի բոլոր անդամներին

<sup>1</sup> Տե՛ս Օ некоторых вопросах применения Федерального закона «Об акционерных обществах», постановление Пленума ВАС РФ от 18 ноября 2003, № 19, Вестн. ВАС РФ, 2004, № 1, ամբ. 7, կետ 3:

<sup>2</sup> Տե՛ս Комментарий ФЗ «Об акционерных обществах». под ред. Г.С. Шапкиной. -М.: Юридический Дом «Юстицинформ», 2002, էջ 334:

<sup>3</sup> Տե՛ս **Телюкина М. В.** Одобрение заинтересованных сделок // Арбитражная практика. 2005, № 3, էջ 6:

(բացառությամբ՝ շահագրգռվածների): Այս ամենը հաշվի առնելով՝ կարծում ենք՝ որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը պետք է փոփոխել և սահմանել, որ շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին ընկերության խորհրդի որոշումները ընդունվում են նիստին մասնակցող և գործարքի կնքման մեջ շահագրգռված չհամարվող խորհրդի անդամների կողմից:

Հաջորդ ուշադրության արժանի հարցը, որը նաև մասամբ հաստատում է վերը շարադրված մեր դիքորոշումը, վերաբերում է այն դեպքերին, երբ համապատասխան մարմնի կողմից շահագրգռվածությամբ գործարք կնքելու մասին որոշում կայացնելիս ինչ-ինչ պատճառներով քվերակությանը մասնակցել են միայն գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն ունեցող բաժնետերեր կամ խորհրդի անդամներ: Այդպիսի մասնակցության երկու տարբերակ է հնարավոր՝ ա) շահագրգռված անձը մասնակցել է որոշում կայացնելու կապակցությամբ անցկացված քվերակությանը և նրա ձայնը հաշվի է առնվել քվորումի ձևավորման, հետևաբար նաև որոշում կայացնելու համար, բ) հնարավոր է, որ շահագրգռված անձը քվերակությանը մասնակցել է միայն խորհրդակցական ձայնի իրավունքով, կամ, չի բացառվում, որ շահագրգռված անձը թեև մասնակցել է քվերակությանը կամ ներկա է եղել այդ պահին, սակայն չի քվերակել:

Առաջին դեպքում, հիմնվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի բառացի մեկնաբանության վրա, կարելի է եզրակացնել, որ շահագրգռվածությամբ գործարք կատարելու մասին որոշում կայացնելիս շահագրգռված անձի՝ քվերակությանը մասնակցելու դեպքում նման կերպ կայացված որոշումը և այդ որոշման հիման վրա կնքված գործարքը դարձնում են անվավեր: Այս մոտեցումը, իհարկե, իրավական տեսակետից ճիշտ է թվում, բայց պետք է նկատել, որ դա չի բավարարում ներկայիս քաղաքացիական շրջանառության պահանջները: Այսինքն՝ կարծում ենք, որ մեր նկարագրած դեպքերը,

երբ քվեարկությանը մասնակցում է շահագրգիռ անձ, ներկայումս կարող է շատ հաճախ հանդիպող երևույթ լինել, ուստի այդ հիմքով անխտիր բոլոր գործարքներն անվավեր ճանաչելն այնքան էլ տրամաբանական չի լինի հետևյալ պատճառներով.

1) հնարավոր կիրառման դեպքում այս մոտեցումը կհիմնավորվի նրանով, որ նշված իրավիճակում ավելի տրամաբանական կլինի առաջին հերթին հաշվի առնել, թե ձայների ինչ հարաբերակցությամբ է կայացվել գործարքի կնքման մասին որոշումը: Մասնավորապես, եթե այն կայացվել է գործարքի կնքման մեջ շահագրգռվածությունն չունեցող անձանց կողմից, սակայն քվեարկությանը մասնակցել է նաև գործարքում շահագրգռված անձ կամ անձինք, ապա հարկ է պարզապես հաշվի չառնել շահագրգիռ անձանց ձայները: Եթե արդեն ընդունված որոշման համար անցկացված քվեարկության արդյունքներից շահագրգռված անձանց ձայները դուրս բերելուց հետո այդպիսի որոշում կայացնելու համար անհրաժեշտ քվորումը չապահովվի, ապա որոշումը չի կարելի համարել ընդունված, իսկ եթե շահագրգռված անձանց ձայները քվեարկության արդյունքներից հանելուց հետո պարզվի, որ, միևնույնն է, նույնիսկ եթե շահագրգռված անձինք չքվեարկեին, որոշումը ընդունվելու էր շահագրգռվածությունն չունեցող անձանց ձայների մեծամասնությամբ, այդ պարագայում նման որոշումը չի կարելի համարել չընդունված<sup>1</sup>:

2) Մեզ արդարացի է թվում Մ. Տիխոմիրովի արտահայտած դիրքորոշումը, որը կարծում է, որ թույլատրելի է շահագրգռված անձանց խորհրդակցական ձայնի իրավունքով գործարքի կատարման մասին որոշում կայացնելու համար քվեարկությանը մասնակցությունը<sup>2</sup>:

Այս դիրքորոշումը ամրապնդվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի №3-12 (ՏԴ) որոշմամբ, որում արձանագրվում է. «Ընկերության

<sup>1</sup> Տե՛ս **Габов А.В.** Сделки с заинтересованностью, Практика акционерных обществ. –М.: «Акционер», 2004, էջ 194:

<sup>2</sup> Տե՛ս **Тихомиров М.Ю.** Комментарий к Федеральному закону об обществах с ограниченной ответственностью. под ред. **М.Ю. Тихомирова.** -М.: Юринформцентр, 2004, էջ 237:

մասնակիցներն իրավունք ունեն ներկա գտնվելու ընդհանուր ժողովին... հիմնադրամն մասին պայմանագրով կամ կանոնադրությամբ կամ ընկերության մարմինների կողմից մասնակիցների այս իրավունքը սահմանափակող դրույթներն անվավեր են, այսինքն՝ այդ իրավունքը բացարձակ է...»<sup>1</sup>: Յետևաբար, հաշվի առնելով նաև այն հանգամաքը, որ օրենքը, սահմանելով ընկերության կառավարման մարմինների իրավասությունները, որևէ նորմ չի պարունակում այն մասին, որն այդ մարմիններին իրավասություն կտար սահմանափակել ժողովին մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը<sup>2</sup>, կարծում ենք, որ շահագրգռվածությամբ գործարքների կնքման կապակցությամբ անցկացվելիք քվեարկությանը շահագրգռվածությամբ անձանց խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցությունը թույլատրելի է և բխում է կորպորատիվ իրավաբանությունների էությունից: Նման տեսակետի կողմնակից է նաև Ա. Գաբովը<sup>3</sup>, որը չի կարծում, թե քվեարկությանը խորհրդակցական ձայնի իրավունքով շահագրգռվածությամբ անձանց մասնակցությունը կարող է հանգեցնել օրենքի խախտման:

Ելնելով վերոգրյալից՝ կարքում ենք, որ քննարկվելիք իրավիճակի վերաբերյալ վեճերը դատարանների կողմից լուծելու պարագայում հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, թե շահագրգռվածությամբ գործարքը կնքելու մասին որոշումը կայացնելիս շահագրգռված անձանձ կողմից քվեարկությանը չմասնակցելը արդյոք կհանգեցնե՞ր անհրաժեշտ քվորումի բացակայության, թե ոչ:

Խոսելով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու որոշումների կայացման մասին՝ նշենք, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքը, ի

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007թ. №3-12 (ՏԴ) քաղաքացիական գործով որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնադրաքերը Հայաստանի Հանրապետությունում, -Եր., ԵՊՀ իրատ., 2013, էջ 194:

<sup>3</sup> Տե՛ս **Գабов А.В.** Сделки с заинтересованностью, Практика акционерных обществ. –М.: Акционер, 2004, էջ 199:

տարբերությունն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ավելի համեստ դրույթներ է պարունակում նշված ընացակարգերի վերաբերյալ :

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ բաժնետիրական ընկերություններում շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշումները, բացի ընդհանուր ժողովից, սահմանված դեպքերում կարող են ընդունվել ընկերության խորհրդի կողմից: Ճիշտ է՝ բաժնետիրական ընկերություններում խորհրդի ձևավորումը պարտադիր է, երբ բաժնետերերի քանակը գերազանցում է 50-ը<sup>1</sup>, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում խորհուրդը ստեղծվում է մասնակիցների ժողովի կողմից՝ վերջիններիս ցանկությամբ, սակայն դա բնավ չի նշանակում, որ այս կազմակերպարարական ձևն ունեցող ընկերություններում խորհրդի գործառույթների իրավակարգավորման կարիք չկա:

Այսպես, համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքի՝ շահագրգռվածությամբ գործարքների և դրանց կնքման մասին որոշումների կայացմումը կարգավորող 47-րդ հոդվածում ոչինչ չի ասվում ընկերությունում խորհրդի ձևավորված լինելու դեպքում վերջինիս հնարավոր իրավասությունների մասին: Համեմատության համար հիշեցնենք, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքի՝ խոշոր գործարքների կնքմանը և դրա կատարման մասին որոշումների կայացմանը նվիրված 48-րդ հոդվածը թեև խորությամբ չի կարգավորում խորհրդի իրավասություններն ու դրանց իրականացման ընթացակարգերը, այնուամենայնիվ կարելի է նշել, որ խոշոր գործարքների պարագայում խորհուրդը օրենսդրի կողմից մոռացության չի մատնվել :

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գործարքի կատարման մասին ընկերության որոշումը, որի կատարման մեջ առկա

<sup>1</sup> Ընդ որում, մինչև 50 բաժնետերեր ունեցող ընկերություններում խորհրդի գործառույթները պատշաճ կարգավորման ենթարկված չեն: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, նշված աշխ., էջ 342:



Է շահագրգռվածությունը, ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից՝ ընկերության՝ գործարքի կատարման մեջ չշահագրգռված մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ:

Հետևաբար, ընդհանուր կանոնի համաձայն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին որոշումները կայացնում է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը: Սակայն, մեր կարծիքով, ընկերությունում խորհրդի ձևավորված լինելու դեպքում օրենքով հարկ է ընկերություններին հնարավորություն ընձեռել ընկերության կանոնադրությամբ սահմանելու, որ քննարկվելիք գործարքների կնքման մասին որոշումները, որոնց առարկայի արժեքը կամ գործարքով վճարման ենթակա գումարը չեն գերազանցում ընկերության ակտիվների 10 տոկոսը, կարող է կայացնել ընկերության խորհուրդը: Ընդ որում, ելնելով տարբեր ընկերությունների առանձնահատկություններից, ընկերությունների մասնակիցների ընդհանուր ժողովին պետք է ընձեռել սեփական նախաձեռնությամբ գործարքի առարկայի արժեքի և գործարքով վճարման ենթակա գումարի սահամաչափը փոփոխելու հնարավորությամբ, որի հիման վրատարանջատվում է, թե որ մարմինը պետք է կայացնի գործարքը կնքելու մասին որոշումը<sup>1</sup>:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում շահագրգռված գործարքների կնքման վերաբերյալ ընկերության խորհրդի կողմից որոշումներ կայացնելու հնարավորությունը օրենքում նախատեսված չլինելու պարագայում բնականաբար ակնհայտ է դառնում, որ օրենքով կարգավորման չեն ենթարկվել նաև խորհրդի կողմից որոշումներ կայացնելու ընթացակարգը: Խորհրդի կողմից շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշում կայացնելու իրավասություն նախատեսելու դեպքում անհրաժեշտ է դառնում սահմանել խորհրդի կողմից որոշումներ ընդունելու ընթացակարգը: Ենթադրվում է, որ խորհրդի կողմից որոշումների կայացման դեպքում անհրաժեշտ ընթացակարգերի

<sup>1</sup> Սահմանաչափի փոփոխման հնարավորության մասին առավել մանրամասն կխոսվի ստորև:

սահմանումները պետք է պարունակի ընկերության կանոնադրությունը, սակայն կանոնադրության մեջ այդպիսի դրույթների ներառման անհրաժեշտությունն օրենքով սահմանված չլինելու դեպքում, ինչպես արդարացիորեն նկատում է Վ. Ավետիսյանը<sup>1</sup>, պրակտիկան ցույց է տալիս, որ այդպիսի անհրաժեշտությունը ընկերության հիմնադիրների կողմից անուշադրության է մատնվում և որպես հետևանք՝ չի ներառվում կանոնադրության մեջ, ինչը հետագայում տարատեսակ խնդիրների առաջացման առիթ կարող է դառնալ :

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում շահագրգռված գործարքների կնքման վերաբերյալ ընկերության խորհրդի կողմից որոշումների կայացման անհրաժեշտ քվորումի մասով կարելի է ենթադրել, որ որոշումները կընդունվեն կորպորատիվ օրենսդրությունում ղեկավար մարմինների կողմից որոշումների ընդունման ընդհանուր սկզբունքի համաձայն, այսինքն՝ խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Սակայն ավելի նպատակահարմար կլինի, եթե խորհրդի կողմից շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշումները ընդունեն գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամները, այսինքն՝ անալոգիայով կիրառել «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասը: Ինչպես նկատում է Վ. Չալեսկին, այդպիսի մոտեցումը կոչված է բացառելու կամ իջեցնելու շահագրգռված անձանց կողմից ընկերության շահերի վրա հնարավոր բացասական ազդեցությունը, որոնք ի վիճակի են ազդելու ընկերության կողմից գործարքի կնքման մասին որոշում կայացնելու և դրապայմանների ձևավորման վրա<sup>2</sup>:

Ուստի, խորհրդի կողմից շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին որոշում կայացնելու համար նպատակահարմար կլինի հաշվի առնել միայն գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն

<sup>1</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ հարաբերությունների արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, -Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 342:

<sup>2</sup> Տե՛ս Гражданское право России, Общая часть: курс лекций. **Отв. Ред. О.Н. Садиков.** –М.: «Юристъ», 2001, էջ 211:

չունենցող անդամների ձայները, այսինքն՝ այն անձանց ձայները, որոնք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքի 47-րդ հոդվածի իմաստով չեն համարվում շահագրգռված:

Ընդ որում, ինչպես արդեն նշեցինք բաժնետիրական ընկերությունների պարագայում, հարկ է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար նույնպես սահմանել, որ գործարքի կնքման մասին որոշումը կայացվում է խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ շահագրգռված անձանց կարելի է թույլատրել մասնակցել նիստին միայն խորհրդակցական ձայնի իրավունքով: Միաժամանակ, եթե նիստին մասնակցող խորհրդի անդամները, որոնք շահագրգռված չեն գործարքը կնքելու հարցում, չեն ձևավորում համապատասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ քվորումը, հարցի հետագա քննարկումը պետք է փոխանցել մասնակիցների ընդհանուր ժողովին:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքի 47-րդ հոդվածի ներքո ավելացնել նոր մաս, համաձայն որի՝ ընկերության խորհուրդ ձևավորված լինելու դեպքում կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշումները, որոնց առարկայի արժեքը կամ գործարքով վճարման ենթակա գումարը չի գերազանցում ընկերության ակտիվների 10 տոկոսը (շեմը կարող է փոփոխվել ժողովի որոշմամբ), կայացնում են ընկերության խորհուրդը: Շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող և գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն չունենցող անդամների ձայների թվի մեծամասնությամբ: Եթե նիստին մասնակցող խորհրդի անդամները, որոնք շահագրգռված չեն գործարքը կնքելու հարցում, չեն ձևավորում համապատասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ քվորումը, հարցի հետագա քննարկումը պետք է փոխանցել մասնակիցների ընդհանուր ժողովին:

ընկերություններում բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշումների ընդունման կարգին: «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գործարքը կնքելու մասին որոշումը, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն և չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե՝

- գործարքով վճարման ենթակա գումարը և գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը գերազանցում են ընկերության ակտիվների արժեքի 10 տոկոսը.

- գործարքը և/կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է ընկերության՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

Ընկերության կանոնադրությամբ սույն մասով նախատեսված որոշում ընդունելու համար կարող է սահմանվել ձայների առավել մեծ քանակ: Այս դեպքում ևս որոշակի հարցեր է առաջացնում ժողովի կողմից որոշումների ընդունման համար անհրաժեշտ քվորումը: «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ժողովի որոշումներն առհասարակ ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, նույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է այս կանոնից բացառություն. շահագրգռվածությամբ գործարք կնքելու մասին որոշումը կայացվում է քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և չշահագրգռված բաժնետերերի ձայների մեծամասնությամբ:

Նախ՝ առաջին հերթին հարկ է նկատել, որ այստեղ նույնպես չի սահմանվում, որ որոշումները պետք է ընդունվեն միայն նիստին

մասնակցող չշահագրգռված բաժնետերերի կողմից: Մեր կարծիքով, ինչպես և խորհրդի դեպքում, այստեղ նույնպես օրենքը շտկման կարիք ունի:

Ինչպես արդեն նշեցինք, օրենքը սահմանում է, որ շահագրգռվածությամբ գործարքների կատարման համար անհրաժեշտ որոշումը բաժնետերերի ժողովի կողմից կայացվում է գործարքում շահագրգռվածություն և չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ: Ստացվում է, որ եթե չշահագրգռված բաժնետերերի ձայների ընդհանուր գումարը կազմի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների ընդհանուր թվի օրինակ 80%-ը, ապա քվեարկելու իրավունք ունեցող բաժնետերերի կողմից որոշումը կարող է ընդունվել, եթե դրա օգտին քվեարկեն ձայնի իրավունք ունեցող բաժնետերերի 40%-ը ու գումարած մեկ ձայն: Կարծում ենք, որ տվյալ դեպքերում օրենսդրի կողմից ընկերություններին որոշում ընդունելու համար անհրաժեշտ ձայների առավել մեծ քանակ սահամնելու հնարավորություն ընձեռելը նպատակահարմար չէ, քանի որ որոշ դեպքերում կարող է բացասական անդրադառնալ ընկերության գործունեության վրա:

Վերոգրյալի վերաբերյալ հետաքրքրական դիրքորոշում է արտահայտել Ի. Պուշկարյովը<sup>1</sup>, որը առաջարկում է պատկերացնել մի իրավիճակ, երբ գործարքի կնքման մեջ շահագրգռված բաժնետերերին պատկանում է ձայների ընդհանուր թվի 80%-ը: Տվյալ պարագայում, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի համապատասխան հոդվածով, կարելի է եզրակացնել, որ շահագրգռվածությամբ գործարքի կատարման մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ քվորումը կկազմի ձայների ընդհանուր թվի մնացած 20%-ը, իսկ որոշումը կհամարվի կայացած, եթե դրա օգտին քվեարկեն բաժնետերերի 10%-ը և գումարած ևս մեկ ձայն: Այսպիսի իրավիճակը ուղղակիորեն հակասում է կորպորատիվ իրավահարաբերություններին, որի հիմնարար սկզբունքերից մեկը

<sup>1</sup> Ст' у Пушкарев И.П. Порядок одобрения органами управления хозяйственных обществ крупных сделок и сделок, в совершении которых имеется заинтересованность. Дисс... канд. ю. н. – Челябинск, 2008, էջ 127:

փոքրամասնության ենթարկումն է մեծամասնության կամքին<sup>1</sup>:

Այդ կերպ կստացվի, որ այն դեպքերում, երբ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերի 51%-ը կամ ավելին համարվի գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն ունենցող, «չշահագրգռված փոքրամասնությունը» փաստորեն կսկսի գերիշխել «շահագրգռված մեծամասնության» վրա: Այսինքն՝ ինչքան քիչ ձայներ են պատկանում չշահագրգռված բաժնետերերին, այնքան էլ ավելի որոշիչ է դառնում նրանցից յուրաքանչյուրի ձայնը: Այս պարագայում մենք ակնատես կդառնանք մի պարտոքսալ երևույթի, երբ ձայների ճնշող մեծամասնությունը (օրինակ՝ 90%-ին) տիրապետող բաժնետերերը չեն կարողանում ընդունել իրենց անհրաժեշտ որոշումը:

Ի. Պուշկարյովն արդարացիորեն նկատում է, որ այն իրավիճակներում, երբ գործարքի կնքման մեջ շահագրգռված են ընկերության բաժնետերերի մեծամասնությունը, որը նախապայմաններ է ստեղծվում վերջիններիս կողմից շահագրգռվածությամբ գործարքների կնքման համար անհրաժեշտ ընթացակարգերը չպահպանելու համար, դա ինքնաբերաբար հանգեցնում է այդ հիմքով գործարքների անվավերության վերաբերյալ պահանջներ ներկայացնելու համար: Բացի դրանից, որոշակի գործարքի կնքման մեջ շահագրգռված բաժնետերերի կողմից իրենց իրավունքների չարաչափումները գուճահեռաբար հանգեցնելու են չշահագրգռված բաժնետերերի իրավունքների ոտնահարման, ինչն իր հերթին խաթարելու է ընկերության ներքին կայունությունը, հիմք է հանդիսանալու կորպորատիվ կոնֆլիկտների առաջացման և ընկերության նկատմամբ վերջինիս կոնտրադետնների ու ներդրողների վստահության խարխլման համար<sup>2</sup>:

Նշված հեղինակն առաջարկում է ստեղծված իրավիճակի հետևյալ հնարավոր լուծումները: Նախ՝ կարելի է օրենքի համապատասխան

<sup>1</sup> Տե՛ս **Степанов П.В.** Корпоративные отношения в гражданском праве // Законодательство. 2002, № 6, էջ 12: **Ломакин Д.В.** Акционерное правоотношение. -М.: Спарк, 1997, էջ 26-27:

<sup>2</sup> Տե՛ս **Пушкарев И.П.** Порядок одобрения органами управления хозяйственных обществ крупных сделок и сделок, в совершении которых имеется заинтересованность. Дисс... канд. ю. н. – Челябинск, 2008, էջ 127:

դրույթում կատարել փոփոխություններ, որոնք թույլ տկան շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշումները կայացնել ձայների պարզ մեծամասնությամբ և հաշվի առնվել բոլոր բաժնետերերի, այդ թվում նաև՝ շահագրգռված բաժնետերերի ձայները: Որպես հնարավոր այլ տարբերակ՝ առաջարկվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում սահմանել, որ, բացի այն դեպքերից, երբ ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշումը չի պահանջվում նաև, եթե գործարքի կնքման մեջ շահագրգռված են ճանաչվում ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերի կեսից ավելին:

Նշված փոփոխությունները, Պուշկարյովի կարծիքով, պետք է ուղղված լինեն մեր կողմից արդեն նկարագրված հնարավոր այն իրավիճակներից խլասափելուն, երբ բաժնետերերի փոքրամասնությունը գերակա դիրքում է գտնվում բաժնետերերի ճշող մեծամասնության նկատմամբ, և երբ հնարավոր կդառնան ժողովի գուտ \$որմալ բնույթ կրող նիստերը: Այս խնդիրների նկատմամբ նշված մոտեցումների դեպքում, սակայն, անուշադրության են մատնվում գործարքի կնքման մեջ չշահագրգռված բաժնետերերի իրավունքները, իսկ խնդրի լուծմանն ուղղված երկրորդ տարբերակի դեպքում՝ քվերակությանը չմասնակցելու պարագայում, վերջիններս ընդհանրապես զրկվում են իրենց կարծիքն ու կամքը արտահայտելու հնարավորությունից:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու ամենից նպատակահարմար տարբերակը բաժնետիրական ընկերությունների բաժնետերերին և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցներին գործարքի կնքման մեջ պոտենցիալ շահագրգռվածություն ունեցող անձանց ցուցակից հանելն է: «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 62-րդ հոդվածով և «Սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածով սահմանված անձանց ամբողջ շրջանակից, ովքեր կարող են համարվել գործարքում շահագրգռված, միայն ընկերությունների բաժնետերերը կամ մասնակիցներն են, որ ընկերության ղեկավար մարմնում պաշտոններ են զբաղեցնում ընկերությունում իրենց ունեցած մասնաբաժիններին կամ բաժնետոմսերին տիրապետելու ուժով: Մասնավորապես, ընկերության մասնակցի կամ բաժնետիրոջ՝ ընկերության մասնակիցների կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի աշխատանքներին մասնակցելու համար չի պահանջվում նրա ընտրությունը կամ նշանակումը: Ելնելով այն հանգամանքից, որ քվեարկության միջոցով որոշումների կայացման հիմքում դրված է այն գաղափարը, որ ընկերության մասնակիցները քվեարկության արդյունքում ձևավորում են ընկերության մեկ միասնական կամք, տրամաբանական է և պարտադիր չէ, որ բոլոր մասնակիցների կամքը ի սկզբանե նույնական լինի միմյանց կամ ընկերության կամքի հետ: Այդ կերպ ընկերության մասնակցի կամ բաժնետիրոջ տարբերությունը վերոնշյալ հոդվածներով սահմանված շահագրգռ համարվող այլ անձանցից այն է, որ մասնակիցների կամ բաժնետերերի արտահայտած կամքը պարտադիր չէ, որ նույնական լինի տնտեսական ընկերության կամքի հետ, մինչդեռ, օրինակ, տնօրենի կամքը կամ շահերը չեն կարող տարբերվել ընկերության կամքից կամ շահերից: Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից շահագրգռվածությանը ամբողջ գործարքների կանոնակարգման մեջ դրված գաղափարին, ապա դրա նպատակն այն է, որ ընկերության շահերի փոխարեն սեփական շահերով առաջնորդվող և ընկերության վրա հնարավոր ազդեցության լծակներ ունեցող անձնաց թույլ չտրվի, որ ներգործեն ընկերության հետագա քայլերի վրա հօգուտ իրենց, իսկ տնտեսական ընկերության մասնակիցներն իրենց ընդհանուր ժողովի ամեն մի նիստում փորձեն հիմնավորել իրենց սեփական դիրքորոշումը կամ մյուսներին պարտադրել իրենց սեփական տնտեսակետը՝ ի տարբերություն ընկերության այլ ղեկավար մարմինների անդամների, որոնք ցանկացած պարագայում օրենքի



ուժով պարտավոր են իրենց գործողություններում առաջնորդվել միայն ընկերության շահերով կամ այլ կերպ ասած՝ ընկերության մասնակիցների շահերով:

Բաժնետիրական ընկերությունների բաժնետերերին և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցներին գործարքի կնքման մեջ պոտենցիալ շահագրգռվածություն ունեցող անձանց շրջանակից հանելը ոչ միայն համապատասխանում է կորպորատիվ օրենսդրության զարգացման համաշխարհային միտումներին, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, զարգացած երկրների մեծ մասի օրենսդրությունները բաժնետերերին չեն համարում շահագրգռված, այլ նաև խոչընդոտ կդառնա՞վերը շարադրված իրավիճակներից շատերի ի հայտ գալուն:

Չաջորդիվ հարկ է խոսել այն դեպքերի մասին, երբ բաժնետիրական ընկերություններում շահագրգռվածությամբ գործարքներով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա գույքի շուկայական արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների արժեքի 10%-ը: Այս դեպքերում շահագրգռվածությամբ գործարքի կատարման մասին որոշումը կայացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովը: Չաշվի առնելով գործարքի առարկայի արժեքի շեմի ցածր լինելը՝ քննարկվելիք նորմը ենթադրում է, որ շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշումների ճնշող մասը կայացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովը: Խոշոր գործարքների առարկայի արժեքին անդրադառնալիս մենք արդեն խոսել ենք օրենսդրի կողմից գործարքների առարկայի արժեքի այլ սահմանաչափ նախատեսելու հնարավորության մասին: Ծահագրգռվածությամբ գործարքների պարագայում քննարկվելիք սահմանաչափը օրենքում սահմանված է իմպերատիվ կերպով և թույլ չի տալիս դրանից որևէ շեղում: Այս դեպքում նույնպես մենք կարծում ենք, որ տարբեր կազմակերպությունների առանձնահատկությունները հաշվի առնելով, պետք է վերջիններիս հնարավորությունն ընձեռել իրենց նախածեռնությամբ կանոնադրությամբ սահմանել շահագրգռվածությամբ գործարքները

ժողովի քննարկամանը ներկայացնել ու համար անհրաժեշտ գործարքի առարկայի արժեքի կամ գործարքով վճարման ենթակա գումարի այլ սահմանաչափ:

Օրենսդիրը սահմանում է, որ ընկերության՝ շահագրգռվածության առկայության ցանկացած գործարք պետք է ներկայացվի ընկերության տարեկան հաշվետվության մեջ՝ ներկայացնելով ամբողջական և համապարփակ տեղեկատվություն գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ: Ընդ որում, որոշ շահագրգռվածության ամբողջ գործարքներ կնքելիս, համաձայն նույն օրենքի, պետք է կատարվի գործարքի առարկայի շուկայական արժեքի և համապատասխանության վերաբերյալ անկախ գնահատողի եզրակացություն և ստանալ ու ց հետո, որը շահագրգռվածության ամբողջ գործարքի վերաբերյալ մյուս տեղեկատվությունների հետ նույնպես պետք է տեղ գտնի ընկերության տարեկան հաշվետվության մեջ:

Սահմանվում է նաև, որ ընկերության գործադիր մարմինը կամ կանոնադրության նախատեսված այլ մարմին պարտավոր է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների հիման վրա վարել ընկերության փոխկապակցված անձանց ռեեստր: Սակայն օրենսդիրը բացարձակապես լռում է շահագրգռվածության ամբողջ գործարքների կնքման մասին որոշումներին ներկայացվող բովանդակային պահանջների մասին:

Գործարքի կատարման մասին որոշման ռեկվիզիտների վերաբերյալ նշենք, որ մենք դրանց անդրադարձել ենք խոշոր գործարքների մասին որոշումների կայացման ընթացակարգերի շուրջ խոսելիս: Կարծում ենք, որ դրանք նույն կերպ կարելի է կիրառել նաև շահագրգռվածության ամբողջ գործարքների կնքման մասին որոշումների համար:

Մասնավորապես կարծում ենք, որ շահագրգռվածության ամբողջ գործարքների կնքման մասին ցանկացած որոշման վերաբերյալ պետք է կազմվի համապատասխան արձանագրություն, և անկախ այն բանից՝

որոշումն ընդունվել է ընդհանուր ժողովի թե խորհրդի կողմից, այն պետք է նշում պարունակի գործարքի առարկայի, դրա կողմերի, շահագրգռված անձանց, շահագրգռվածության բնույթի, շահառուների, գործարքի արժեքի և Քաղ. օր. 448-րդ հոդվածով սահմանված գործարքի մյուս էական պայմանների մասին<sup>1</sup>: Հակառակ պարագայում պարզապես կորչում է շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու վերաբերյալ որոշումների կայացման իմաստը, քանի որ ընկերության բաժնետերերը կամ մասնակիցները, համապարփակ տեղեկատվություն չունենալով գործարքում շահագրգռված անձանց վերաբերյալ, ինչպես նաև առանց վերլուծելու գործարքի էական պայմանները չեն կարող ընկերության համար կնքվող գործարքի նշանակության վերաբերյալ հստակ պատկերացում կազմել:

Խնդիրն այն է, թե ինչպես վարվել այն դեպքերում, երբ գործարքի կնքման մասին որոշում կայացնելու և գործարքը կնքելու միջև ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում փոխվեն գործարքի որոշ էական պայմաններ. մենք այդ մասին մանրամասն խոսել ենք սույն աշխատանքի խոշոր գործարքներ կնքելու մասին որոշումների կայացմանը նվիրված պարագրաֆում<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Քաղ. օր. 448-րդ հոդվածի համաձայն՝ գործարքի կամ պայմանագրի էական պայմաններ են համարվում դրա առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

<sup>2</sup> Տե՛ս սույն աշխատանքի գլուխ 1, § 1:

## ԳԼ ՈՒ ԽՈՒ.

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔԿՈՂ ԽՈՇՈՐ ԵՎ ՇԱՅ ԱԳՐԳՈՎԱՃՈՒ ԹՅԱՄԲ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎԱԿԵՐՈՒ ԹՅՈՒՆԸ

#### **§1. Խոշոր և շահագրգռված ու թյամբ գործարքների վիճարկման կարգն ու առանձնահատկությունները**

Գործարքները համարվում են վավեր և մասնակիցների համար առաջացնում են ցանկալի հետևանքներ, եթե բավարարում են օրենքից բխող մի քանի պահանջներ: Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ առանձնացվում են գործարքի վավերության չորս պայմաններ: Որպեսզի գործարքը համարվի վավեր, անհրաժեշտ է, որ՝

- գործարքը կնքվի գործարք կնքելու իրավասություն ունեցող սուբյեկտի կողմից,
- գործարք կնքողն իրոք ցանկություն ունենա այդ գործարքը կնքելու և ճիշտ կերպով արտահայտի իր կամքը,
- գործարք կնքողի կամքն արտահայտված է ինչ օրենքով պահանջվող ձևին համապատասխան,
- գործարքի բովանդակությունը, այսինքն՝ գործարքի պայմանները, չպետք է հակասեն գործող օրենսդրությանը:

Այլ կերպասած, որպեսզի գործարքը համարվի վավեր, անհրաժեշտ է, որ նրա սուբյեկտային կազմը, այն կնքողի կամքը և կամահայտնությունը, նրա ձևը և բովանդակությունը համապատասխանեն օրենքին: Այս մոտեցումը հիմնված է այն ավանդական տեսության վրա, համաձայն որի՝ ցանկացած գործարք վավեր է, եթե դրա չորս տարրերը համապատասխանում են օրենքի պահանջներին<sup>1</sup>: Յետևաբար, վերոնշյալ չորս հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը կամ թերիությունը կարող է հանգեցնել գործարքի անվավերության:

Խոսելով գործարքի սուբյեկտներին ներկայացվող պահանջների մասին՝ նշենք, որպեսզի կնքվի գործարք, այսինքն՝ կատարվեն իրավաչափ իրավական գործողություններ՝ ուղղված քաղաքացիական իրավունքների և պարտականությունների

<sup>1</sup> Տե՛ս և Гражданское право, Том 1. под ред А.П. Сергеева. –М.: «Велби», 2009, էջ 445:

ձեռքբերմանը, հարկ է, որ այդ գործողությունները կատարվեն դրանք կատարելու իրավասություն ունեցող անձանց կողմից: Քաղաքացիական իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների մոտ գործունակությունը ծագում է տարբեր ժամանակահատվածներում: Իրավաբանական անձանց համար գործունակությունը ամբողջ ծավալով առաջանում է դրանց պետական գրանցման պահից: Սակայն, ի տարբերություն \$իզիական անձանց, իրավաբանական անձանց գործունակությունը սահմանափակվում է իրենց հիմնադիր փաստաթղթերի և օրենքով սահմանված գործունեության նպատակների ուժով:

Գործարքները համարվում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների կամային գործողություններ, որոնք իրականացվում են որոշակի շարժառիթների և նպատակների ազդեցության ներքո:

Գործարք կնքելու ցանկությունը կամ այլ կերպասած՝ ներքին կամքը ենթադրում է անձի ցանկությունը՝ կնքելու այն գործարքը, որի պայմաններն իրեն ձեռնտու են: Ներքին կամք ձևավորելուց զատ՝ անհրաժեշտ է, որ այն կամահայտնության միջոցով հայտնի դառնա շահագրգռված անձանց, այսինքն՝ արտաքին դրսևորում ունենա: Միաժամանակ անհրաժեշտ է, որ անձի արտահայտած կամքը համապատասխանի իր ներքին կամքին: Այսինքն՝ եթե իրականում անձը ցանկություն ունի գործարք կնքելու, թեև արտաքինապես նա այդպիսի ցանկություն ունի դրսևորել է, կամ այդ անձի գործարք կնքելու վերաբերյալ ցանկությունը (կամքը) իր կոնտրագենտներին ներկայացվել է մեկ այլ կերպ, քան իրականում է, ապա գործարք կնքողի ներքին կամքն ակնհայտորեն անհամապատասխան է ցուցաբերված կամահայտնությանը:

Ուստի կարելի է եզրակացնել, որ գործարքի վավերությունն ուղղակիորեն կապված է անձի՝ բարենպաստ պայմաններում ձևավորված գործարք կնքելու կամքի, այդ կամքը համապատասխանորեն արտահայտելու, ինչպես նաև՝ ներքին և արտաքին կամքին կամ կամահայտնությանը համընկնելու հետ:

Դիպուկ է Տ. Բարսեղյանի այն բնորոշումը, որ գործարքի վավերականության համար անրաժեշտ է, որ գործարք կնքող սուբյեկտն իր կամքն արտահայտի կամովին և ազատորեն, առանց

հակաիրավական կամ կամքի դրսևորման վրա անբարենպաստ ազդեցություն ունեցող արտաքին ազդակների: Այդ կամահայտնությունը պետք է համապատասխանի նրա իրական ցանկություններին՝ ներքին կամքին, արտահայտված լինի ոչ թե ձևականորեն, այլ իրավական հետևանքներ առաջացնելու նպատակով<sup>1</sup>:

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ գործարքի ձևասելիս նկատի ունեն գործարքի արտաքին արտահայտվածության, ինչպես նաև գործարքը կնքող անձի արտահայտած կամքի ամրագրման միջոցը: Գործարքի ձևին անդրադառնալիս նշենք, որ գործարքը կարող է առաջացնել համապատասխան իրավահարաբերություններ, այսինքն վավերական կարող է համարվել, եթե պահպանված են դրա ձևին ներկայացված օրենքի պահանջները: Համաձայն Քաղ. օր. 316-րդ հոդվածի՝ գործարքի ձևը չպահպանելու հետևանքով գործարքը կարող է ճանաչվել անվավեր ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասամբ, ընդ որում գործարքի մի մասի անվավեր ճանաչումը չի հանգեցնի ամբողջի անվավերության, եթե գործարքը կարող է կնքվել առանց անվավեր մասը ներառելու:

Գործարքի բովանդակության ներքո ընդունված է հասկանալ գործարքի պայմանների համակցությունը: Հարկ է գործարքի պայմաններում ներառել գործարքի առարկային, կողմերի իրավունքներին ու պարտականություններին, պարտավորության ապահովման միջոցներին, գործարքի գնին, ժամկետներին և այլնին վերաբերող բոլոր պայմանները: Քանի որ գործարքն իրավաչափ գործողություն է, հետևաբար, դրա պայմանները պետք է համապատասխանեն օրենքներին, այլ իրավական ակտերին և իրավաբանական անձի կանոնադրային իրավունակությանը:

Քաղ. օր. 10-րդ հոդվածի համաձայն՝ հնարավոր է՝ կնքվեն գործարքներ, որոնք թեև նախատեսված չեն օրենքով, սակայն չեն հակասում դրան: Նման դեպքերում գործարքը համարվում է վավեր, եթե չի հակասում քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին (Քաղ. օր. 3-րդ հոդվ.), գործարար շրջանառության սովորույթներին (Քաղ. օր. 7-րդ հոդվ.), բխում է Քաղ. օր. 11-րդ և 12-րդ հոդվածներում սահմանված ընդհանուր պահանջներից: Այլ կերպ ասած՝ հնարավոր

<sup>1</sup> Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, -եր., «Տիգրան Մեծ» հրատ., էջ 222:

գործարքների շրջանակը օրենքով սահմանափակված չէ, և քաղաքացիական իրավունքի սուբյեկտները կարող են կնքել ինչպես օրենքով նախատեսված, այնպես էլ չնախատեսված ցանկացած գործարք, որը չի հակասի գործող օրենսդրությանը: Համաձայն Քաղ. օր. 305-րդ հոդվածի՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առնչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Համաձայն Քաղ. օր. 303-րդ հոդվածի՝ գործարքն անվավեր է Քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առնչինչ գործարք): Այդպիսով, անվավեր գործարքներն ընդունված է տարանջատել առնչինչ և վիճարկել ի<sup>1</sup> գործարքների:

Քաղ. օր. 303-րդ հոդվածի իմաստային մեկնաբանության հիման վրա կարելի է եզրակացնել, որ գործարքների տարանջատումը առնչինչի և վիճարկելիի հիմնված է այդ գործարքներն անվավեր ճանաչելու կարգի (մաս 3-րդ) և գործարքներն անվավեր ճանաչելու պահանջներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի վրա (մաս 2-րդ):

Այսպես, վիճարկելի են համարվում այն գործարքները, որոնք կարող են անվավեր ճանաչվել շահագրգռված կոմղի պահանջով և դատարանի վճռով: Ուստի կարելի է եզրակացնել, որ քանի դեռ գործարքն անվավեր ճանաչելու պահանջ չի ներկայացվել, և այն այդպիսին չի ճանաչվել, ապա գործարքի անվավերության վերաբերյալ խոսելն անիմաստ է:

Այլ է հարցը առնչինչ գործարքների դեպքում: Վերջիններս անվավեր են օրենքի ուժով՝ անկախ գործարքի մասնակիցների կամքից: Ի տարբերություն վիճարկելի գործարքների՝ առնչինչ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջներկայացնելու կարիք չկա, քանի որ դրանք անվավեր են օրենքի ուժով: Եթե վիճարկելի

<sup>1</sup> Մենք համաձայն ենք Տ.Կ. Բարսեղյանի այն դիրքորոշմանը, որ «վիճահարույց» բառը տվյալ պարագայում օրենսդրի կողմից սխալ է օգտագործվել, և սույն աշխատանքում կկիրառենք «վիճարկելի» բառը: Մանրամասն տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, -եր., «Տիգրան Մեծ» հրատ., էջ 223:

գործարքների դեպքում շահագրգռված կողմը պետք է այն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնի, ապա առոչինչ գործարքների դեպքում, նույնիսկ եթե գործարքի բոլոր մասնակիցները ցանկան, որ գործարքը վավեր լինի, այն, միևնույնն է, առոչինչ է: Եթե դատարանը մեկ այլ գործ քննելիս առնչվի այդպիսի գործարքի հետ, կարող է ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ ցանկացած շահագրգռված անձի պահանջով այդպիսի գործարքները ճանաչել առոչինչ և կիրառել օրենքով նախատեսված հետևանքները<sup>1</sup>:

Քանի որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 61-րդ ու 65-րդ և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ, 48-րդ հոդվածների ձևակերպումների համաձայն՝ սահմանված պահանջների խախտմամբ կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքները կարող են դատարանի որոշմամբ ճանաչվել անվավեր, որն իր հերթին հիմնվում է Քաղ. օր. 305-րդ հոդվածի սահմանման վրա, համաձայն որի՝ գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ այն առոչինչ է, կարող ենք եզրակացնել, որ վերոնշյալ գործարքների կնքման համար սահմանված պահանջների խախտումը կհանգեցնի այդ գործարքների ոչ թե առոչինչ ճանաչվելուն, այլ դրանց վիճարկելի համարվելուն, որը դեռ պետք է անվավեր ճանաչվի դատարանի կողմից:

Հատկանշական է, որ միայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի՝ շահագրգռվածությամբ գործարքների կարգավորմանը նվիրված 47-րդ հոդվածն է նախատեսում այն անձանց շրջանակը, որոնք կարող են սահմանված պահանջների խախտմամբ կնքված շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու հայցապահանջ ներկայացնել, ինչը իր հերթին, նորից խոսում այս գործարքների վիճարկելի համարվելու մասին: Ինչ վերաբերում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող խոշոր գործարքներին և բաժնետիրական ընկերությունների կողմից կնքվող խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներին, ապա հարկ է նկատել, որ Քաղ. օր. 303-րդ հոդվածը սահմանում է, որ վիճարկելի գործարքն անվավեր ճանաչելու պահանջը կարող են ներկայացնել սույն օրենսգրքում

<sup>1</sup> Գործարքների անվավերության մասին առավել մանրամասն տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, նշված աշխ., էջ 221:



նշված անձինք, սակայն օրենսդիրը նշված դեպքերում անհասկանալի պատճառներով չի սահմանել, թե այդ գործարքների կնքման վերաբերյալ նախատեսված պահանջները խախտվելու դեպքում ու՞մ պահանջով է դատարանն անվավեր ճանաչելու այդ գործարքները:

Ենթադրվում է, որ այն դեպքերում, երբ օրենքում հստակ նշված չէ ընկերության կողմից կնքված գործարքն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, հարկ է կիրառել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի անալոգիա: Այսինքն՝ թե՛ բաժնետիրական, թե՛ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից օրենքի պահանջների խախտմամբ կնքված ցանկացած խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարք անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու իրավունք պետք է ունենան ընկերությունը և ընկերության մասնակիցը կամ բաժնետերը:

Կարծում ենք, որ հիմնվելով Քաղ. օր. 303-րդ հոդվածի մեկնաբանության վրա, ինչպես նաև հաշվի առնելով գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու սուբյեկտների շրջանակի անորոշությունը՝ հետագա հնարավորությունների մացություններից խուսափելու նպատակով անրաժեշտ է՝ օրենքի պահանջների խախտմամբ կնքված խոշոր ու շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու համար «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքներում հստակ սահմանել այն անձանց շրջանակը, որոնք իրավասու են դատարան ներկայացնելու ընկերության կողմից կնքված քննարկվելիք գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ, իսկ այդպիսի անձինք, ըստ հիշյալ օրենքների, ինչպես նաև Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթների մեկնաբանության, այն անձինք են, ի շահ որոնց օրենքով սահմանված են խոշոր և շահագրգռվածությամբ գործարքները կարգավորող դրույթները (մասնավորապես խոսքը ընկերության և դրամասնակիցների ու բաժնետերերի մասին է):

Ելնելով այն հանգամանքից, որ օրենքների պահանջներին ոչ համապատասխան կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ

գործարքները համարվում են վիճարկելի, և դրանց անվավեր ճանաչվելը փաստացի կախված է գործարքում կողմերի շահագրգռվածությունից, բնականաբար այդպիսի գործարքներն անվավեր ճանաչվելու դեպքում դրանք a priori կհամարվեն վավեր և կառաջացնեն դրամանակիցների համար համպատասխան իրավունքեր և պարտականություններ: Մեր կարծիքով, հարկ է համաձայնվել Օ. Գուտնիկովի այն դիրքորոշմանը, որ օրենքի պահանջների խախտմամբ կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքները միայն շահագրգիռ կողմի պահանջով ու դատարանի որոշմամբ անվավեր ճանաչելու մոտեցումը ճիշտ է, քանզի համապատասխանում է այդպիսի գործարքների էությանը, ինչպես նաև քաղաքացիական շրջանառության պահանջներին<sup>1</sup>:

Ինչպես արդեն նշվեց, խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ կարող են ներկայացնել ընկերությունը և դրամանակիցները կամ բաժնետերերը: Առկա նորմերի ձևակերպումներից հետևում է նաև, որ դատարանի կողմից քննարկվելիք գործարքներն անվավեր ճանաչելու համար բավարար է միայն գործարքների՝ օրենքով սահմանված կարգը խախտելով կնքված լինելու փաստը: Սակայն իրավաբանական գրականության մեջ առկա է դիրքորոշում, համաձայն որի՝ դատարանի կողմից քննարկվելիք գործարքներն անվավեր ճանաչելու համար հարկ է, որ հայցապահանջ ներկայացնող անձն ապացուցի, որ գործարքի կնքմամբ ուղղակիորեն խախտվել են իր օրինական շահերը կամ իրավունքները<sup>2</sup>:

Մեր կարծիքով, խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքն անվավեր ճանաչելու հայցապահանջ ներկայացնող անձը պարտավոր է դատարանին ապացուցելու, որ այդ գործարքի կնքման հետևանքով անբարենպաստ հետևանքներ են առաջ եկել իր համար կամ խախտվել են իր օրինական շահերն ու իրավունքները, քանի որ թե՛ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը, թե՛ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքը, թե՛ Քաղ. օր. 303-րդ հոդվածը որպես այդ գործարքներն

<sup>1</sup> Ст' у Гутников О. В. Недействительные сделки в гражданском праве: Теория и практика оспаривания. –М.: «Бератор-Пресс», 2003, էջ 401-405:

<sup>2</sup> Ст' у Маковская А. Оспаривание решений общего собрания акционеров // Хозяйство и право (Приложение к ежемесячному юридическому журналу). 2006, № 9, էջ 16-26: Будылин С. Л. Крупные сделки хозяйственных обществ // Арбитражная практика. 2005, № 2, էջ 9:

անվավեր ճանաչելու հիմք, որպես այդպիսին չեն սահմանում ընկերության կամ դրամասնակցի օրինական շահերի և իրավունքերի խախտումը:

Խնդիրն ավելի համակողմանի ներկայացնելու նպատակով հարկ ենք համարում մեջբերել բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների քննարկելիք գործարքների անվավերությանը վերաբերող դրույթները: Այսպես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի շահագրգռվածությամբ գործարքների կնքումը կարգավորող 47-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ գործարքը, որի կատարման մեջ առկա է շահագրգռվածությունը, որը կատարվել է սույն հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ, կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր՝ ընկերության կամ նրա մասնակցի հայցով: Խոշոր գործարքների վերաբերյալ նույն օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ սույն հոդվածի պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է ճանաչվել անվավեր դատարանի վճռով:

Ինչ վերաբերում է բաժնետիրական ընկերություններին, ապա դժվար չէ նկատել, որ վերջիններիս նկատմամբ, ի տարբերություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, որ օրենսդիրը փոքր-ինչ ավելի ուշադիր է գտնվել: Այսպես, խոշոր գործարքների վերաբերյալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 61-րդ հոդվածում նշվում է, որ սույն հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե ընկերության հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ նշված պահանջներն ընկերությունը չի պահպանել:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընկերության բաժնետերերն իրավունք ունեն պահանջելու անվավեր ճանաչել սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքը, ինչպես նաև՝ գործարքում շահագրգիռ ճանաչված անձանց կողմից գործարքի հետևանքով պատճառված վնասի հատուցում և գործարքից ստացված շահույթի վերադարձ ընկերությանը: Հատկանշական է, որ

Նույն հոդվածը, ի տարբերություն վերոնշյալ մյուս դրույթների, սահմանում է նաև օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածությամբ գործարքի վերաբերյալ պատասխանատվություն: Իսկ 65-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարքի հաստատումը խախտում կատարած անձին չի ազատում ընկերությանը կամ բաժնետերերին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից: Այս մասը հստակ չի սահմանում՝ արդյոք գործարքում խախտում կատարած անձը պատասխանատվություն է կրում այն դեպքերում, երբ համապատասխան մարմինը սխալմամբ հաստատել է օրենքի խախտմամբ կնքված գործարքը, և այն հետագայում անվավեր է ճանաչվել, թե նաև այն դեպքերում, երբ համապատասխան մարմինը, գիտակցելով, որ գործարքը կնքվել է օրենքի խախտմամբ, այնուամենայնիվ որոշել է հաստատել այն, սակայն, եթե այդպիսի գործարքի կնքման կամ այդպիսի գործարքի հաստատման պատճառով որևէ բաժնետեր վնաս է կրում, նա կարող է պահանջել հատուցում: Սույն աշխատանքում շրջանակներում մենք արդեն անդրադարձել ենք բաժնետիրական ընկերությունների կողմից առանց համապատասխան մարմնի որոշման նման գործարքներ կնքելուն և հետագայում այդպիսի գործարքների կնքման մասին որոշումներ կայացնելու անսպասակալ արմարության և օրենքի բովանդակությանը անհամապատասխանության հարցին<sup>1</sup>:

Այսպես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են, որ գործարքում շահագրգիռ ճանաչված անձն ընկերության առջև պատասխանատվություն է կրում սույն օրենքի խախտմամբ կնքված գործարքի հետևանքով ընկերությանը պատճառված վնասների չափով: Գործարքում շահագրգիռ ճանաչված անձը պարտավոր է նաև ընկերությանը վերադարձնել ցանկացած շահույթ, որ ստացել է սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքներից: Նշված օրենքի 63-րդ հոդվածի պահանջները խախտող անձինք պատասխանատվություն են կրում խախտման հետևանքով ընկերությանը կամ այլ անձանց պատճառված

<sup>1</sup> Առանց համապատասխան մարմնի որոշմամբ կնքված շահագրգռվածությամբ գործարքների մասին տե՛ս սույն աշխատանքի 2, § 2:

վնասի համար: Եթե պատասխանատվության ենթակա է մի քանի անձ, ապա նրանք ընկերության և այլ շահագրգիռ անձանց առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Կարելի է եզրակացնել, որ 65-րդ հոդվածի 7-րդ մասը, սահմանելով, որ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարքի հաստատումը գործարքում խախտում կատարած անձին չի ազատում սույն օրենքի խախտմամբ կնքված գործարքի հետևանքով ընկերությանը կամ բաժնետերերին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից, մատնանշում է վնասների փոխհատուցման պահանջի և գործարքի անվավերության պահանջների տարանջատումը: Այսինքն՝ վնասների փոխհատուցման պահանջը չպետք է պայմանավորված լինի գործարքի անվավերության հետ, քանի որ վնասները կարող են հասցվել ոչ միայն գործարքների կնքման սահմանված կարգը խախտելու հետևանքով: Օրինակ, պատկերացնենք մի իրավիճակ, երբ բաժնետիրական ընկերության տնօրենը կնքել է գործարք, որի առարկայի արժեքը կազմում է ընկերության ակտիվների արժեքի 40%-ը, և ընկերության խորհուրդը կայացրել է համապատասխան որոշումը, սակայն քվեարկությանը մասնակցել է շահագրգիռ անձ, իսկ գործարքով օտարվող գույքը վաճառվում է շուկայականից ակնհայտ ցածր գնով: Այս դեպքում պատճառված վնասների գումարը կկազմի այնքան, ինչքան որ էժան օտարվել է գույքը: Հիմա պատկերացնենք, թե խորհուրդը կայացրել է այդ գործարքի կատարումը հաստատող որոշումը առանց շահագրգռված անդամների ձայները հաշվի առնելու: Թեև գործարքը կնքվել է առանց «Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի»՝ շահագրգռվածությամբ գործարքների վերաբերյալ համապատասխան դրույթների խախտմամբ, միևնույնն է, ընկերությանը պատճառվել է վնաս, և արդեն ընկերության, օրինակ, բաժնետերը արդեն կարող է ոչ թե գործարքն անվավեր ճանաչելու, այլ բաց թողնված օգուտը բռնագանձելու հայ ցապահանաջ ներկայացնել:

Վերադառնալով վերոնշյալ գործարքների անվավերության վերաբերյալ պահանջ ներկայացնելու իրավունքի սուբյեկտների քննարկմանը՝ նախ նկատենք, որ, ինչպես արդեն նշել ենք,

վերոհիշյալ նորմերի բովանդակությունն ինչ ոչ մի կերպ չի բխում, որ անվավերության պահանջ ներկայացնելու սուբյեկտները պարտադիր պետք է գործարքի կնքման հետևանքով վնաս կրած լինեն, այլ նրանց տվյալ իրավունքը ծագելու համար բավարար է քննարկվել իբրև գործարքների՝ միայն օրենքի պահանջների խախտմամբ կնքված լինելը:

Համեմատության համար նշենք, որ ինչպես ՀՀ, այնպես էլ ՌԴ օրենսդիրները սահմանում են, որ խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր կարող են ճանաչվել, եթե չեն համապատասխանում օրենքի դրույթներին, և միաժամանակ ոչ մի նշում չեն պարունակում այդպիսի գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնողի իրավունքների կամ օրինական շահերի ուղղակի խախտման պայմանի մասին: Սակայն որոշ հեղինակներ կարծում են, որ մասնավորապես խոշոր գործարքների անվավերության վերաբերյալ դրույթները կապ չունեն ընկերության մասնակիցների շահերի իրական պաշտպանության հետ: Ի պաշտպանություն իրենց այդ տեսակետի՝ մատնանշվում է, որ պրակտիկայում շատ հաճախ խոշոր գործարքներն անվավեր ճանաչելու հայցապահանջները ներկայացնում են բաժնետերերը, որոնք տիրապետում են ընկերության ընդհանուր բաժնետոմսերի քանակի 1-2%-ին, այսինքն՝ գործարքն անվավեր ճանաչելու մեջ իրական շահ չունեցող անձինք: Հետևաբար, ինքնաբերաբար առաջ է գալիս եզրակացությունն այն մասին, որ նշված բաժնետերերն առաջնորդվում են ոչ թե իրենց, այլ գործարքի կնքումը տապալել ցանկացող, ինչու՞ չէ՝ նաև ընկերության կոնտրագենտին վնաս պատճառելու ցանկությունն ունեցող այլ անձանց շահերով: Այս ամենից որոշ հեղինակներ եզրակացնում են, որ խոշոր գործարքների անվավերության վերաբերյալ նորմերը ոչ միայն օգտակար չեն, այլ և վնասակար են, և օրենսդրական բարեփոխումներով դրանք հարկ է վերացնել<sup>1</sup>: Գրականության մեջ նշվում է նաև, որ առհասարակ խոշոր գործարքների վերաբերյալ դրույթները պայմանագրային հարաբերությունների կայունության սպառնալիք են, և հետևաբար

<sup>1</sup> Տե՛ս **Телюкина М.В., Тарасов В.И.** Целесообразность существования института крупных сделок в корпоративном и конкурсном праве // Законодательство. 2002, № 11, էջ 39:

խոչընդոտում են քաղաքացիական բնականոն շրջանառությանը<sup>1</sup>:

Մենք հակված ենք հակառակ տեսակետին և համակարծիք ենք այն քաղաքացիագետների հետ, որոնք կարծում են, որ խոչոր գործարքների ինստիտուտը անրաժեշտություն է, քանի որ խոչոր գործարքները կարգավորող նորմերը միաժամանակ իրականացնում են երկու կարևոր գործառույթներ: Առաջին հերթին, դրանք կոչված են ապահովելու բաժնետերերի կամ մասնակիցների իրավունքների իրականացումը և տնտեսական գործունեության սուբյեկտի բնականոն գործունեությունը, որոնք իրենց հերթին խթանում են քաղաքացիական շրջանառության կայունությունը<sup>2</sup>:

Վերոհիշյալ հեղինակների աշխատություններում խոչոր կամ շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ պահանջ ներկայացնելու իրավունքի սուբյեկտներին նվիրված քննարկումներում նշվում է, որ ՌԴ դատական մարմինները խոչոր գործարքներն անվավեր ճանաչելիս հիմնվում են այդպիսի գործարքների՝ օրենքի պահանջներին անհամապատասխան լինելու փաստի վրա՝ անտեսելով գործարքը վիճարկողի իրավունքերի կամ օրինական շահերի խախտման առկայության կամ բացակայության առաջնային նշանակությունը<sup>3</sup>: Ինչ վերաբերում է շահագրգռվածությամբ գործարքներին, հատկանշական է, որ շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ գործերում ՌԴ դատական մարմինները հայցապահանջ ներկայացնող կողմի իրավունքների կամ օրինական շահերի խախտման բացակայությունը գնահատում էին որպես հայցապահանջը մերժելու էական հիմք և պահանջում էին հայցվորից ապացուցել, թե որպես բաժնետեր իր որ իրավունքներն են խախտվել, և ինչ անբարենպաստ հեռանքներ է առաջացրել իր համար այդ գործարքի կնքումը<sup>4</sup>: Չնայած

<sup>1</sup> Տե՛ս Սборник памяти С.А. Хохлова. Под ред. Маковского А.Л.. –М.: Международный центр финансово-экономического развития, 1998, էջ 146:

<sup>2</sup> Տե՛ս **Լոմիձե Օ., Լոմիձե Յ.** Крупные сделки хозяйственных обществ, проблемы правового регулирования. 2003, №1, էջ 71: **Анохин В.** Теория и практика применения гражданско-правовых способов защиты прав акционеров // Хозяйство и право. 2003, № 8, էջ 56:

<sup>3</sup> Постановление Федерального арбитражного суда Московского округа от 02.08.2005, № КГ-А40/6734-05-П-2 // СПС Гарант: Постановление Федерального арбитражного суда Уральского округа от 24.05.2007, № Ф09-3833/07-С4 // СПС Гарант: Постановление Федерального арбитражного суда Волго-Вятского округа от 25.01.2006, № А17-67/1-2005 // СПС Гарант: Постановление Федерального арбитражного суда Северо-Кавказского округа от 12.01.2006, № Ф08-6325/05 // СПС Гарант:

<sup>4</sup> Տե՛ս Ս постановление Федерального арбитражного суда Поволжского округа от 31.05.2007, № Л06-6165/06 //СПС Гарант: Постановление Федерального арбитражного суда Восточно-Сибирского округа

դրան՝ առանձին դեպքերում ՌԴ դատարանների կողմից քննարկվելիք գործարքներն անվավեր էին ճանաչվում միայն դրանց՝ օրենքի պահանջներին անհամապատասխան կնքված լինելու փաստի ու ժողով<sup>1</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԵԴ/1246/02/09 քաղաքացիական գործով կայացրած որոշման մեջ արտահայտել է այն դիրքորոշումը, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ կետի վերլուծությունից բխում է, որ ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու համար անրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

- բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը կարող է ազդել քվեարկության արդյունքների վրա

- որոշումն ընդունելիս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտումը պետք է լինի էական<sup>2</sup>:

Ինչպես նկատում է Վ. Ավետիսյանը, վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ բաժնետերը կարող է ժողովի՝ օրենքի էական խախտումներով կայացրած որոշումը բողոքարկել, սակայն այն չի բավարարվի, որովհետև հնարավոր է՝ բողոքարկող բաժնետիրոջ՝ քվեարկությանը մասնակցելը չէր կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա<sup>3</sup>:

ՄԻԵԴ-ը կորպորատիվ իրավաբանությունն իրավունքի դատական կարգով պաշտպանության օրենսդրական սահմանափակումները որոշակի պայմանների առկայության դեպքում որպես ՄԻԵԿ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում չի դիտում՝ գտնելով, որ չնայած օրենսդրական սահմանափակումների շահառուները մասնավոր անձինք են, սակայն դա դեռ չի նշանակում, որ սահմանափակումների նախատեսումը չի հետապնդում հանրային շահ, այն է՝ կանխել ընկերության որոշումները վիճարկելու

---

от 06.03.2007, № А33-9194/2006-Ф02-920/2007 // СПС Гарант: Постановление Федерального арбитражного суда Северо-Западного округа от 23.06.2005, № А56-5491/04 // СПС Гарант: Постановление Президиума ВАС РФ от 12.11.2002, № 6288/02 // Вестник ВАС РФ, 2003, № 3:

<sup>1</sup> Տե՛ս Ստանովление Федерального арбитражного суда Московского округа от 07.06.2007, № КГ-А40-3604-07 // СПС Гарант:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԵԴ/1246/02/09 քաղաքացիական գործով 27.12.2010 կայացված որոշումը:

<sup>3</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնարկները Հայաստանի Հանրապետությունում, իրավ. գիտ. դոկտորի ատենախոս., Եր., ԵՊՀ, 2014, էջ 278:



չարաչահու մները, ինչն իր հերթին կնպաստի շուկայի կայունությանը: Սակայն դատարանը միաժամանակ արած անագրել է, որ սահմանափակումները և վերոնշյալ իրավաչափ նպատակները պետք է լինեն համաչափ<sup>1</sup>, ինչը վերը նշված իրավիճակում օրենսդրի կողմից չի ապահովվում:

Հարկ է համաձայնել վերոնշյալ հեղինակի այն տեսակետի հետ, որ արդարացի չէ բաժնետիրոջ՝ ընդհանուր ժողովի որոշումների վիճարկման հնարավորության սահմանափակումը բացառապես վերը նշված պայմաններով. օրինակ՝ բաժնետերը կարող է մասնակցել ժողովին և օրակարգ ներառված հարցի վերաբերյալ կողմ քվեարկել, սակայն հետագայում պարզվի, որ կառավարիչների կողմից նրան քվեարկող հարցի վերաբերյալ բավարար տեղեկություններ չեն տարամարկվել, որի արդյունքում նա քվեարկել է օրենքի էական խախտում պարունակող որոշման օգտին: Նման դեպքերում ևս բաժնետիրոջը պետք է տրվի ընդհանուր ժողովի որոշումները վիճարկելու էական հնարավորություն: Բաժնետիրոջն այդպիսի հնարավորություն պետք է տրվի նույնիսկ այն դեպքում, երբ նրան են երկու ձայների քանակությունը տվյալ որոշման կայացման գործում վճռորոշ չէ<sup>2</sup>:

ՌԴ-ում այս խնդիրը հետագայում լուծվեց քննարկվելիք խնդրի վերաբերյալ մեկ միասնական մոտեցում ձևավորելու միջոցով: Այսպես, ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումի 2007թ. հունիսի 20-ի որոշմամբ<sup>3</sup> շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնող հայցվորներն ազատվեցին գործարքով իրենց համար անբարենպաստ հետևանքների առաջացումն ապացուցելու պարտականությունից: Հարկ է նկատել նաև, որ այդ որոշման ընդունմամբ սահմանվեց ճիշտ հակառակը՝ անբարենպաստ հետևանքների բացակայության՝ որպես գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական

<sup>1</sup> Տե՛ս **Կոհլ հոֆերը և Մինարիկն ընդդեմ Չեխիայի** ՄԻԵԴ 15.10.2009թ. վճիռը (app. №32921/03/28464/04)

<sup>2</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ իրավաբանական գործի արդի հիմնադրամբ Հայաստանի Հանրապետությունում, իրավ. գիտ. դոկտորի ատենախոս., Եր., ԵՊՀ, 2014, էջ 279:

<sup>3</sup> Տե՛ս Постановление Пленума ВАС РФ «О некоторых вопросах практики применения положений законодательства о сделках с заинтересованностью» от 20.06.2007, № 40 // Вестник ВАС РФ, 2007, № 8:

հանգամանքը ապացուցելու պարտականությունը դրվեց պատասխանողի վրա<sup>1</sup>:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ նշենք, որ խոշոր կամ շահագրգռվածությունամբ գործարքների դեպքում գործարքն անվավեր ճանաչելու հիմք է այդպիսի գործարքների կատարման մասին համապատասխան մարմնի կողմից որոշումների կայացման՝ օրենքով սահմանված կանոնակարգերի խախտման փաստը: Կարծում ենք, որ համապատասխան օրենքներով սահմանված կարգի խախտմամբ ընկերության կողմից խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշման կայացումը և հետագայում դրա կնքումը, անկախ բաժնետիրոջ տիրապետման ներքո գտնվող բաժնետոմսերի քանակից և անկախ նրա կրած ուղղակի վնասի առկայությունից կամ բացակայությունից, բաժնետիրոջ՝ ընկերության կառավարմանը մասնակցելու և համապատասխան շահաբաժին ստանալու իրավունքի կոպիտ խախտումներ են:

Բացի դրանից, կարելի է եզրակացնել, որ ընկերության մասնակիցները կամ բաժնետերերը կամ ընկերությունը խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ գործերում պարտավոր չեն ապացուցելու, որ վիճարկելի գործարքներով խախտվել են իրենց իրավունքներն ու օրինական շահերը: Խնդիրն այստեղ բնավ այն չէ, թե արդյոք գործարքն իսկապես խախտել է կամ չի խախտել հայցվորի օրինական շահերը կամ իրավունքները, այլ այն է, որ գործադիր մարմինն այդպիսի գործարք կնքելու իրավասությունն չի ունեցել, այսինքն՝ առանց ընկերության՝ օրենքով սահմանված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու համար անրաժեշտ համապատասխան մարմնի որոշման չի ձևավորվել նաև գործարք կնքելու համար անրաժեշտներքին կամքը:

Խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջների պարագայում հարկ ենք համարում նշել նաև, որ երբ հայցապահանջ ներկայացնող ընկերության բաժնետերերը կամ մասնակիցները ներկայացնում են քննարկվելիք հայցապահանջները, այստեղ խոսքը այսպես կոչված

<sup>1</sup> Այս հանգամանքին մենք կանդորառնանք ստորև:

անուղղակի հայցերի մասին է: Այդպիսի հայցերով, Վ. Յարկովի բնորոշմամբ, պաշտպանվում են ոչ միայն մի խումբ բաժնետերերի, այլև ամբողջ ընկերության շահերը<sup>1</sup>: Նշենք նաև, որ անուղղակի հայցի կառուցվածքը ունի օրենսդրորեն ամրագրված նյութաիրավական հիմք, սակայն չունի դատավարական սահմանում, ինչը քաղաքացիական դատավարության գիտության մեջ առաջացրել է անուղղակի հայց ներկայացնող բաժնետիրոջ կամ բաժնետերերի դատավարական կարգավիճակի վերաբերյալ տարաբնույթ քննարկումներ. նրանց երբեմն անվանում են օրինական ներկայացուցիչներ<sup>2</sup>, առանձին դեպքերում՝ նաև հայցվորներ, իսկ մի քանի բաժնետերերին՝ համահայցվորներ<sup>3</sup>:

Անուղղակի են կոչվում այն հայցերը, որոնք ներկայացվում են բաժնետիրոջ կամ մասնակցի կողմից և ուղղված են ամբողջ ընկերության ու ընկերության բոլոր մասնակիցների կամ բաժնետերերի շահերի պաշտպանությանը, սակայն որով անուղղակիորեն պաշտպանվում են նաև հայցապահանջ ներկայացրած մասնակցի կամ բաժնետիրոջ շահերը: Օրինակ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 65-րդ հոդվածը սահմանում է, որ ընկերության բաժնետերն իրավունք ունի ընկերության կողմից օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածությամբ գործարքն անվավեր ճանաչելու և գործարքից ստացված եկամուտը ընկերությանը վերադարձնելու պահանջ ներկայացնել:

Այս դեպքում ուղղակիորեն պաշտպանվում են ընկերության շահերը, իսկ անուղղակիորեն դատարան դիմած բաժնետիրոջ: Տ. Սախնովան նշում է, որ այդպիսի հայց կարող են ներկայացնել նյութաիրավական անձնական շահ ունեցող անձինք, իսկ անձնական շահը կախված է ընկերության շահից, և չպաշտպանելով ընկերության շահը՝ հնարավոր չէ օրենքի խախտմամբ կատարված գործողություններից պաշտպանել նաև առանձին վերցրած բաժնետիրոջ անձնական շահը: Այդ իսկ պատճառով մեկ վարույթի շրջանակներում հնարավոր չէ միաժամանակ պաշտպանել և՛

<sup>1</sup> Տե՛ս **Ярков В.В.** Защита прав акционеров по Закону «Об акционерных обществах с помощью косвенных исков» // Хозяйство и право. 1997, № 11, էջ 74-78:

<sup>2</sup> Տե՛ս **Осокина Г.Л.** Иск: теория и практика. –М.: Городец, 2000, էջ 95-106:

<sup>3</sup> Տե՛ս **Решетникова И.В., Хинкин П.В., Ярков В.В.** Защита прав инвесторов. –М.: «Деловой экспресс», 1998, էջ 71-74:

ուղղակի, և՛ անուղղակի շահը<sup>1</sup>:

Ինչպես պարզաբանում է Վ. Յարոկովը, այսպիսի հայցատեսակները վաղուց հայտնի են մի շարք զարգացած երկրների օրենսդրություններին և արտացոլում են ընկերության կամ դրամասնակիցների հնարավորությունները՝ ստիպել ընկերության կառավարիչներին ու գործադիր մարմնի անդամներին՝ հետևելու որոշակի վարքագծի կանոնների, ինչը հեշտությամբ լուծում է ընկերության սեփականատերերի և ղեկավարների միջև կոնֆլիկտները: Յեղիսակը նշում է, որ անուղղակի հայցեր ներկայացնում են ընկերության այն բաժնետերերը, որոնք կրել են վնասներ այն իմաստով, որ վերջին հաշվով բաժնետերերը պաշտպանում են իրենց սեփական շահերը, քանի որ վնասների փոխատուցումից հետո ինքնաբերաբար պետք է բարձրանա բաժնետոմսերի արժեքը, հետևաբար կավելանան ընկերության ակտիվները<sup>2</sup>:

Ավելացնենք նաև, որ այն դեպքերում, երբ բաժնետերերն իրենց անձնական օրինական շահերի և իրավունքների պաշտպանության հայցապանջներ են ներկայացնում, նրանք հանդես են գալիս որպես ուղղակի շահառուներ, քանի որ նրանց տրամադրվում է փոխատուցում իրենց կրած վնասների չափով: Անուղղակի հայցերի պարագայում ուղղակի շահառու է հանդիսանում ընկերությունը, հօգուտ որի բռնագանձվում է գույք: Այս դեպքում բաժնետերերի օգուտը կամ շահը անուղղակի է, քանի որ նրանք անձամբ ոչինչ չեն ստանում:

Օրենքի պահանջների խախտմամբ կնքված խոշոր ու շահագրգռվածությամբ գործարքների անվավերությանն անդրադառնալիս հարկ է առանձնակի ուշադրության արժանացնել Քաղ. օր. 315-րդ հոդվածով սահմանված դեպքերին, երբ բախում է տեղի ունենում ներքին կամքի և արտաքին կամքի միջև: Նշված հոդվածը մասնավորապես սահմանում է. «Եթե անձի՝ գործարք կնքելու լիազորությունները սահմանափակված են պայմանագրով կամ

<sup>1</sup> Տե՛ս **Сахнова Т.В.** Курс гражданского процесса, теоретические начала и основные институты. –М.: «Волтерс Клувер», 2008, էջ 311:

<sup>2</sup> Տե՛ս **Ярков В.В.** Защита прав акционеров по Закону «Об акционерных обществах» с помощью косвенных исков // Хозяйство и право. 1997, № 11, էջ 74-78:

իրավաբանական անձի մարմնի լիազորությունները՝ նրա կանոնադրությամբ, համեմատած այն լիազորությունների հետ, որոնք սահմանված են լիազորագրում, օրենքում կամ ակնհայտ են այն իրադրությունից, որում կնքվել է գործարքը, և դա կնքելիս նման անձը կամ մարմինը դուրս է եկել այդ սահմանափակումների շրջանակներից, դատարանը կարող է գործարքն անվավեր ճանաչել այն անձի հայցով, ի շահ որի սահմանված են սահմանափակումները, միայն այն դեպքերում, երբ կապացուցվի, որ գործարքի մյուս կողմը գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար նշված սահմանափակումների մասին»:

Նախ նկատենք, որ այս հոդվածը իր ոչ այնքան հստակ շարադրանքի պատճառով հաճախ թյուրըմբռնումների պատճառ է դառնում: Տարբեր մասնագետների շրջանում կարծիք է ձևավորված, որ խոշոր ու շահագրգռվածությամբ գործարքները անվավեր են ճանաչվում հենց այս հոդվածի հիման վրա և հենց այս հոդվածով սահմանված անձանց պահանջով:

S. Բարսեղյանը, անդրադառնալով Քաղ. օր. 315-րդ հոդվածին, նշում է, որ այս հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի մարմնի կնքած գործարքներն անվավեր ճանաչելու համար նախ անրաժեշտ է, որ իրավաբանական անձի մարմնի գործարք կնքելու իրավասությունները սահմանափակված լինեն պայամանագրով կամ հիմնադիր փաստաթղթերով: Երկրորդ՝ իրավաբանական անձի մարմնի՝ գործարք կնքելու իրավասություններն ավելի պակաս պետք է լինեն այն լիազորություններից, որոնք բխում են օրենքից, լիազորագրից կամ գործարք կնքելու իրավիճակից: Երրորդ՝ իրավաբանական անձի մարմինը, գործելով օրենքի, լիազորագրի կամ գործարքի կնքման իրավիճակից բխող լիազորությունների շրջանակում, դուրս գա գործարքի կնքման համար վերապահված սահմանափակ իրավասություններից, այսինքն՝ խախտի նախատեսված սահմանափակումները<sup>1</sup>:

Այս դեպքում խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքների համար օրինակ կարող է ծառայել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքի 48-րդ

<sup>1</sup> Տե՛ս **Բարսեղյան S.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս առաջին, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2014, էջ 233-234:

հողվածը, որի 1-ին մասը, սահմանելով խոշոր գործարքների հասկացությունը, նշում է, որ խոշոր են համարվում այն գործարքները, որոնց առարկայի արժեքը գերազանցում է ընկերության զուտ ակտիվների 25%-ը, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ խոշոր գործարքի այլ չափ: Այսինքն՝ եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չի, որ խոշոր են համարվում ոչ թե օրենքով սահմանված ընկերության ակտիվների 25%-ը գերազանցող գործարքները, այլ օրինակ՝ 10%-ը, ապա տվյալ պարագայում եթե ընկերության գործադիր մարմինն առանց համապատասխան մարմնի որոշման կնքի գործարք, որի առարկայի արժեքը կգերազանցի ակտիվների 10%-ը, այդ գործարքը պետք է դիտվի որպես Քաղ. օր. 315-րդ հոդվածի իմաստով իրավաբանական անձի մարմնի՝ գործարք կնքելու՝ կանոնադրությամբ սահմանափակված լիազորությունների սահմանազանցում:

Հարկ է նկատել, որ գործարքներն անվավեր ճանաչելիս պետք է հաշվի առնել, որ եթե իրավաբանական անձի մարմինը գործարք կնքելիս սահմանազանցել է օրենքով իրեն վերապահված լիազորությունները, ապա անվավերության իրավական հիմք կհանդիսանա ոչ թե Քաղ. օր. 305-րդ, այլ 315-րդ հոդվածը: Վերջինիս պարագայում, ինչպես մեկնաբանում է Օ. Գուտնիկովը, կարգավորվում են այն հնարավոր դեպքերը, երբ առաջին հայացքից ընկերության ներկայացուցչական մարմինն ունի գործարքի կնքման համար անրաժեշտ բոլոր իրավասությունները, որոնք բխում են օրենքից, լիազորագրից կամ գործարք կնքելու իրավիճակից: Այդ իրավասություններին կոնտրագենտը որպես կանոն ծանոթ է և իրավահարաբերությունների մեջ է մտնում մյուս կողմի հետ՝ ենթադրելով վերջինիս համապատասխան իրավասությունների առկայությունը: Սակայն այդ իրավասությունները երբեմն ունենում են լրացուցիչ սահմանափակումներ՝ սահմանված պայմանագրով կամ հիմնադիր փաստաթղթերով: Այդպիսի լրացուցիչ սահմանափակումները հաճախ անհայտ են լինում կոնտրագենտներին, որոնք բարեխղճորեն մտնում են իրավահարաբերությունների մեջ՝ ենթադրելով, որ մյուս կողմն ունի այն իրավասությունները,

որոնք սահմանված են օրենքով, լիազորագրով, կամ որոնք բխում են գործարք կնքելու իրավիճակից: Բարեխիղճ կողմի շահերի պաշտպանության նպատակներից ելնելով՝ այդպիսի գործարքները չեն համարվում անվավեր, բացառությամբ միայն այն դեպքերի, երբ ապացուցվում է, որ իրավաբանական անձի իրավասությունների սահմանազանցմամբ կնքված գործարքի մյուս կողմը գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար նշված սահմանափակումների մասին<sup>1</sup>:

Անդրադառնալով գործարքի մյուս կողմի՝ վերոնշյալ սահմանափակումների մասին կոնտրագենտի իմանալ կամ չինամանալու հարցին, նշենք որ Քաղ. օր. 315-րդ հոդվածը գործարքներն անվավեր ճանաչելու հիմքերի առկայության առումով վճռորոշ նշանակություն է տալիս այդ հանգամանքին: Ուստի այդ հանգամանքը մտնում է ապացուցման առարկայի մեջ, սակայն պարզ չէ՝ հայցվորը, թե՞ ինքը՝ կոնտրագենտը պետք է ապացուցի առկա սահմանափակումների ակնհայտ ինելու փաստը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործարքին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնի համաձայն հայցվորը պետք է ապացուցի իր պահանջների հիմքում ընկած փաստերը, քանի որ նա է պնդում այդ փաստերի գոյությունը և այդ փաստերի հետ են իրավունքի նորմերը կապում որոշակի իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Այս տրամաբանությամբ է ձևակերպված ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը մրցակցային դատավարությունը ունեցող երկրների, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական դատավարական օրենսդրության մեջ<sup>2</sup>:

Քանի որ հայցապանջ ներկայացնող անձը, ըստ Քաղ. օր. 315-րդ հոդվածի, գործարքն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում պետք է դնի առկա սահմանափակումների մասին գործարքի մյուս կողմի իմանալու փաստը, վերջինիս ապացուցման պարտականությունը պետք

<sup>1</sup> Տե՛ս Гутников О.В. Недействительные сделки в гражданском праве, Теория и практика оспаривания. –М.: «Бератор-Пресс», 2003, էջ 376:

<sup>2</sup> Տե՛ս Մեղրյան Ս.Գ., Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում (դասախոսություններ), -Եր., ԵՊՀ, 2011, էջ 98-100:

Ե դրվի այ դ փաստը վկայ ակոչողի, այ սինքն՝ հայ ցվորի վրա:

Ինչ վերաբերում է բաժնետիրական ընկերություններին, ապա նշենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը, ի տարբերություն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքի, հնարավորություն չի տալիս ընկերության կանոնադրությամբ սահմանել խոշոր գործարքների առարկայի արժեքի ավելի ցածր շեմ, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ<sup>1</sup>: Ուստի բաժնետիրական ընկերությունների պարագայում Քաղ. օր. 315-րդ հոդվածը կարող է կիրառվել, եթե հիմնադիր փաստաթղթերով նախատեսված լինեն այլ սահմանափակումներ:

Շահագրգռվածությամբ գործարքների պարագայում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածը, սահմանելով գործարքի կնքման մեջ արտեսցիալ շահագրգռվածություն ունեցող անձանց շրջանակը, նշում է, որ վերջիններիս փոխկապակցված անձանց շրջանակը կարող է լրացվել կանոնադրությամբ: Այսինքն՝ ընկերությանը հնարավորություն է տրվում սահմանել նաև այլ դեպքեր, երբ կնքվող գործարքները կարող են համարվել շահագրգռվածությամբ կնքված: Դա նշանակում է, որ կանոնադրությամբ գործարքները շահագրգռված ճանաչելու այլ չափանիշների առկայությունը կհանդիսանա գործադիր մարմնի իրավասությունների սահմանափակում, համեմատած այն իրավասությունների հետ, որոնք սահմանված են օրենքով: Յետևաբար այս դեպքերում նույնպես, գործարքի անվավերության վերաբերյալ հայ ցապահանջի հիմք է հանդիսանում Քաղ. օր. 315-րդ հոդվածը:

Քաղ. օր. 315-րդ հոդվածի և շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու վերաբերյալ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքների դրույթների համեմատությունը հնարավորություն է տալիս նկատելու, որ առաջին դեպքում գործարքներն անվավեր կճանաչվեն, եթե ապացուցվի, որ կոնտրագենտը տեղյակ է եղել առկա սահմանափակումների մասին, իսկ

<sup>1</sup> Այդ մասին մենք արդեն խոսել ենք սույն աշխատանքի շրջանակներում: Տե՛ս գլուխ 1, § 2:



երկրորդ դեպքում, նույնիսկ եթե կոնտրագենտը տեղյալ չի եղել գործարքում շահագրգռվածության առկայության մասին, միևնույնն է, գործարքը կարող է անվավեր ճանաչվել: Այդ հանգամանքին ուշադրություն դարձրել մի շարք հեղինակներ, որոնցից Ա. Շիչանինը և Օ. Գրիվկովը նշում են, որ տնտեսական ընկերության կոնտրագենտը շահագրգռվածությամբ գործարքներ կնքելիս գրեթե դուրս է մղված այն անձանց շրջանակից, ովքեր կարող են արդյունավետ պաշտպանել իրենց իրավունքները: Տպավորություն է ստեղծվում, որ օրենսդիրը պարզապես տարվել է տնտեսական ընկերությունների շահերի պաշտպանությամբ՝ լիովին անտեսելով այդ ընկերությունների կոնտրագենտների շահերը<sup>1</sup>:

Ինչպես արդարացիորեն նկատում է Ս. Բուռլակովը, իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանվածության աստիճանը ուղիղ համեմատական է իրենց կոնտրագենտների շահերի պաշտպանվածությանը. ինչքան շատ երաշխիքներ են տրված մի կողմին, այնքան քիչ են դրանք մյուս կողմի համար<sup>2</sup>:

Նույնաման դիրքորոշում են հայտնել նաև այլ հեղինակներ, համաձայն որոնց՝ ապահովելով քաղաքացիական շրջանառության մեկ սուբյեկտի բնականոն գործունեությունը, օրենսդիրը չպետք է խաթարի մեկ այլ սուբյեկտի գործունեությունը: Նրանք նշում են, որ սահմանված ընթացակարգերի խախտմամբ կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու համար նշանակություն չունի կոնտրագենտի տեղեկացվածության աստիճանը: Նրանց կարծիքով, հարկ է քննարկել նոր, ավելի պարզ չափանիշներ ներդնելու հնարավորությունը<sup>3</sup>:

Կարծես թե անրաժեշտ է թվում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքներում ներառել դրոյթներ այն մասին, որ առանց համապատասխան ընթացակարգերի պահպանմամբ կնքված շահագրգռվածությամբ գործարքների

<sup>1</sup> Տե՛ս **Шичанин А., Гривков О.** Оспоримость сделок, в совершении которых имеется заинтересованность //Российская юстиция. 2003, № 4, էջ 19-20:

<sup>2</sup> Տե՛ս **Бурлаков С.А.** Правовое регулирование крупных сделок юридических лиц. Дисс... к.ю.н. - М., 2010, էջ 140:

<sup>3</sup> Տե՛ս **Ломидзе О., Ломидзе Э.** Крупные сделки хозяйственных обществ: проблемы правового регулирования, 2003, №1, էջ 71:

անվավերության պահանջ ներկայացնելիս ընկերության մասնակիցները կամ բաժնետերերը կամ ընկերությունը պետք է ապացուցեն, որ կոնտրագենտը գիտեր կամ պարտավոր էր իմանալ գործարքում առկա շահագրգռվածության մասին: Համեմատության համար նշենք, որ բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ նմանատիպ եզրահանգման է եկել ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի պլենումը, որի որոշման մեջ նշվում է՝ եթե ապացուցվի, որ կնքված երկկողմանի գործարքով մյուս կողմը կամ միակողմանի գործարքով շահառուն չգիտեին և պարտավոր էլ չէին իմանալ գործարքում շահագրգռվածության առկայության և գործարքի կնքման համար անրաժեշտ ընթացակարգերը չպահպանելու մասին, ապա վիճարկվող գործարքը դատարանի կողմից չի կարող ճանաչվել անվավեր<sup>1</sup>: Այստեղ, հարկ է ուշադրություն նշել այն հանգամանքին, որ ՌԴ ԲԱԴ պլենումի ձևակերպման մեկնաբանությունից հետևում է, որ բաժնետիրական ընկերության կոնտրագենտն ինքն է պարտավոր ապացուցել, որ տեղյակ չի եղել վերոնշյալ հանգամանքերի առկայության կամ բացակայության մասին, եթե, իհարկե, նա դատարանում վկայակոչի այն փաստական հանգամանքը, համաձայն որի՝ ինքը վերոնշյալ հանգամանքերի վերաբերյալ որևէ տեղեկություն չի ունեցել և պարտավոր էլ չէր ունենալու: Մեր կարծիքով, ՌԴ ԲԱԴ պլենումի այս դիրքորոշումը չի արտացոլում ՌԴ քաղ. օր. 315-րդ հոդվածի, ինչպես նաև Քաղ. դատ. օր. 48-րդ հոդվածի ներքո դրված տրամաբանությունը: Համաձայն առաջինի՝ գործարքն անվավեր է ճանաչվում միայն այն դեպքերում, երբ իրավաբանական անձի մարմինը կնքել է այնպիսի գործարք, որը դուրս է իր իրավասությունների շրջանակից, կամ երբ ապացուցվում է, որ գործարքի մյուս կողմը գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար նշված սահմանափակումների մասին: Իսկ քաղաքացիական դատավարության կանոնների համաձայն, ինչպես արդեն նշեցինք Քաղ. օր. 315-րդ հոդվածի պարագայում, դիմողն ինքն է ապացուցում կոնտրագենտի տեղեկացված լինելու հանգամանքը, և բացի դրանից՝ նշված հանգամանքը մտնում է գործի լուծման համար էական

<sup>1</sup> Ст' у Постановление Пленума ВАС РФ «О некоторых вопросах практики применения положений законодательства о сделках с заинтересованностью» от 20.06.2007, № 40 // Вестник ВАС РФ, 2007, № 8, պարբ. 2:

նշանակություն ունեցող փաստերի շրջանակի մեջ, այլ ոչ թե ցանկության դեպքում կարող է վկայակոչվել պատասխանողի կողմից, ինչպես նախատեսված է ՌԴ ԲԱԴ պլենումի որոշմամբ:

Ա. Սերգեյևը նշում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցները պարտավոր են համոզվել՝ արդյոք իրենց կոնտրագենտը օժտված է անրաժեշտ իրավասության եկտությամբ, սակայն պարտավոր չեն իմանալու նրանց իրավասության եկտության առանձնահատկությունների, այդ թվում նաև՝ գործադիր մարմնի իրավասությունների սահմանափակված լինելու մասին<sup>1</sup>: Ավելիս, Յու. Եգորովը իրավաբանական անձի մարմնի իրավասությունները սահմանափակված լինելու մասին կոնտրագենտի իմացության վերաբերյալ դրույթը մեկնաբանելիս նշում է, որ չի կարելի պահանջել փակ բաժնետիրական ընկերության տնօրենի իրավասությունների բացահայտում այդ ընկերության կանոնադրության ուսումնասիրության միջոցով, իսկ այդպիսի իրավունքի սահմանումը կհակասի քաղաքացիական շրջանառության մասնակիցների բարեխղճության և ողջամտության կանխավարկածին:

Մասամբ չհամաձայնվելով վերոնշյալ հեղինակների հետ՝ նշենք, որ ՀՀ դեպքում խոշոր գործարքներ կնքելիս, այնուամենայնիվ, կոնտրագենտների շահերի պաշտպանության արդյունավետ միջոց է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Էլեկտրոնային համակարգը: Ցանկացած ոք, վճարելով սահմանված պետական տուրքը, կարող է պետական միասնական գրանցամատյանից Էլեկտրոնային տարբերակով ստանալ պետական գրանցում ստացած ցանկացած կազմակերպության մասին տարբեր տեղեկություններ, այդ թվում նաև՝ նրա կանոնադրության պատճենը: Այս գործիքը թույլ է տալիս կոնտրագենտին մյուս կողմի կանոնադրությանը ծանոթանալու միջոցով պարզել՝ արդյոք գործարքը մյուս կողմի համար խոշոր է, թե ոչ, ինչպես նաև պարզել՝ արդյոք գործադիր մարմինն իրավասու է կնքելու տվյալ գործարքը<sup>2</sup>:

<sup>1</sup> Ст' у Гражданское право, Том 1. под ред **А.П. Сергеева**. –М.: «Велби», 2009, էջ 452:

<sup>2</sup> Հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Էլեկտրոնային համակարգը, սակայն, տեղեկություններ չի պարունակում բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի

Ուստի, քանի որ մյուս կողմի կանոնադրությանը ծանոթանալը կոնտրադեմոստրացիայի իրավունքն է, և համացանցում այդ կանոնադրությունը հանրությանը մատչելի է, կարելի է եզրակացնել, որ խոշոր գործարք կնքելիս կոնտրադեմոստրացիայի գործարքի մյուս կողմում հանդես եկող ընկերության կանոնադրությանը ծանոթ չլինելն իր իսկ թերացումն է, հետևաբար այն փաստը, որ կոնտրադեմոստրացիայի սկսած կարող էր իմանալ մյուս կողմի համար գործարքը խոշոր լինելու կամ օրենքի համեմատ կանոնադրությամբ գործադիր մարմնի իրավասության ներքին սահմանափակված լինելու մասին (Քաղ. օր. 315-րդ հոդվ.) բարդ չլինի ապացուցել:

Շահագրգռվածությամբ գործարքներ կնքելիս գործարքում շահագրգռվածության առկայության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում կոնտրադեմոստրացիայի մեր կարծիքով, պետք է օժտված լինի գործարքի մյուս կողմում հանդես եկող ընկերության փոխկապակցված անձանց ռեեստրը ծանոթանալու նպատակով պահանջելու և ստանալու իրավունքով: Ճիշտ է, փոխկապակցված անձանց գրանցամատյանը (ռեեստրը), համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 63-րդ հոդվածի, տեղեկություններ է պարունակում ընկերությանը փոխկապակցված անձանց շրջանակի վերաբերյալ, և քանի որ տարբեր գործարքների դեպքում գործարքի մյուս կողմում հանդես եկող կոնտրադեմոստրացիայի կարող են տարբեր լինել, բանականաբար կարող է այնպես պատահել, որ տվյալ գործարքում հնարավոր շահագրգռվածություն ունեցող անձը նշված չլինի այդ ռեեստրում: Այնուամենայնիվ կարծում ենք՝ մասնակի տեղեկությունները նույնպես տեղեկություններ են, և չի կարելի հերքել դրանց հնարավոր արդյունավետությունը:

---

կառավարիչների, կարգավորվող շուկայի օպերատորների, արժեթղթավորման հիմնադրամների, կենտրոնական դեպոզիտարիայի, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների և ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոյի, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների և այդ կազմակերպությունների մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների, հիմնարկների, ինչպես նաև այդպիսի օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների պետական գրանցման վերաբերյալ: Տե՛ս «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք:

Շահագրգռվածությունը ամբողջությամբ գործարքներում հնարավոր չարաչափահումներին կոնտրադեմոնստրացիաները պաշտպանելու մեկ այլ տարբերակ է կոնտրադեմոնստրացիայի կողմից մյուս կողմում հանդես եկող անձինք գործարքում շահագրգռվածության բացակայության մասին գրավոր ձևով տեղեկատվություն պահանջելու և ստանալու իրավունքը: Կնքված շահագրգռվածությունը ամբողջությամբ գործարքը հետագայում անվավեր ճանաչելու հայցապահանջ ներկայացնելու դեպքում դա թույլ կտա կոնտրադեմոնստրացիային հետտուրյամբ ապացուցել, որ ինքը չգիտեր և չէր ել կարող իմանալ գործարքում շահագրգռվածության առկայության մասին: Չարկ է նկատել՝ քանի որ դա հնարավորություն կտա կոնտրադեմոնստրացիային ապացուցելու գործարքում շահագրգռվածության վերաբերյալ իր չտեղեկացված լինելու փաստը, ապա գործադիր մարմինը դժվար թե դիմի կեղծ տեղեկություններ հաղորդելու քայլի, որովհետև ակնհայտ կեղծ տեղեկատվության տրամադրումը քրեորեն պատժելի արարք է:

Սույն պարագրաֆի շրջանկներում հարկ ենք համարում անդրադառնալ նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 63-րդ հոդվածին, որի 1-ին մասի համաձայն ընկերության փոխկապակցված անձինք պարտավոր են ընկերության գործադիր մարմնին կամ կանոնադրությամբ սահմանված այլ մարմնի տրամադրել տեղեկատվություն՝ ա) այն մասին, որ իրենք հանդիսանում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ՝ մինչև գործարքը կնքելը, բ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ՝ սույն կետով նախատեսված տեղեկատվությունն իրենց հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Վերլուծելով վերը շարադրված դրույթը՝ հարկ ենք համարում կատարել մի քանի նկատառումներ: Նախ՝ տեղեկատվությունը, որը 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով սահմանված անձինք պետք է հայտնեն համապատասխան մարմնին, կրում է ինքնին ակնհայտ բնույթ, այսինքն դժվար կլինի չնկատել, որ ընկերության գործարքում կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ է հանդիսանում ընկերության փոխկապակցված անձը: Ինչ վերաբերում է պատենցիալ շահագրգռվածություն և նեցող անձանց կողմից սույն հոդվածի «բ»

ենթակետով սահմանված՝ կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին տեղեկատվություն տրամադրելուն, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ, կարծում ենք, որ, ի տարբերությունն առաջին դեպքի, սահմանված ակնհայտ բնույթի չէ, այլ առավել ապես սուբյեկտիվ է և կարող է անհայտ մնալ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով սահմանվում է, որ ընկերության փոխկապակցված անձինք պարտավոր են տեղեկատվության տրամադրել կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ, սակայն այս ձևակերպումը, հաշվի առնելով իր ընդհանրացվածության աստիճանը, ներառում է բոլոր հնարավոր շահագրգռվածության արկայության դեպքերը, իսկ իրականում այն այլ բովանդակություն ունի: Մասնավորապես, այս ենթակետը վերաբերում է այն դեպքերին, երբ ընկերության փոխկապակցված անձը հանդիսանում է գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ: Այս ենթակետը, ի տարբերությունն առաջինի, նախատեսում է այն հնարավոր տարբերակը, որ շահագրգիռ համարավոր անձը գործարքի կնքման մասին տեղյակ չլինելու կամ գործարքի կնքման գործընթացում ներառված չլինելու ուժով կարող է և չիմանալ ինչ-որ գործարքում իր շահագրգռվածության մասին, ուստի սահմանում է, որ վերջինս կարող է և պարտավոր է հայտնել իր շահագրգռվածության մասին նույնիսկ արդեն կնքված գործարքների մասին: Իսկ որպես գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդես գալիս, ինչպես նշվում է «ա» ենթակետում, անհնար է, որ այդ անձինք չիմանան գործարքում իրենց շահագրգռվածության մասին, ուստի սահմանվում է, որ նրանք պարտավոր են այդ մասին տեղեկացնել ընկերության համապատասխան մարմնին մինչև գործարքը կնքելը:

Նշենք նաև, որ 63-րդ հոդվածի սահմանումներից կարելի է եզրակացնել, որ եթե երկու բաժնետիրական ընկերությունների միջև կնքվի գործարք, որը մի կողմի համար կհամարվի շահագրգռվածությամբ կնքվող, ապա հնարավոր չէ, որ այդ նույնը չհամարվի նաև մյուս կողմի համար:

Անդրադառնալով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից կնքվող շահագրգռվածությամբ գործարքներում շահագրգռված անձանց իրենց շահագրգռվածության մասին ընկերության համապատասխան մարմիններին տեղեկացնելու պարտավորությանը՝ նշենք, որ նման բան պարզապես սահմանված չէ: Չետևաբար անկհայտ է այդպիսի պարտականությունն շուտափուլյա սահմանելու անրաժեշտությունը:

Կարծում ենք, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի ներքո անրաժեշտ է ավելացնել նոր մաս՝ հետևյալ ձևակերպմամբ. ընկերության փոխակապակցված անձինք պարտավոր են մինչև գործարքը կնքելը հայտնել ընկերության գործադիր մարմնին կամ կանոնադրությամբ սահմանված այլ մարմնի այն մասին, որ իրենք հանդիանում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ, իսկ վերջիններիս փոխակապակցված անձինք՝ կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգռված անձ՝ սույն կետով նախատեսված տեղեկատվությունն իրենց հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

**§2. Խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերություն վերաբերյալ հայ ցապահանջ ներկայացնելու իրավունքի սուբյեկտների ու այդ իրավունքի իրականացման ժամկետների առանձնահատկությունները**

Նախորդ պարագրաֆում մենք արդեն նշել ենք, որ խոշոր ու շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայ ցապահանջներ ներկայացնելու իրավունք ունեն այդպիսի գործարք կնքած ընկերությունը և դրա մասնակիցները կամ բաժնետերերը: Չարկ ենք համարում առանձնակի ուշադրություն դարձնել վերոհիշյալ սուբյեկտների նշված իրավունքի իրականացման առանձնահատկություններին:

Այսպես, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 61-րդ ու 65-րդ հոդվածների և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ ու 48-րդ հոդվածների խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներն օրենքի խախտմամբ կնքված լինելու դեպքում կարող են անվավեր

ճանաչվել դատարանի վճռով: Ընդ որում, միայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասն է սահմանում, թե ովքեր են իրավասու այդպիսի հայցապահանջ ներկայացնելու: Համաձայն նշված հոդվածի՝ անվավերության վերաբերյալ դատական հայց կարող է ներկայացնել ընկերությունը կամ նրա մասնակցը: Օրենսդիրն այդ կերպ առանձնացնում է սուբյեկտների միայն երկու խումբ, ովքեր կարող են քննարկվել իբրև գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնել:

Անդրադառնալով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում ուղղակիորեն նշված՝ անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի այն սուբյեկտներին, որոնց՝ այդպիսի իրավունքի իրականացումն առաջացնում է մի շարք տեսական և կիրառական բնույթի խնդիրներ: Այսպես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից պարզ չէ, թե նկատի ունի ընկերության ցանկացած մասնակից, թե խոսքը հստակ սահմանված որոշակի մասնակիցների մասին է: Այս պարագայում, պայմանավորված բաժնեմասի ձեռքբերման և համապատասխան գործարքի կնքման ժամանակահատվածների հարաբերակցությամբ, հնարավոր է տարբեր խնդիրների առաջացում:

Մասնավորապես հարց է առաջանում՝ արդյոք կարող է քննարկվել իբրև հայցապահանջը ներկայացնել այն անձը, որը գործարքը կնքելու պահին ընկերության մասնակից էր, բայց հայցապահանջը ներկայացնելու պահին դադարել է այդպիսի լիներուց: Ինչպես արդարացիորեն նկատում է Ա. Մակովսկայան, պատասխանը այս դեպքում պետք է լինի բացասական<sup>1</sup>: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածում խոսվում է ընկերության մասնակցի մասին, այսինքն՝ մատնանշվում է մասնակցի՝ հայցապահանջ ներկայացնելու պահին ունեցած իրավական կազմվիճակը: Այդ նորմը ընկերության մասնակցի կարգավիճակը կորցրած անձանց թույլ չի տալիս հայցապահանջ ներկայացնել: Բացի այդ, այն անձը, որն այլևս

<sup>1</sup> Ст' у **Маковская А.А.** Сделки с заинтересованностью и порядок их одобрения акционерным обществом // Экономика и жизнь. - М., 2004, էջ 121-122:



ընկերության մասնակից չէ գործարքի անվավերության պահանջի դեպքում արդեն կորցրած է լինում իր հնարավոր նյութական շահը, և այդպիսի գործարքը ոչ մի կերպ չի կարող անդրադառնալ նրա իրավունքներին և օրինական շահերին: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ իր՝ որպես ընկերության մասնակցի կարգավիճակը կորցրած անձը ընկերության կողմից կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջներ կայացնելու իրավունք չունի:

Հաջորդիվ, ընկերության մասնակցի կողմից խոշոր կամ շահագրգռվածությամբ կնքված գործարքները վիճարկելու իրավունքի շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք գործարքի անվավերության հայցապահանջ կարող է ներկայացնել այն մասնակիցը, որը գործարքի կնքման պահին չի հանդիսացել ընկերության մասնակից, սակայն իր բաժնեմասը ձեռք է բերել գործարքը կնքելուց հետո: Հատկանշական է, որ տվյալ հարցը բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ գրականության մեջ դարձել է լայնածավալ քննարկումների առարկա: Տարբեր քաղաքացիագետների կարծիքի համաձայն՝ խոշոր և շահագրգռվածությամբ կնքվող գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ կարող է ներկայացնել նա, ով թե՛ գործարքը կնքելու պահին, թե՛ համապատասխան հայցապահանջ ներկայացնելու պահին հանդես է եկել որպես ընկերության մասնակից: Այս մոտեցման կողմնակիցներ են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են՝ Վ. Դաբրավոլսկին, Ս. Բուդիլինը, Մ. Մարգոլինը և Գ. Շապկինը<sup>1</sup>: Ըստ Մ. Մարգոլինի՝ բաժնետիրոջ իրավունքների խախտումը տեղի է ունենում հենց գործարքը կնքելու պահին, ուստի գործարքը կնքելուց հետո բաժնետեր դարձած անձի իրավունքները չեն կարող ճանաչվել խախտված<sup>2</sup>:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ վիճարկելի գործարքը կնքելուց հետո ընկերությունում իր բաժնեմասերը նոր ձեռք բերած մասնակիցը կամ այլ կերպ ասած, նոր մասնակիցը նույնպես

<sup>1</sup> Տե՛ս մասնավորապես՝ **Добровольский В.И.** Проблемы корпоративного права в арбитражной практике. -М.: Волтерс Клувер, 2006, էջ 178: **Будылин С.Л.** Сделки хозяйственных обществ, в совершении которых имеется заинтересованность // Арбитражная практика. №7, 2005, էջ 23: **Марголин М.А.** Недействительные крупные сделки // Законодательство. 2001, №3, СПС Гарант: **Шапкина Г.** Как применять акционерное законодательство // Хозяйство и право. 2004, №1, էջ 30:

<sup>2</sup> Տե՛ս **Марголин М.А.** Недействительные крупные сделки // Законодательство. 2001, №3, СПС Гарант:



Վերջինս տրամաբանորեն բխում է բաժնեմասի՝ որպես առանձին, սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների համակացության հասկացություններից: Հայց ներկայացնելու իրավունքը՝ որպես ցանկացած սուբյեկտիվ իրավունքի տարր, ներառված է նաև այն իրավունքների մեջ, որոնք վերապահվում են մասնակցին ընկերության բաժնեմասերին տիրապետելու փաստի ուժով:

Անդրադառնալով ընկերության նախկին մասնակցի դատական պաշտպանության իրավունքը նոր մասնակցին փոխանցելու խնդրին՝ նշենք, որ դեռևս Վ. Ռյասենցևը ընդգծում էր, որ սուբյեկտիվ իրավունքների հետիրավահջորդության կարգով փոխանցվում է նաև դրանց դատական պաշտպանության իրավունքը<sup>1</sup>: Տ. Չեպիգը բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ գրում է, որ եթե բաժնեմասն օտարելու պահին բաժնետերն իրավունք ուներ վիճարկելու բաժնետիրական ընկերության որևէ գործողություն, ապա այդ իրավունքը, բաժնեմասերի օտարմանը զուգահեռ փոխանցվող մյուս իրավունքների հետ միասին փոխանցվում է բաժնեմասը ձեռք բերողին<sup>2</sup>:

Այսպիսի եզրակացության կարելի է հանգել նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի մեկնաբանությունից, համաձայն որի՝ բաժնեմասը ձեռք բերողին փոխանցվում են ընկերության մասնակցի՝ մինչև բաժնեմասի օտարումը ծագած իրավունքներն ու պարտականությունները:

Հատկանշական է նաև, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի համապատասխան դրույթների մեկնաբանությունները նույնպես թույլ են տալիս եզրակացնել, որ օրենսդիրը չի սահմանափակում ընկերության բաժնետերերի կամ մասնակիցների իրավական կարգավիճակը՝ պայմանավորված իրենց բաժնեմասերի օտարմամբ: Մասնավորապես, «Սահմանափակ

---

Էջ 278 : **Степанов П.В.** Корпоративные отношения в гражданском праве // Законодательство, 2002, № 6:

<sup>1</sup> Տե՛ս **Рясенцев В.Л.** Правопреемство в судебной и нотариальной практике // Советская юстиция, 1977, №20, էջ 6:

<sup>2</sup> Տե՛ս **Чепига Т.Д.** К вопросу о разрешении споров, связанных с оспариванием актов управления и сделок акционерного общества, на основании доктрины правопреемства // Вестник Федерального арбитражного суда Северо-Кавказского округа, №5, сентябрь-октябрь 2004:

պատասխանատվությանը ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 65-րդ հոդվածն իրենց ձևակերպումների ու ժողովներում են բռնորոշ այն անձանց, ովքեր գործարքն անվավեր ճանաչելու կամ վնասների փոխատուցում պահանջելու պահին ընկերության մասնակից կամ բաժնետեր են:

Կարծում ենք, որ ընկերության նոր մասնակիցը կամ բաժնետերը բաժնեմասեր ձեռք բերելու պահին միաժամանակ ձեռք է բերում նաև ընկերությանը մասնակցելու հետկապված ռիսկերը, որոնք կարող են պայմանավորված լինել ոչ միայն իրականացվելիք, այլև մինչև բաժնեմասերի ձեռքբերումը ծավալած գործունեությանը: Յետևաբար, ընկերության նոր մասնակիցն ընկերության նախկին մասնակիցներին հավասար իր իրավունքների պաշտպանության մեխանիզմների ներդրման կարիք է զգում:

Այս ամենը վկայում է, որ դժվար է համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք մերժում են ընկերության նոր մասնակցի մինչև իր բաժնեմասը ձեռք բերելն ընկերության կողմից կնքված խոշոր կամ շահագրգռվածությանը գործարքները վիճարկելու իրավունքը: Մեր կարծիքով, հայցապահանջ ներկայացնելու իրավունքը ընկերության մասնակցի հիմնական իրավունքներից է և բաժնեմասը փոխանցելիս սինգուլյար իրավահաջորդության կարգով անցնում է նոր մասնակցին: Այս տրամաբանությունը բխում է «Սահմանափակ պատասխանատվությանը ընկերությունների մասին» օրենքի 47-րդ ու 15-րդ հոդվածների և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 65-րդ հոդվածների և միջարք քաղաքացիագետների դիրքորոշումների վերլուծությանից:

Անդրադառնալով հայցային վաղեմության ժամկետին՝ նշենք, որ Քաղ. օր. 332-րդ հոդվածը սահմանում է, որ դրա ընդհանուր ժամկետը երեք տարի է: Միաժամանակ, Քաղ. օր. 333-րդ հոդվածի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատկամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

Բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությանը ընկերությունների դեպքում, երբ խոսքը վերջիններիս կողմից

կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարների մասին է, նշենք, որ Քաղ. օր. 317-րդ հոդվածը սահմանում է վիճարկելի գործարքներն անվավեր ճանաչելու և դրանց անվավերության հետևանքների կիրառման հատուկ ժամկետ, համաձայն որի գործարքներն անվավեր ճանաչելու և դրա անվավերության հետևանքների կիրառման հայց կարող է ներկայացվել, եթե գործարքը կնքվել է բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ, դրա դադարման օրվանից (313 հոդվածի 1-ին կետ) կամ այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել է կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին:

Ինչ վերաբերում է ընկերության ղեկավար մարմինների կայացրած որոշումների վիճարկման ժամկետներին, ապա նշենք, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 45-րդ հոդվածը սահմանում է հատուկ ժամկետ՝ ընկերության մասնակիցների կողմից իրենց դիմումի հիման վրասույն օրենքի, այլ իրավական ակտերի, ինչպես նաև ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ընդունված կամ ընկերության մասնակցի իրավունքները և օրինական շահերը խախտող ընդհանուր ժողովի որոշումը դատական կարգով անվավեր ճանաչելու համար: Մասնավորապես սահմանվում է, որ նման դիմում կարող է տրվել երկու ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ ընկերության մասնակիցն իմացել կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշում ընդունելու մասին:

Նշենք նաև, որ սույն աշխատանքում մենք կարծիք էինք հայտնել, որ ընկերության ղեկավար մարմինների, մասնավորապես ընկերության ժողովի կողմից քվեարկության արդյունքում ընդունված որոշումները հարկ է համարել միակողմանի գործարքներ: Մենք միակարծիք են Կ. Ավետիսյանի այն դիրքորոշմանը, որ կորպորատիվ իրավահարաբերություններին կայունություն և հաղորդելու և կորպորատիվ իրավահարաբերությունների մասնակիցների շահերի պաշտպանության արդյունավետությանը բարձրացնելու առումով անրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և հարակից օրենքներով

հստակեցնել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց կառավարման մարմինների որոշումների գործարք լինելու հանգամանքը, սահմանել կառավարման մարմինների որոշումների բողոքարկման վաղեմության հստակ ժամկետ, ինչպես նաև նման որոշումների անվավերության կիրառման հետևանքների առանձնահատկությունները՝ հաշվի առնելով կորպորատիվ իրավաբանությունների բոլոր մասնակիցների շահերի հավասարակշռման անրաժեշտությունը<sup>1</sup>:

Մենք կիսում ենք նաև Վ. Ավետիսյանի այն դիքորոշումը, համաձայն որի՝ պետք է սահմանել, որ ժողովի որոշումները կարող են վիճարկվել երեք ամսվա ընթացքում սկսված այն պահից, երբ անձը, որի իրավունքները խախտվել են այդ որոշմամբ, իմացել է կամ պետք է իմանար այդպիսի որոշման ընդունման մասին, բայց մեկ տարվանից ոչ ուշ՝ հաշված այն օրվանից, երբ այդ որոշումը ընդունելու մասին տեղեկությունները հրապարակվել են կամ այլ կերպ դարձել հանրամատչելի<sup>2</sup>: Կարծում ենք, որ իրար այդքան նման կազմակերպարավանական ձևեր են կազմակերպությունների համար առավել նպատակահարմար կլինի որոշումների վիճարկման համար հայցային վաղեմության միևնույն ժամկետը սահմանել:

Հաջորդիվ ուշադրություն է արժանի նաև այն հանգամանքը, որ խոշոր և շահագրգռվածությամբ գործարքները վիճարկելու իրավունքը ընկերության մասնակիցների և բաժնետերերի համար, ինչպես վերևում նշվեց, ծագում է այն պահից, երբ վերջիններս իմանանում են կամ պարտավոր են իմանալ այն հանգամանքների մասին, որոնք գործարքների անվավերության հիմք են<sup>3</sup>:

Ակնհայտ է, որ ընկերության նոր մասնակիցը վերոնշյալ հանգամանքների մասին չի կարող իմանալ ավելի շուտ, քան բաժնեմասերը ձեռք բերելուց հետո, ինչն իր հերթին նշանակում է,

<sup>1</sup> Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, իրավ. գիտ. դոկտորի ատենախոս., Եր., ԵՊՀ, 2014, էջ 280:

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 283:

<sup>3</sup> Տե՛ս **Марголин М.А.**, Недействительные крупные сделки // Законодательство, 2001, №3, СПС «Гарант», **Телюкина М.В.** Комментарий к Федеральному Закону «Об акционерных обществах». –М: Волтерс Клувер, 2005, <https://www.lawmix.ru/commlaw/1541>: **Чепига Т.Д.**, К вопросу о разрешении споров, связанных с оспариванием актов управления и сделок акционерного общества, на основании доктрины правопреимства // Вестник Федерального арбитражного суда Северо-Кавказского округа, №5, сентябрь-октябрь 2004:

որ քննարկվող գործարքների վիճարկման հայ ցայ ին վաղեմությանը տեսականորեն կարող է դառնալ անսահամանափակ, քանի որ ընկերության բաժնեմասերի նկատմամբ իրավունքների փոխանցմամբ ամեն անգամ մեխանիկորեն կերկարաձգվի նաև հայ ցապահանջներկայացնելու ժամկետը: Այսինքն՝ հնարավոր է, որ ընկերության կնքած գործարքը վիճարկվի 10 տարի անց՝ այն ժամանակ, երբ համեմատաբար ոչ վաղ անցյալում ընկերության բաժնեմասեր ձեռք բերած մասնակիցն իմանա այդ գործարքը օրենքի պահանջների խախտմամբ կնքված լինելու մասին և որոշի վիճարկել այն: Այս երեկույթն ակնհայտորեն անթույլատրելի է, քանի որ սպառնում է քաղաքացիական բնականոն շրջանառությանը և ոտնահարում է կոնտրագենտների շահերը:

Անդրադառնալով խոշոր կամ շահագրգռվածությանը գործարքների անվավերության վերաբերյալ հայ ցապահանջներ կերկայացնելու իրավունքի հաջորդ սուբյեկտներին՝ ընկերություններին, հարկ է նշել, որ գրականության մեջ նշվում է, որ ընկերություններն առավել հաճախայ դպիսի հայ ցապահանջներ են կերկայացնում ընկերության ղեկավարության փոփոխության դեպքերում, երբ նոր ղեկավարները սկսում են վերանայել այն գործարքները, որոնց հետ նրանք համաձայն չեն: Ընդ որում, հայ ցայ ին վաղեմության ժամկետը սկսում է հոսել ոչ թե այն պահից, երբ նոր ղեկավարությունը իմանում է օրենքի խախտմամբ կնքված գործարքների մասին, այլ՝ երբ այդ մասին իմանում է ընկերությունը՝ թեկուզև ի դեմս հին ղեկավարության<sup>1</sup>:

Ելնելով ընկերությունների կողմից գործարքների անվավերության հայ ցապահանջ կերկայացնելու մասին վերը նշված դիրքորոշումից՝ կարծում ենք, որ դա նույնությամբ կարելի է կիրառել նաև ընկերությունների նոր մասնակիցների պարագայում: Մասնավորապես կարելի է սահմանել, որ ընկերության նոր մասնակիցների, ինչպես նաև ընկերությունների ղեկավարության փոփոխման պարագայում նոր ղեկավարության համար գործարքների անվավերության վերաբերյալ հայ ցապահանջներ կերկայացնելու

<sup>1</sup> Տե՛ս **Ионцев М.Г.** Корпоративные захваты: слияния, поглощения, гринмэйл. –М.: «Ось-89», 2003, էջ 152: **Осиновский А.Д.** Акционер против акционерного общества. -СПб.: ООО «Издательство ДНК», 2006, էջ 93-94:

հայցային վաղեմությունը սկսում է հոսել ոչ թե այն պահից, երբ իրենք են տեղեկանում գործարքն օրենքի պահանջների խախտումներով կնքված լինելու մասին, այլ այն պահից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ այդ մասին տեղեկանում են ընկերության նախկին մասնակիցները կամ բաժնետերերը:

Հարկ է ընդգծել, որ խոսքը տվյալ պարագայում ոչ թե հենց այն բաժնետիրոջ կամ մասնակցի տեղյակ լինելու մասին է, որն օտարել է բաժնեմասը, կամ որից գործարքը վիճարկող անձը ստացել է իր բաժնեմասը, այլ ընկերության նախկին մասնակիցների մեծամասնության տեղյակ լինելու մասին: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է այն բանով, որ տեսականորեն շատ բարդ կլինի ապացուցել որևէ մասնակցի կողմից գործարքն օրենքի պահանջների խախտմամբ կնքված լինելու հանգամանքն իմանալու փաստը, հակառակ պարագայում դա կարող է նաև գործարքները վիճարկելու իրավունքի չարաշահումների հիմք դառնալ: Ուստի ավելի նպատակահարմար կլինի սահմանել, որ ընկերության նոր մասնակիցների համար քննարկվելիք հայցապահանջների հայցային վաղեմությունը սկսում է հոսել այն պահից, երբ ընկերության կողմից կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքը օրենքի պահանջների խախտմամբ կնքված լինելու մասին իմանում է ոչ թե ինքը՝ նոր մասնակիցը, այլ ընկերության մասնակիցների մեծամասնությունը: Կարծում ենք՝ այս մոտեցումն ավելի արդարացի է գոնե այնքանով, որ նոր մասնակիցներին ինչ-որ կերպ հնարավորություն է տալիս վիճարկելու նախկինում կնքված այն գործարքները, որոնք կարող են ինչ-ինչ եղանակներով անդրադառնալ իրենց՝ որպես ընկերության մասնակիցների շահերի վրա:

Նախորդ պարագրաֆում մենք նշել էինք, որ խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելիս հայցվորները պարտավոր չեն ապացուցելու, որ վիճարկվող գործարքով խախտվել են իրենց իրավունքներն ու օրինական շահերը: Մեր կարծիքը նույնն է նաև այն դեպքերում, երբ գործարքների անվավերության պահանջ է ներկայացնում գործարքի կնքումից հետո ընկերությունում բաժնեմասեր ձեռք բերած մասնակիցը, քանի որ հայցվորի փոխվելու



հանգամանքը ոչ մի կերպ չի ազդում գործարքն օրենքի խախտմամբ կնքված լիսենլու փաստի վրա:

Ուստի հայցային վաղեմության փաստացի անժամկետ դառնալու հանգամանքը այս կերպ այլևս ընկերության նոր մասնակիցներին կամ բաժնետերերին ընկերության կողմից նախկինում կնքված խոշոր և շահագրգռվածությանամբ գործարքները վիճարկելու իրավունքից զրկելու հիմք չի դառնա:

Ինչ վերաբերում է ընկերություններին, որոնք գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջներ ներկայացնելու իրավունքի սուբյեկտներ են, ապա նրանց այդ իրավունքը, ինչպես նշվեց, պետք է լինի այնպիսին, ինչպիսին առաջարկվեց ընկերության բաժնետերերի ու մասնակիցների համար: Մասնավորապես, ընկերություններին նոր ղեկավարությունը չպետք է օժտված լինի նախորդ ղեկավարության, օրինակ, հինգ տարի առաջ կնքած գործարքները վիճարկելու իրավունքով, անկախ այն բանից, թե ընկերության իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են այդպիսի գործարքներով, թե ո՛չ: Կարծում ենք, որ դա պարզապես անտրամաբանական կլինի: Այլ է հարցը, եթե սահմանված է գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջներ ներկայացնելու հայցային վաղեմության հստակ ժամկետ: Ուստի մենք համակարծիք ենք այն հեղինակների հետ, որոնք գտնում են, որ մեկ տարի տևողությամբ հայցային վաղեմության ժամկետը պետք է հոսի ոչ թե այն պահից, երբ նոր ղեկավարությունը իմանում է օրենքի խախտմամբ կնքված գործարքների մասին, այլ այն պահից, երբ պարզապես այդ մասին իմանում է ընկերությունը՝ թեկուզև ի դեմս հին ղեկավարության<sup>1</sup>:

Չաջորդիվ հարկ է պարզել՝ արդյոք շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ կարող են ներկայացնել գործարքում շահագրգիռ ճանաչված ընկերության մասնակիցները կամ բաժնետերերը: Քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքների՝ շահագրգռվածությամբ գործարքների վերաբերյալ դրույթները

<sup>1</sup> Տե՛ս **Ионцев М.Г.** Корпоративные захваты: слияния, поглощения, гринмэйл. –М.: «Ось-89», 2003, էջ 152: **Осиновский А.Д.** Акционер против акционерного общества. –СПб.: ООО «Издательство ДНК», 2006, էջ 93-94:

գործարքում հնարավոր շահագրգռվածությունն ունեցող անձանց շրջանակին են դասում նաև ընկերության մասնակիցներին և բաժնետերերին<sup>1</sup>, ինչպես նաև ելնելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից՝ կարելի է եզրակացնել, որ գործարքում շահագրգռվածությունն ունեցող ընկերության մասնակիցները և բաժնետերերը կարող են ներկայացնել այնպիսի գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ, որում նրանք շահագրգռված են:

Սակայն գոյություն ունի նաև այլ տեսակետ, համաձայն որի՝ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունք ունեն այն անձինք, որոնց իրավունքներն ու օրինական շահերը որևէ կերպ խախտվել են: Մասնավորապես, ըստ Ա. Մակովսկայայի, որպես ընկերության կողմից կնքվող գործարքում շահագրգռված անձ՝ բաժնետերը չի կարող պնդել, որ այնպիսի գործարքը նույնիսկ անուղղակիորեն խախտում է իր իրավունքներն ու օրինական շահերը<sup>2</sup>: Յեղիսակն իր դիրքորոշումը հիմնավորելու համար մեջբերում է ՌԴ արբիտրաժային դատարանի որոշումը, համաձայն որի՝ շահագրգռվածությամբ կնքվող գործարքների վերաբերյալ դրույթներն ուղղված են ընկերության այն մասնակիցների շահերի պաշտպանությանը, որոնք չեն դասվում գործարքում շահագրգռվածությունն ունեցող անձանց շրջանակին, ինչպես նաև՝ գործարքում շահագրգռվածությունն ունեցող ընկերության մասնակիցը չի կարող վիճարկել այդ գործարքը՝ հիմնվելով այնպիսի գործարքների կնքման՝ օրենքով սահմանված կարգի խախտման վրա<sup>3</sup>:

Մեր կարծիքով, հարկ է նախապատվությունը տալ Ա. Մակովսկայայի դիրքորոշմանը, որ գործարքի կնքմամբ չեն կարող խախտվել ընկերության այն մասնակցի կամ բաժնետիրոջ իրավունքները, ով շահագրգռված է այդ գործարքի կնքման մեջ և կարող է ազդել այնպիսի գործարքի պայմանների ձևավորման վրա:

<sup>1</sup> Ընկերության մասնակիցներին և բաժնետերերին գործարքի կնքման մեջ շահագրգռված անձանց շրջանակին դասելու վերաբերյալ մեր դիրքորոշումը տե՛ս գլուխ 2, § 2:

<sup>2</sup> Տե՛ս **Маковская А.А.** Сделки с заинтересованностью и порядок их одобрения акционерным обществом // Экономика и жизнь. – М., 2004, էջ 121:

<sup>3</sup> Տե՛ս Постановление ФАС СЗО от 14 ноября 2006 №008-5775/06, СПС Гарант:

Հիմնվելով վերոգրյալի վրա՝ կարող ենք փաստել, որ անրաժեշտ է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 65-րդ հոդվածը և «Սահմանափակ պատասխանատվություն ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածը ևրացնել հետևյալ նախադասությամբ. «Ծահագրգռվածությամբ կնքված գործարքը, որը կնքվել է սույն օրենքով սահմանված պահանջների խախտմամբ, կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր ընկերության կամ գործարքում չչահագրգռված ընկերության մասնակցի պահանջով»:

## ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսական ընկերությունների կողմից կնքվող խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների հասկացության, հատկանիշների ու առանձնահատկությունների վերլուծությունը, ինչպես նաև նշված գործարքների կնքման և վիճարկման կարգի իրավակարգավորման ուսումնասիրությունը թույլ են տալիս, իլրումն պաշտպանության ներկայացված մյուս դրույթների, կատարել որոշ տեսական ընդհանրացումներ և ձևակերպել ներքոշարադրյալ առաջարկությունները:

1. Գործարքների փոխկապակցվածության չափանիշներից ոչ մեկն առանձին վերցրած բացարձակ նշանակություն ունենալ չի կարող և պետք է դիտարկվի առկա մյուս չափանիշների հետ միասին: Փոխկապակցված պետք է համարել տնտեսական ընկերության կողմից կնքվող այն գործարքները, որոնց կնքումը պայմանավորված է նախկինում կամ միաժամանակ կնքվող այլ գործարքով, ինչպես նաև այն գործարքները, որոնք կնքվում են միասեռ գույքի վերաբերյալ տարբեր անձանց հետ կարճ ժամանակահատվածում, կամ տարաբնույթ գույքի վերաբերյալ մեկ անձի կամ այդ անձին փոխկապակցված այլ անձանց հետ՝ թեկուզև տարբեր ժամանակահատվածներում, սակայն երբ ենթադրվում է այդ գործարքների առարկա գույքի օգտագործումը միևնույն նպատակային նշանակությամբ:

2. Կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք պնդել, որ «առօրյա» կամ «բնականոն» բառերն ամենառանձին վերցրած տնտեսական ընկերության համար իմաստային առումով սուբյեկտիվ են, քանի որ մի ընկերության համար գործունեության որոշ ոլորտներ կամ գործարքներ կարող են առօրյա (սովորական) լինել, մյուսների համար՝ ոչ: Տնտեսական ընկերությունները՝ որպես կանոնադրական իրավունակությամբ օժտված առևտրային կազմակերպություններ, իրավասու են կնքելու իրենց կանոնադրային նպատակներից բխող և օրենքով չարգելված ցանկացած գործարք, այդ պատճառով ամենառանձին վերցրած դեպքում տվյալ տնտեսական ընկերությունն ինքը պետք է որոշի՝ արդյոք կնքվող

գործարքը առօրյա տնտեսական գործունեության շրջանակներում է, թե ոչ:

3. Գույքի անհատույց ձեռքբերման գործարքները, անկախ գործարքի առարկա գույքի արժեքից, միշտ կնքվում են իշահ գույքը ձեռք բերող տնտեսական ընկերության: Ուստի նշված բնույթի գործարքների կնքումն ավելի նպատակահարմար կլինի թողնել գործադիր մարմնի ղեկավարի բացառիկ իրավասության ներքո: Հաշվի առնելով այն իրողությունը, որ հատուցելի գործարքների դեպքում գույքի ձեռքբերումը միշտ գույքագործվում է այլ գույքի օտարմամբ, կարծում ենք՝ հատուցելի գործարքների միջոցով գույքի ձեռքբերումը որպես խոշոր գործարքների չափանիշ դիտարկելը ոչնչով հիմնավորված չէ: Հետևաբար ավելի ճիշտ կլինի խոշոր գործարքների շարքին դասել միայն գույքի օտարման կամ օտարման հնարավորությամբ գործարքները:

4. Լիովին նպատակահարմար է թվում տնտեսական ընկերության կողմից կնքվող գործարքները, որոնց առարկա աշխատանքներն ու ծառայությունները, մտավոր սեփականությունը կամ քաղաքացիական իրավունքի մյուս օբյեկտները, որոնց արժեքը գերազանցում է գործարք կնքող ընկերության ակտիվների՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված չափը, նույնպես դասել խոշոր և շահագրգռվածությամբ կնքված գործարքների շարքին:

5. Ընկերության խորհրդի կողմից որոշումներ ընդունելու համար խորհրդի անդամների անրաժեշտ ձայների հարաբերակցության, այլ կեպք ասած՝ քվորումի կարգավորման խնդրի լուծման ուղղությամբ տրամաբանական քայլ կարող է համարվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների խորհրդի կողմից խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումների ընդունումը կանոնակարգող դրույթ նախատեսելը: Մասնավորապես նպատակահարմար կլինի սահմանել. «խորհրդի կողմից խոշոր գործարքների կատարման մասին որոշումը խորհրդի բոլոր անդամների կողմից կայացվում է միաձայն, ընդ որում՝ հաշվի չեն առնվում խորհրդից դուրս եկած անդամների ձայները: Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ խոշոր գործարքի կատարման մասին որոշումը կարող է ընդունվել խորհրդի

անդամների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ»:

6. Անրաժեշտ ենք համարում, որ խոշոր գործարքների կատարման մասին ցանկացած որոշում, անկախ այն բանից՝ ընդունվել է ընդհանուր ժողովի, թե խորհրդի կողմից, նշում պարունակի գործարքի առարկայի, դրա կողմերի ու շահառուների, գործարքի գնի և մյուս էական պայմանների մասին, իսկ շահագրգռվածությամբ գործարքների պարագայում՝ նաև շահագրգռված անձանց և շահագրգռվածության բնույթի մասին:

7. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում, եթե ընկերությունում խորհուրդ է ձևավորվել, շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշում կայացնելու իրավասությունը կանոնադրությամբ խորհրդին հանձնելու հնարավորության նախատեսված չլինելը ոչնչով արդարացված չէ: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածը հարկ է փոփոխել և սահմանել, որ ընկերությունում խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում շահագրգռվածությամբ գործարքների կատարման մասին որոշում կայացնելու իրավասությունը ընկերության կանոնադրությամբ կարող է փոխանցվել ընկերության խորհրդին:

9. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դրույթը հարկ է փոփոխել և սահմանել. «Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածություն, միևնույն ժամանակ ընկերության գույքի օտարման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ շահագրգռվածությամբ գործարքների կնքումը կանոնակարգող դրույթների համաձայն»: Նույնաման դրույթ է պետք ներառել նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում:

10. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետի տառացի մեկնաբանությունից բխում է, որ ժողովի կողմից շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին որոշումները կայացվում են, եթե այդպիսի գործարքի առարկայի արժեքը և դրա դիմաց վճարման ենթակա գումարը միասին

վերցված կազմում կամ գերազանցում են օրենքով սահմանված շեմը: Ուստի կարծում ենք, որ օրենքի միատեսակ կիրառման նպատակով՝ օրենսդրի օգտագործած «և» շաղկապը անրաժեշտ է փոխարինել «կամ»-ով:

11. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասը ճիշտ կլինի փոփոխել և սահմանել, որ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը նաև այն դեպքերում, երբ գործարքի կնքման մեջ չշահագրգռված կամ խորհրդի ակնախանդամ են համարվում խորհրդի երեքից պակաս անդամներ: Հակառակ պարագայում՝ գործարքի կատարման մասին որոշման իրավասությունը փոխանցվում է ընդհանուր ժողովին:

12. Անրաժեշտ ենք համարում «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանել, որ շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին ընկերության խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող և գործարքի կնքման մեջ շահագրգռված չհամարվող խորհրդի անդամների կողմից:

13. Առաջարկում ենք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքում նախատեսել դրույթներ առ այն, որ ընկերությունում խորհուրդ ձևավորված լինելու դեպքում կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու մասին որոշումները, որոնց առարկայի արժեքը կամ գործարքով վճարման ենթակա գումարը չեն գերազանցում ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 10 տոկոսը (շեմը կարող է փոփոխվել ժողովի որոշմամբ), կայացվում են ընկերության խորհրդի կողմից: Ծահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող և գործարքի կնքման մեջ շահագրգռվածություն չունեցող անդամների ձայների թվի մեծամասնությամբ: Եթե նիստին մասնակցող խորհրդի անդամները, որոնք շահագրգռված չեն գործարքը կնքելու մեջ, չեն ձևավորում համապատասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ քվորում, մասնավորապես երբ

գործարքի կնքման մեջ չշահագրգռված կամ խորհրդի ակնախանդամ են համարվում խորհրդի Երեքից քիչ անդամներ, ապա հարցի հետագա քննարկումը պետք է փոխանցել մասնակիցների ընդհանուր ժողովին:

**14.** Ելնելով տարբեր կազմակերպությանների առանձնահատկություններից՝ ճիշտ կլինի որպեսզի բաժնետիրական ընկերություններին հնարավորություն տրվի իրենց կանոնադրությամբ սահմանելու շահագրգռվածությամբ գործարքներ կնքելու հարցը ժողովի քննարկամանը հանձնելու համար անհրաժեշտ գործարքի առարկայի արժեքի կամ գործարքով վճարման ենթակա գումարի այլ սահմանաչափ:

**15.** Ընկերության մասնակիցները կամ ընկերությունը, խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ գործերում հանդես գալով որպես հայցվոր, չպետք է կրեն վիճարկելի գործարքներով իրենց իրավունքներն ու օրինական շահերը խախտված լինելու փաստն ապացուցելու բեռը: Խնդիրն այստեղ բնավ այն չէ, թե գործարքն իսկապես խախտել է հայցվորի իրավունքները կամ օրինական շահերը, այլ այն է, որ գործադիր մարմինն այդպիսի գործարք կնքելու իրավասություն չի ունեցել, այսինքն՝ առանց համապատասխան մարմնի որոշման չի ձևավորվել նաև գործարքի կնքման համար անհրաժեշտներքին կամքը:

**16.** «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի՝ շահագրգռվածությամբ գործարքների կնքումը կանոնակարգող դրույթների ներքո նույնպես անհրաժեշտ է սահմանել, որ ընկերության փոխկապակցված անձինք մինչև գործարքը կնքելը պարտավոր են հայտնել ընկերության գործադիր մարմնին կամ կանոնադրությամբ սահմանված այլ մարմնի այն մասին, որ իրենք գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ են, իսկ վերջիններիս փոխկապակցված անձինք՝ կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ՝ գործարքում շահագրգռվածություն ունենալու մասին տեղեկությունն իրենց հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

**17.** Խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունքի սուբյեկտների



իրավական կարգավիճակը հստակեցնելու նպատակով անրաժեշտ է սահմանել, որ իր՝ որպես ընկերության մասնակցի կարգավիճակը կորցրած անձը չունի ընկերության կողմից կնքված խոշոր կամ շահագրգռվածությամբ գործարքներն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք: Ընկերության մասնակցի կողմից մեկ այլ անձի՝ նոր մասնակցի ընկերության բաժնեմասերը (բաժնետոմսերը) փոխանցելիս սինգուլյար իրավահաջորդության կարգով վերջինիս է անցնում նաև ընկերության կողմից նախկինում կնքված խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքը:

**18.** Ընկերության ղեկավարության փոփոխման դեպքերում մինչև այդ ընկերության կողմից կնքված խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների անվավերության վերաբերյալ հայցապահանջ ներկայացնելու իրավունքի իրականացման հայցային վաղեմության ժամկետը սկսում է հոսել ոչ թե այն պահից, երբ նոր ղեկավարությունն է իմանում օրենքի խախտմամբ կնքված գործարքների մասին, այլ այն պահից, երբ այդ մասին իմանում է ընկերությունը՝ թեկուզև ի դեմս հին ղեկավարության: Կարծում ենք՝ նույնանման մոտեցում կարելի է որդեգրել նաև ընկերության նոր մասնակիցների կողմից խոշոր և շահագրգռվածությամբ գործարքների վիճարկման պարագայում:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ,  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ**

**ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ**

1. ՀՀ Սահմանադրություն (05/07.1995թ.), 06.12.2015 թ. փոփոխություններով, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118,
2. «Մարդու իրավունքերի և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա (04.11.1950թ.), ՀՀՊՏ 2002.06.05/17(192),
3. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998թ.), ՀՀՊՏ 1998.08.10/17(50),
4. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (17.06.1998), ՀՀՊՏ 1998.09.09/20(53),
5. ՀՀ Դատական օրենսգիրք (21.02.2007), ՀՀՊՏ 2007.04.18/20(544),
6. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (03.04.2002թ.), ՀՀՊՏ 2002.05.21/15(190),
7. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք (25.09.2001), ՀՀՊՏ 2001.11.06/34(166),
8. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք (24.10.2001), ՀՀՊՏ 2001.12.07/38(170),
9. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք (11.10.2007), ՀՀՊՏ 2007.10.31/53(577),
10. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք (03.04.2001), ՀՀՊՏ 2001.05.18/14(146),
11. ՀՀ նախագահի 30.06.2012 թ. թիվ ՆԿ-96-Ա կարգադրությունը «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին», ՀՀՊՏ 2012.07.11/33(907), Հոդ. 827,
12. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 5-րդ

- գլխի («Իրավաբանական անձինք») փոփոխությունների հայեցակարգը, <http://www.moj.am/legal/view/article/726>,
13. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, <http://www.moj.am/legal/view/article/815>,
  14. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՌԴ Դաշնային օրենք (ընդունված 26.12.95թ.),
  15. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՌԴ Դաշնային օրենք,
  16. «Տնտեսական ընկերությունների մասին» Բելառուսի Հանրապետության օրենք (ընդունված 09.12.1992թ.),
  17. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենք (ընդունված 13.05.2003 թ.),
  18. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Մոլդովիայի Հանրապետության օրենք (ընդունված 02.04.1997թ.),
  19. UK Companies Act 1985, Act to consolidate the greater part of the Companies Act, Royal Assent 11th March 1985,
  20. UK Companies Act 2006, Royal Assent 8th November 2006,
  21. USA Uniform Limited Liability Company Act 1996,
  22. USA Revised Limited Liability Company Act 2006,
  23. Gesetz betreffend die Gesellschaft mit beschraenkter Haftung in der Fassung der Bekanntmachung vom 20 Mai 1898 (RGB1. S. 846), BGB1. III/FNA 4123-1

**ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱՃՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՍԱԿԱՆ**

**ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**

24. **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, -Եր., 1976, 1642 էջ,
25. **Ավետիսյան Վ.Դ.**, Բաժնետիրական իրավունք, ուսումնական ձեռնարկ,, -Եր., ԵՊՀ հրատ., 2005, 399 էջ,
26. **Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ իրավաբանությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, -Եր., ԵՊՀ հրատ., 2013, 400 էջ,

27. **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մասնաճյուղ, - Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 560 էջ ,
28. **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նկատմ (դատախոսության նկատմ), - Եր., ԵՊՀ, 2011, 256 էջ ,
29. **Алексий П.В., Лмаглобели Н.Д., Галузо В.Н., Еремичев И.А. и др.**, Корпоративное право. Учебное пособие для вузов. **Под ред.: И.А. Еремичева.** - М.: Юнити, Закон и право, 2005, 255 էջ ,
30. **Алиева К.** Квалификация сделок, выходящих за пределы обычной хозяйственной деятельности акционерного общества // Право и экономика. 2007, № 1, էջ 27-29,
31. **Анохин В.** Теория и практика применения гражданско-правовых способов защиты прав акционеров // Хозяйство и право. 2003, № 8, էջ 54-70,
32. **Бакшинская В.** О некоторых вопросах одобрения сделок с заинтересованностью // Закон. 2007, № 3, էջ 141-145,
33. **Будылин С. Л.** Крупные сделки хозяйственных обществ // Арбитражная практика. 2005, № 2, էջ 3-10,
34. **Будылин С.Л.** Сделки хозяйственных обществ, в совершении которых имеется заинтересованность // Арбитражная практика. 2005, №7, էջ 14-26,
35. **Варламова А.** Группа лиц и аффилированные лица: общее и особенное // Законодательство. 2007, N 12, էջ 27-32,
36. **Габов Л.В.** Сделки с заинтересованностью в практике акционерных обществ: проблемы правового регулирования. -М.: Статут, 2005, 410 էջ ,
37. **Гутников О.В.** Недействительные сделки в гражданском праве: Теория и практика оспаривания. -М.: «Бератор-Пресс», 2003, 574 էջ ,
38. **Дедов Д.И.** Конфликт интересов. -М.: «Волтерс Клувер», 2004, 288 էջ ,
39. **Добровольский В.И.** Проблемы корпоративного права в арбитражной практике. -М.: «Волтерс Клувер», 2016, 448 էջ ,
40. **Залесский В.В.** Законодательство об акционерных обществах // Право и экономика. 2002, № 7, էջ 92-94,
41. Постатейный комментарий к Федеральному закону «Об обществах с ограниченной ответственностью» от 8 февраля 1998г, № 14-ФЗ. Под. ред. **В.В. Залесского.** -М.: 1998, 239 էջ ,
42. **Игнатова Е.А.** Комментарий к Федеральному закону «Об обществах с

- ограниченной ответственностью» (постатейный). -М.: «Ось-89», 2005, 271 с ; ,
43. **Ионцев М.Г.** Корпоративные захваты: слияния, поглощения, гринмэйл. –М.: «Ось-89», 2003, 173 с ; ,
  44. **Кононов В.С.** Корпоративные правоотношения: понятие, признаки, сущность // Актуальные проблемы гражданского права. Сб. статей. Вып. 9. Под ред. **О.Ю. Шилохвоста**. -М.: 2005, с 50-102,
  45. **Ломакин Д.В.** Акционерное правоотношение. -М.: «Спарк», 1997, 156 с ; ,
  46. **Ломакин Д.В.** Корпоративные правоотношения: общая теория и практика ее применения в хозяйственных обществах. -М.: «Статут», 2015, 511 с ; ,
  47. **Ломакин Д. В.** Крупные сделки в гражданском обороте // Законодательство. 2001, №3, с 18-25,
  48. **Ломидзе О., Ломидзе Э.** Крупные сделки хозяйственных обществ: проблемы правового регулирования // Хозяйство и право. 2013, № 1, с 60-74,
  49. **Лукьяненко М.** Законодательство об оценочных понятиях, включающих признак «обычного», и практика их толкования // Хозяйство и право, 2010 №2, с 37-57,
  50. **Макеева Е.В.** Сделки с усложненной процедурой заключения: форма vs. содержание // Корпоративный юрист. 2007, №1, с 10-19,
  51. **Маковская А.А.** Взаимосвязанные сделки // ЭЖ-Юрист. 2004, №36, с 2-10,
  52. **Маковская А.А.** Крупные сделки и порядок их одобрения акционерным обществом // Хозяйство и право. 2003, №5, с 46-61,
  53. **Маковская А.А.** Оспаривание решений общего собрания акционеров // Хозяйство и право (Приложение к ежемесячному юридическому журналу). 2006, № 9, с 27-48,
  54. Гражданский кодекс России. Проблемы. Теория. Практика: Сборник памяти С.А. Хохлова. Под ред. **Маковского А.Л.** –М.: Международный центр финансово-экономического развития, 1998, 480 с ; ,
  55. **Марголин М.А.** Недействительные крупные сделки // Законодательство. №3, 2001, СПС Гарант, с 26-34,
  56. **Могилевский С.Д.** Общества с ограниченной ответственностью: Учебно-практическое пособие, 2-е изд. -М.: «Дело», 2000, 528 с ; ,
  57. **Могилевский С.Д.** Правовые основы деятельности акционерных обществ. Учеб.-практич. Пособие. -М.: «Дело», 2004, 671 с ; ,
  58. **Оглоблина О.М.** Комментарий к Федеральному закону «Об обществах с ограниченной ответственностью». Под ред. **М.Ю. Тихомирова**. –М.: 2004, 443

т.г.:

59. **Осиновский А.Д.** Акционер против акционерного общества. -СПб.: ООО «Издательство ДНК», 2006, 384 т.г.,
60. **Осокина Г.Л.** Иск: теория и практика. –М.: «Городец», 2000, 192 т.г.,
61. **Решетникова И.В., Хинкин П.В., Ярков В.В.** Защита прав инвесторов. –М.: «Деловой экспресс», 1998, 150 т.г.,
62. **Решетникова И.В., Ярков В.В.** Гражданское право и гражданский процесс в современной России. –М.: «Норма», 1999, 302 т.г.,
63. **Сахнова Т.В.** Курс гражданского процесса, теоретические начала и основные институты. –М.: «Волтерс Клувер», 2008, 696 т.г.,
64. Гражданское право, Том 1. **под ред А.П. Сергеева.** –М.: «Велби», 2009, 1008 т.г.,
65. **Степанов П.В.** Корпоративные отношения в гражданском праве // Хозяйство и право. 2002, № 7, т.г. 86-90,
66. Гражданское право, Том I. **под ред. Е.А. Суханова.** –М.: «Бек, 1998, 785 т.г.,
67. **Телюкина М. В.** Одобрение заинтересованных сделок // Арбитражная практика. 2005, № 3, т.г. 3-12,
68. **Телюкина М.В.** Комментарии к Федеральному Закону «Об акционерных обществах». –М.: «Волтерс Клувер», 2005, 656 т.г.,
69. Гражданское право России, Общая часть: курс лекций. **Отв. Ред. О.Н. Садиков.** –М.: «Юристъ», 2001, 776 т.г.,
70. **Телюкина М.В., Тарасов В.И.** Целесообразность существования института крупных сделок в корпоративном и конкурсном праве //Законодательство. 2002, № 11, т.г. 34-39,
71. **Тихомирова М.Ю.** Комментарий к федеральному закону об обществах с ограниченной ответственностью. -М.: «Юринформцентр», 2003, 443 т.г.,
72. **Хузин И.И.** Особенности совершения сделок с заинтересованностью и крупных сделок в хозяйственных обществах по гражданскому праву России и ФРГ // Юриспруденция. 2010, № 3(19), т.г. 118-125,
73. **Чепига Т.Д.** К вопросу о разрешении споров, связанных с оспариванием актов управления и сделок акционерного общества, на основании доктрины правопреемства // Вестник Федерального арбитражного суда Северо-Кавказского округа. №5, сентябрь-октябрь 2004, СПС Гарант,
74. **Шапкина Г.** Как применять акционерное законодательство // Хозяйство и право.

- №1, 2004, էջ 16-31,
75. Комментарий к ФЗ «Об акционерных обществах». **Под ред. Г.С. Шапкиной.** -М.: Юридический Дом «Юстицинформ», 2002, 520 էջ ,
76. **Шичанин А., Гривков О.** Оспоримость сделок, в совершении которых имеется заинтересованность //Российская юстиция. 2003, № 4, էջ 19-21,
77. **Ярков В.В.** Защита прав акционеров по Закону «Об акционерных обществах» с помощью косвенных исков // Хозяйство и право. 1997, № 11, էջ 72-78,
78. **Andreas Cahn, David C. Donald** Comparative Company Law, Cambridge, 2010, 956 էջ ,
79. **Andrew Hicks, S. H. Goo** Cases and Materials on Company Law. 6th edition. Oxford, New York, 2008, 649 էջ ,
80. **Bernard Black, Reinier Kraakman, Anna Tarassova** A Guide to the Russian Law on Joint Stock Companies, Kluwer Law International, Cambridge, Massachusetts, USA and the Netherlands, 1998, 1088 էջ ,
81. **Boyle A.J.** Minority Shareholder' Remedies, Cambridge Studies in Corporate Law, Cambridge, 2004, 148 էջ ,
82. **Harry G. Henn, John R. Alexander** Laws of Corporations, West Publishing Co., 1983, 1371 էջ ,
83. **Kershaw David** Company Law in Context: Texts and Materials. Oxford, 2012, 960 էջ ,
84. **Neal R. Bevans** Business Organizations and Corporate Law, New York, Thomson Delmar Learning, 2007, 744 էջ ,
85. **Petri Mäntysaari** Comparative Corporate Governance: Shareholders as a Rule-maker. Berlin, New York Springer, 2005, 445 էջ ,
86. **Reinier H. Kraakman** The Anatomy of Corporate Law: A Comparative and Functional Approach. Second edition. Oxford, 2009, 352 էջ ,
87. Related party transactions and minority shareholder rights, OECD Publishing, 2012, 118 էջ ,
88. **Saleem Sheikh** A Guide to Companies Act. New York, Routledge, 2008, 1432 էջ

**ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՂՆԱԳՐԵՐ.**

89. **Ավետիսյան Վ.Դ.,** Կորպորատիվ իրավահարաբերուղյուկն ներքին արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետուղյուկն նուկմ, իրավ. գիտ

- դրկտորի ատեստատը, Եր., ԵՊՅ, 2014, 365 էջ ,
90. **Սերոբյան Դ.Մ.**, Բաժնետոմսերի շրջանառության իրավական կարգավորումն արժեթղթերի շուկայում, իրավ. գիտ. թեկն. ատեստատ, Եր., ԵՊՅ, 2005, 180 էջ ,
  91. **Бурлаков С.А.** Правовое регулирование крупных сделок юридических лиц. Дисс... канд. ю. н. – М., 2010, 213 էջ ,
  92. **Васильев Г.С.** Волевые основания недействительности некоторых сделок совершаемых коммерческими организациями. Дисс... канд. ю. н. –Волгоград, 2006, 185 էջ ,
  93. **Долинская В.В.** Основные положения и тенденции акционерного права. Автореферат дисс... доктора ю. н. - М., 2006, 669 էջ ,
  94. **Иванов И.Л.** Гражданско-правовая ответственность лиц, участвующих в управлении акционерным обществом, в праве России и Германии. Дисс... канд. ю. н. - М., 1999, 208 էջ ,
  95. **Илюшина М. Н.** Правовой режим сделок в коммерческом обороте и в обороте долей хозяйственных обществ: общее и особенное. Дисс... доктора ю. н. – М., 2012, 522 էջ ,
  96. **Килина Е.Э.** Недействительность сделок в предпринимательской деятельности: Проблемы теории и практики. Дисс... канд. ю. н. - М., 2006, 191 էջ ,
  97. **Кондратенко Л.О.** Недействительность сделок, совершаемых юридическими лицами. Дисс... канд. ю. н. – М., 2007, 192 էջ ,
  98. **Могилевский С.Д.** Органы управления хозяйственными обществами: правовой аспект. Дисс... доктора ю. н. – М., 2001, 375 էջ ,
  99. **Мордасов Е. В.** Общие и специальные основания недействительности сделок хозяйственных обществ. Дисс... канд. ю. н. – М., 2004, 190 էջ ,
  100. **Пушкарёв И.П.** Порядок одобрения органами управления хозяйственных обществ крупных сделок и сделок, в совершении которых имеется заинтересованность. Дисс... канд. ю. н. – Челябинск, 2008, 209 էջ

### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԻ ԿՈՏՈՐՈՒՄ

101. Կոնկրետի և Միևարիկն ընդդեմ Չեխիայի ՄԻԵԴ 15.10.2009թ. վճիռը (app. №32921/03/28464/04),



102. ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010թ. №ՅՅԲԴ4/0139/02/08 քաղաքացիական գործով որոշումը,
103. ՀՀ վճռաբեկ դատարանի 26.01.2007թ. №3-12 (ՏԴ) քաղաքացիական գործով որոշումը,
104. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԵԴ/1246/02/09 քաղաքացիական գործով 27.12.2010 կայացված որոշումը,
105. Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասու թյան դատարանի №ԵԵԴ/0248/02/11 քաղաքացիական գործով 03.04.2012 թ. վճիռը,
106. Информационное письмо Президиума Высшего Арбитражного Суда РФ, 13.03.2001, № 62, «Обзор практики разрешения споров, связанных с заключением хозяйственными обществами крупных сделок и сделок, в совершении которых имеется заинтересованность» // Вестник ВАС РФ, 2001, №7,
107. О некоторых вопросах применения Федерального закона «Об акционерных обществах», Постановление Пленума ВС РФ, № 4; Пленума ВАС РФ № 8 02.04.97 г. // Вестник ВАС РФ, 1997, № 6,
108. О некоторых вопросах применения ФЗ «Об акционерных обществах», Постановление Пленума ВАС РФ от 18 ноября 2003 г., № 19 // Вестн. ВАС РФ, 2004, № 1, կէտ 34,
109. Постановление Пленума ВАС РФ «О некоторых вопросах практики применения положений законодательства о сделках с заинтересованностью» от 20.06.2007, № 40 // Вестник ВАС РФ, 2007, № 8, ԿՄՐԲ . 2,
110. Постановления Пленума ВС РФ О некоторых вопросах применения ФЗ «Об обществах с ограниченной ответственностью», № 90, 4-րդ ԿՄՐԲ., կէտ 20: Пленума ВАС РФ № 14 от 09 декабря 1999, Российская газета, 2000, 27 янв.,
111. Постановление Президиума ВАС РФ от 12.11.2002, № 6288/02 // Вестник ВАС РФ, 2003, № 3,
112. Постановление ФАС Волго-Вятского округа от 3 мая 2005 г. № А43-12790/2004-2-469 // СПС «КонсультантПлюс»,
113. Постановление Федерального арбитражного суда Волго-Вятского округа от 25.01.2006, № А17-67/1-2005 // СПС Гарант,
114. Постановление Федерального арбитражного суда Восточно-Сибирского округа от 06.03.2007, № А33-9194/2006-Ф02-920/2007 // СПС Гарант,

115. Постановление ФАС Восточно-Сибирского округа от 21 февраля 2005 г. № А33-1676/04-С1-Ф02-413/05-С2 // СПС «КонсультантПлюс»,
116. Постановление Федерального арбитражного суда Западно-Сибирского округа от 14.06.2007, № Ф04-3716/2007 // СПС Гарант,
117. Постановление Федерального арбитражного суда Московского округа от 07.06.2007, № КГ-А40-3604-07 // СПС Гарант,
118. Постановление Федерального арбитражного суда Московского округа от 02.08.2005, № КГ-А40/6734-05-П-2 // СПС Гарант,
119. Постановление Федерального арбитражного суда Поволжского округа от 31.05.2007, № Л06-6165\06 // СПС Гарант,
120. Постановление ФАС Северо-Западного округа от 14 ноября 2006 №008-5775/06, СПС Гарант,
121. Постановление Федерального арбитражного суда Северо-Западного округа от 23.05.2005, № А56-21604/03 // СПС Гарант.,
122. Постановление Федерального арбитражного суда Северо-Западного округа от 23.06.2005, № А56-5491/04 // СПС Гарант,
123. Постановление Федерального арбитражного суда Северо-Кавказского округа от 12.01.2006, № Ф08-6325/05 // СПС Гарант,
124. Постановление Федерального арбитражного суда Уральского округа от 24.05.2007, № Ф09-3833/07-С4 // СПС Гарант